

290

2(075)

9-45

2010

2001



1075  
4-415  
48  
ՀԱՄԱՌՈՏ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ի ՊԵՏՍ ԴՊՐՈՅԱՑ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

104  
Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

مس بنی



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ԳԱՎԱՅԵԱՆ

1885



## ՅԱՌԱՋԱԲԱՆ



Սուրբ Գրոց պատմութիւնը յիշատի դաստաւս է դպրոցական ուսմանց կարգը, ոչ միայն իբրեւ աշխարհիս ամենեւն հին եւ երեւելի ազգի մը պատմութիւն, այլ եւ մանաւանդ Կրօնական նկատմամբ: Հին եւ Նոր Կտակարանաց պատմութիւնն Աստուծոյ ժողովրդեան կամ Եկեղեցոյն պատմութիւնն ըլլալով, պէտք չէ որ անծանօթ մնայ անոնց որ 'ի տղայութենէ պիտի կոթորին քրիստոնէական ուսման մէջ, որ Եկեղեցոյ ուստան է: Առանց գիտնալոյ Սուրբ Գրոց պատմութիւնը, ոչ միայն արտաքին եւ Ազգային պատմութեան մէջ շատ տեղեր, այլեւ Գրիստոնէական վարդապետութիւնն անգամ անիմանալի կ'ըլլայ տղայոց եւ շատ Գրիստոնէական հաստատարի եւ պարտականութիւնը նոռազ կարենոր եւ անօգուտ պիտի թորին անոնց:

Այս դասագիրքը կը պարունակէ Հին եւ Նոր Կտակարանին պատմութեան կարեւորագոյն մասերը, եւ ջանացաւ ուսումնական կարգի անկողի եւ դիւրաւասանելի ընել տղայոց անոր դասերը պարզութեամբ եւ համառոտութեամբ: Ոչ տակաւ զոտարձալի պիտի ընեն այս ուստանը տղայոց՝ ուսման շարքի պատկերներ որ այս գիրքին մէջ կը գտնուին:

Ա. Մ. Գ.



ՀԱՅԵՐԵՆԱՅԻՆ

30127-4. h.

(2761  
40)

13350 - 58





# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՍՈՒՐԲ ԳՐՈՅ



Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ՀԱՐՑՈՒՄ. Սուրբ գիրք ըսելով ինչ կը հասկըցուի :

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. Սուրբ գիրք ըսելով կը հասկցուին Հին և Նոր Կրօնականները, որ և Աստուծոյ խոյնին , քանզի Մարգարէք և Առաքեալք գրեցին այս գիրքերն Աստուծոյ աղօղակութեամբ :

Հ. Ինչո՞ւ համար Կրօնական կ'ըսուին :

Պ. Կրօնական կ'ըսուին , քանզի կը պարունակեն Աստուծոյ կտակը , այսինքն պայմանները և խոստումներն իւր ժողովրդեան հետ :

Հ. Ո՞վ է Աստուծոյ Ժողովուրդը :

Պ. Աստուծոյ Ժողովուրդն էին ի հնումն Հրէայ , և ի նորումն մասնաւոր կերպով Աստուծոյ Ժողովուրդը կամ եկեղեցին կը կոչուին Քրիստոնէս :


Հ. Հրէից պատմութիւնը Սուրբ Գրոց ո՞ր մասին մէջ է :

Պ. Հրէից պատմութիւնը Հին Կտակարանին մէջ է :



Հ. Նոր կտակարանն ի՞նչ կը պատմէ :

Պ. Նոր. կտակարանը կը պատմէ Քրիստոսի պատմութիւնը եւ առաքելոց ձեռք ճիմուած առաջին Քրիստոնէական եկեղեցւոյն պատմութիւնը :



## Մ Ա Ս Ն Ա :

Հին ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հ. Հին կտակարանին պատմութիւնը քանի՞ գլխաւոր ժամանակ կը բաժնուի :

Պ. Հին կտակարանին պատմութիւնը կը բաժնուի քս գլխաւոր ժամանակ :

Ա. Ի ստեղծմանէ աշխարհիս մինչեւ ջրհեղեղ :

Բ. Ի ջրհեղեղէ մինչեւ Աբրահամ :

Գ. յԱբրահամէ մինչեւ Իսրայելացւոց ելքն յեգիպտոսէ :

Դ. Յելից եգիպտոսէ մինչեւ Հրէից թագաւորութեան սկիզբը :

Ե. Ի սկզբանէ թագաւորութեան Հրէից մինչեւ Բաբելոնի գերութիւնը :

Զ. Ի գերութենէն Բաբելոնի մինչեւ Քրիստոսի ծնունդը :



Ա. Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Ի ՍՏԵՂԾՄԱՆԷ ԱՇԽԱՐՀԻ ՄԻՆՁԵՒ ԶՐՀԵՂԵՂ,  
4004-2348 ՆԱԽ ՔԱՆ ԶՔՐԻՍՏՈՍ

Հ. Այս ժամանակին գլխաւոր դէպքերն ո՞րոնք են :

Պ. Այս ժամանակին գլխաւոր դէպքերն են՝


1. Աշխարհի ստեղծումը .

2. Մարդուն անկումը .

3. Եղբայրասպանութիւնը .

4. Մարդոց ապականութիւնը :

1. ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ 4004 Ն. Ք. ԶՔՐԻՍՏՈՍ



Հ. Ո՞վ ստեղծեց զաշխարհ :

Պ. Աստուած ստեղծեց զաշխարհ յոչնչէ եղեջ քառով միայն , և չուղեց միանգամայն ստեղծել , այլ հետզհետէ ստեղծեց զայն :



Հ. Աստուած սրչափի ատենուան մէջ ստեղծեց զաշխարհ :

Պ. Աստուած Վեց օրուան մէջ ստեղծեց զաշխարհ սա կարգով .

Առաջին օրը ստեղծեց լոյս :

Երկրորդ օրը՝ երկնից հասարակածները , այսինքն երկիրս պատող երկինքը :

Երրորդ օրը ջուրը ցամաքէն զատեց , և հրամայեց ցամաքին դասակերպել և ծառեր յառաջ բերել :

Չորրորդ օրը ստեղծեց լուսնուհները , այսինքն՝ արեգակը , լուսինն ու աստղերը :

Հինգերորդ օրը ստեղծեց շուններն ու խոզանները :

Վեցերորդ օրը ստեղծեց ամէն տեսակ շատուկներն ու սողուններ , յետ ամենեցուն ՄԱՐԿԸ :

Հ. Աստուած ինչպէս ստեղծեց մարդը :

Պ. Աստուած ստեղծեց մարդը հողէ , բայց անոր տուաւ բանական և անհա հոգի որով մարդ Աստուծոյ պարկերէն նման եղած կըլտուի :

Հ. Աստուած քանի՞ մարդ ստեղծեց :

Պ. Աստուած ստեղծեց նախ զԱդամ հողէն , և ետքը Ադամայ մէկ կողէն շինեց զԵւա : Ադամ եւ Եւա եւն նախաշնորհ մեր , այսինքն՝ բոլոր մարդոց առաջն հայրը եւ մայրը :

Հ. Աստուած վեց օրուան մէջ ամէն բան ստեղծեղէն ետքը ի՞նչ ըրաւ :

Պ. Աստուած վեց օրուան մէջ բոլոր արարածները ստեղծեղէն ետքը , եօթներորդ օրը հանգեաւ , ուստի եօթներորդ օրը հանգստեան կամ՝ սուրբ օր կը կոչուի :

## 2. ՄԱՐԿԻՈՒՆ ԱՆԿՈՒՄԸ

Հ. Աստուած զԱդամ եւ զԵւա ստեղծեղէն ետքը զանոնք ո՞ր դրաւ և անոնց ի՞նչ պատուէր տուաւ :

Պ. Աստուած զԱդամ եւ զԵւա ստեղծեղէն ետքը զանոնք գեղեցիկ պարտէզի մը մէջ դրաւ որ դրաւ կը կոչուի , և անոնց հրաման տուաւ այն պարտէզին բոլոր պտուղներէն ուտել , միայն ծառի մը պտղէն պատուիրեց չուտել մահ սպառնալով : Այն ծառը կը կոչուէր Ծառ գիտելեան բարոյ և լարի :

Հ. Ադամ եւ Եւա Աստուծոյ այս պատուէրը պահեցին :

Պ. Ոչ . Սատանան օձի կերպարանօք խաբեց զԵւա ըսելով . « Եթէ այն ծառին պտղէն ուտէք , աստուած պիտի ըլլաք » : Եւա հաւատալով անոր խօսքին ոչ միայն ինք կերաւ այն պտղէն , այլեւ Ադամայ կերցուց :

Հ. Ադամայ եւ Եւայի այս անհնազանդութեան համար Աստուած անոնց ի՞նչ ըրաւ :

Պ. Աստուած պատիժ տուաւ Ադամայ երեսին բարձր ուտել իւր հացը , և Եւայի՝ ցաւով ծնանիլ , և ըսաւ թէ հոգ եկն և հոգ դառնալ : Այսպէս Աստուած մահկանացու ըրաւ զանոնք որ անմահ պիտի ըլլային , եթէ այն անհնազանդութիւնը չընէին : Ադամայ եւ Եւայի պատժոյն հաղորդ եղաւ անոնց բոլոր սերունդը , այսինքն բոլոր մարդկայն աշխարհ :




Հ. Մեր նախածնողք իրենց անկումէն ետքը  
ի՞նչ եղան :



Պ. Դրախտէն դուրս վճռուեցելով, սկսան աշ-  
խատութեամբ իրենց ապրուստը հոգալ :

3. ԵՂԱՅՐԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ 3875 Ն. Ք. ԶՔԲ.  
Հ. Ադամ և Եւա դրախտէն մերժուելէն ետ-  
քը ի՞նչ պատահեցաւ :

Պ. Ադամ և Եւա երկու որդի ունեցան ,  
Կայէ և Աբել : Կայէն մշակ էր , իսկ Աբել՝ հովիւ :  
Երկուքն ալ Աստուծոյ պարտաւ մատուցին : Աբելի



պատարագն ընդունելի եղաւ Աստուծոյ , և Կա-  
յէն ասոր համար նախանձելով իւր եղբորը՝  
դաշտը տաքաւ և վրան յարձակելով սպաննեց  
դնա : Աստուած անիծեց զԿայէն անոր այս անօ-  
րէնութեանը համար , և վերջապէս սպաննուե-  
ցաւ Կայէն իւր թոռնէն սխալմամբ :

Հ. Ադամ և Եւա ուրիշ որդի ունեցան :

Պ. Փոխանակ Աբելի Աստուած տուաւ անոնց  
ուրիշ որդի մը որ կոչեցաւ Սեթ . և Ադամ



930 տարի ապրելով մեռաւ : Անատեն մարդիկ չատ երկար կ'ապրէին :

4. ՄԱՐԴՈՑ ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հ. Աղամայ զաւակները բազմանալով ինչ եղան :

Պ. Աղամայ զաւակներուն մեծ մասը շուրջ և շուրջ հասակ մարդիկ եղան . մինակ Սեթայ ցեղը մինաց Բարեպաշտ : Աստուածաշունչը Որդի՝ Աստուծոյ կը կոչէ այս բարեպաշտ ցեղը , իսկ միւս աշխարհաէրները և չարերը կը կոչէ Որդի՝ Բարեպաշտ :

Հ. Որդիք Աստուծոյ կոչուածներուն մէջ ուրոնք կը յիշուին յանուանէ :

Պ. Որդիք Աստուծոյ կոչուածներուն մէջ յանուանէ կը յիշուին .

1. Ենթա՝ որ 365 տարի ապրելէն ետքը , Աստուծոյ շատ հաճելի ըլլալով՝ կենդանւոյն վերացաւ :

2. Մալուսալայ՝ որ քան զայլ նահապետս աւելի ապրեցաւ , այսինքն 969 տարի :

3. Նոյ՝ որ իւր բարեպաշտութեան համար իւր զաւակներով ջրհեղեղէն ազատեցաւ :

Հ. Որդիք մարդկան ըստածներուն մէջ երեւելիները որոնք են :

Պ. Ասոնց մէջ իբրեւ երեւելի կը յիշուի Ղաֆ , Կայենի թոռը : Ղամէք է որ սխալմամբ սպաննեց զԿայէն : Ղամէքայ որդիքը Բարեպաշտ և հաւատարմ մարդիկ էին : Յաւու հնարեց երաժշտութիւնը , թափէլ՝ դարբնութիւնը , թորեւայ . քոյրը Նոյն՝ հնարեց ոստայնանկութիւնը :

Բ. ԺԱՄԱՆԱԿ

Ի ԶՐՀԵՂԵՂԻ ՄԻՆՁԵՒ ԱՐՄԱՆԱՄ 2348-1921  
ՆԱԽ ՔԱՆ ԶՔՐԻՍՏՈՍ

Հ. Այս ժամանակին երեւելի դէպքերն ուրոնք են :

Պ. Այս ժամանակին երեւելի դէպքերն են՝

1. Զրհեղեղ .

2. Աշխարհաշինութիւնը .

1. ԶՐՀԵՂԵՂ 2348 Ն. Ք. ԶՔՐԻՍՏՈՍ

Հ. Բարի և չար մարդոց վերջն ինչ եղաւ :

Պ. Ինչպէս ընդհանրապէս կ'ըլլայ , բարիները չարերուն օրինակին հետեւելով ապականեցան , Նոյ միայն մնաց արդար իւր ընտանեօր : Եւ Աստուած տեսնելով մարդոց ապականութիւնը Զրհեղեղ ջրհեղեղ զանոնք , Նոյ միայն ազատեցաւ :

Հ. Նոյ ինչպէս ազատեցաւ ջրհեղեղէն :

Պ. Նոյ Աստուծոյ հրամանաւ հաւատ (նաւ) մը շինեց , և երբ ջրհեղեղ սկսաւ , Նոյ իւր կնոջ մով , երեք որդիներով և անոնց կիներով , աւելի տեսակ անասուններէ եւս մէյմէկ և աւելի զոյգ առնելով մտաւ տապանը : Քառասուն օր և քառասուն գիշեր անձրեւ եկաւ , և ջուրը երկրիս վրայ այնպէս բարձրացաւ որ տապանէն դուրս մնացող բոլոր մարդիկ և անասունք մեռան :

Հ. Երբ ջրհեղեղը դադարեցաւ Նոյ ինչ ըրաւ :

Պ. Երբ ջրհեղեղը դադարեցաւ և ջուրերը բիւ




մը քաղուեցան, Նոյի տապանը Հայաստանի Ա-  
րարտի լեռան վրայ նստաւ : Երբ երկիրը ցամա-  
քաւ, Նոյ և անոնք որ Նոյայ հետ էին տապա-  
նէն ելան : Նոյ շնորհակալութեան համար Աս-



Լեռուն Արարտ

տուծոյ պատարագ (զոհ) մատուց, և Աստուած  
ընդունելով Նոյի պատարագը, խոստացաւ այլ  
եւս չըհեղեղ չընել, և այս խոստման նշան  
տուաւ «դեղ» (ծիրանի գօտին) որ անձրեւի  
նստեն շատ անգամ ամպերուն վրայ գոյնզգոյն  
կ'երեւայ :



Նոյ տապանէն եղեկով, Աստուծոյ զոհ կը մատուցանէ :



Հ. Նոյի որդւոց անունները որո՞նք են :

Պ. Նոյի որդւոց անուններն են՝ Սէփ, Բամ, Կամ, Քեթ, Ստեփ, Իւրաքանչիւրը բաղմանալով մեծամեծ ազգեր եղան, զոր օրինակ Հրեաները Սեմէ են, Հայերը Յաբեթէ :

Հ. Քամի համար ի՞նչ կը պատմուի :

Պ. Կը պատմուի թէ Նոյ տապանէն ելլելէն ետքը այգի տնկեց, անոր խաղողէն գինի շինեց, և գինւոյ զօրութիւնը չգիտնալով՝ անկէ այնչափ խմեց որ արբենալով մերկ պառկեցաւ : Քամ իւր հայրն այնպէս տեսնելով գնաց պատմեց միւս եղբայրներուն խնդալով, անոնք լաթ մը առնելով և ետեւ ետեւ երթալով ծածկեցին իրենց հօր մերկութիւնը : Երբ Նոյ սթափելով իմացաւ բանը, անիծեց Քամայ սերունդը, իսկ զՍեմ և զԿեթեթ օրհնեց :

Հ. Նոյ որչափ ատեն ապրեցաւ :

Պ. Նոյ ջրհեղեղէն ետքը 350 տարի եւս ապրելով, 950 տարուան մեռաւ :

2. ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԼԵԶՈՒԱՅ

ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆ 2247 Ն. Ք. ԶՔՐԻՍՏՈՍ

Հ. Նոյի զաւկները բաղմանալով ի՞նչ ըրին :

Պ. Նոյի զաւկները բաղմանալով, Հայաստանի կողմէն դէպ ի հարաւ եկան Սեւե լիւզուած տեղն, ուր սկսան շատ բարձր աշտարակ մը շինել : Այն ատեն բոլոր մարդիկ մէկ լեզու կը խօսէին : Աստուած չհաճելով մարդոց աշտարակ



Բաբելոնի աշտարակը

շինելու խորհուրդին, խառնակեց անոնց լեզուն, այնպէս որ անոնք իրար չհասկնալով սկսան ցրուիլ երկրիս երեսին վրայ :

Աշտարակաշինութեան տեղը Բաբել կոչուեցաւ որ խառնակութեան ըսել է :

Հ. Մարդիկ երկրիս երեսին վրայ ցրուելով ի՞նչ եղան :

Պ. Մարդիկ երկրիս երեսին վրայ ցրուելով, սկսան կամաց կամաց մոռնալ զԱստուած, եւ կռապաշտութեան մէջ ինկան : Այլեայլ բռնաւոր մարդիկ սկսան թագաւորութիւններ հաստատել, ասոնցմէ մէկն էր Քամայ թոռը Նեբրովթ որ Բաբելոն հաստատեց իւր թագաւորութիւնը :





Գ. ԺԱՄԱՆԱԿ

ՅԱՐԱՀԱՄԻ ՄԻՆՁԵՒ ԻՄԱՅԵԼԱՅԻՈՅ ԵԼՔՆ  
ՅԵԳԻՊՏՈՍԷ 1921-1491 Ն. Բ. ԶԲԲ.

Հ. Այս ժամանակին երեւելի դէպքերը ո՞րոնք են :

Պ. Այս ժամանակին երեւելի դէպքերն են :

1. Աբրահամ ֆանան երթալը .
2. Իսահակայ ամուսնութիւնը .
3. Յովնայ Մեջբեդ երթալ և ամուսնանալը .
4. Յովնայ զանաւանդելը .
5. Իսրայելացոց պահպանութիւնը յԵգիպտոս .
6. Մովսէսի կոչումը :

1. ԱՐԱՀԱՄԻ ՔԱՆԱՆ ԵՐԹԱԼԸ

Հ. Աբրահամ ո՞վ էր :

Պ. Աբրահամ Սեմայ ցեղէն թարայի որդին էր եւ կը բնակէր Բաղդէացոց Ուր քաղաքը :

Հ. Աստուած ի՞նչ պատուիրեց Աբրահամու :

Պ. Աստուած երեւնալով Աբրահամու , ըսաւ .  
Քու հօրդ տունէն ել , եւ գնա ուր որ պիտի ցուցնեմքեզ . Դէ՛ ասի պիտի ընեմ զքեզ , եւ բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին :

Հ. Աբրահամ ո՞ր գնաց :

Պ. Աբրահամ Աստուծոյ հրամանին համեմատ իւր հայրենիքէն , Բաղդէացոց Ուր քաղաքէն ելլելով , իւր ընտանեօրը և իւր եղբորորդւոյն Ղովտայ ընտանեօր հետ գնաց Բանանացոց

երկիրը , զոր Աստուած անոր ցեղին Ժաանքութիւն տալ խոստացաւ , եւ հոն սկսաւ բազմանալ :

Հ. Աբրահամ եւ Ղովտ ի՞նչ ըրին Բանանացոց երկիրը :

Պ. Աբրահամ եւ Ղովտ սովի մը պատճառաւ եգիպտոս ճամբորդութիւն ընելէն ետքը , երբ նորէն Բանանացոց երկիրը դարձան , Ղովտ անկէ բաժնուելով Սողոմի երկիրը գնաց , քանզի երկուքն ալ շատ ոչխարներ և անասուններ ունէին , եւ անոնց հովիւներուն մէջտեղ կուլ կը պատահէր : Այն ատենուան մարդոց մեծ հարստութիւնը ոչխար եւ անասուն էր :

Հ. Աբրահամու ի՞նչ պատահեցաւ եգիպտոս :

Պ. Աբրահամ զՍառա քոյր կը կոչէր , ուստի և եգիպտոսի թագաւորն ուզեց զՍառա իրեն կին ընել , բայց իմանալով որ Սառա Աբրահամու կինն էր՝ արձակեց զնա :

Հ. Ղովտայ ի՞նչ պատահեցաւ Սողոմի երկրին մէջ :

Պ. Անգամ մը չորս թագաւորներ Սողոմացոց վրայ գալով յաղթեցին անոնց և ժողովուրդը գերի տարին , Ղովտ եւս մէկտեղ . բայց Աբրահամ իմանալով զայս՝ այն թագաւորներուն վրայ յարձակեցաւ և ազատեց Ղովտ և անոր ընտանիքը : Աբրահամ թագաւորի պէս մարդ էր , շատ մարդիկ ունէր իրեն հետ : Երբ Աբրահամ ետ կը դառնար , հանդիպեցաւ Մեղքիսեղեկ անուն ասորացոց Բանանայի մը և անոր ասորացի տուաւ :




Հ. Սողոմոնացիք ինչպիսի մարդիկ էին :

Պ. Սողոմոնացիք շատ չար էին , և Աստուած ուզելով զանոնք պատժել՝ Ղովտայ հրամայեց իւր ընտանեօր Սողոմոնացւոց մէջէն ելլել : Ղովտ ելաւ , և Աստուած Սողոմ և Գոմոր քաղաքներուն վրայ երկինքէն կրակ տեղացուց և այրեց (1828 նախ քան զՔրիստոս) :

Հ. Աբրահամ չիմացաւ Սողոմայ կործանումը :

Պ. Երեք հրեշտակ Աստուծոյ կողմանէ գալով



առ Աբրահամ իմացուցին թէ Աստուած պիտի պատժէր զՍողոմոնացիս : Աբրահամ աղաչեց Աստուծոյ ներել Սողոմոնացւոց և Գոմորացւոց , եւ Աստուած պիտի ներէր անոնց , եթէ դաս արդար գտնուէր անոնց մէջ :

Հ. Աբրահամ որդի ունէր :

Պ. Աբրահամ իսմայել անուն որդի մը ունէր իւր Հագար անուն աղախնէն , քանզի անոր բուն կինը Սառա ամուլ էր : Այն երեք հրեշտակները որ եկան առ Աբրահամ աւետիս տուին անոր թէ որդի մը պիտի ունենար իւր բուն կնոջմէն

Սառայէ : Եւ արդարեւ Սառա , թէպէտ ծեր էր , որդի մը ունեցաւ , որ Իսահակ կոչուեցաւ , եւ եղաւ Աբրահամու բուն ժառանգը :

Հ. Իսմայել ի՞նչ եղաւ :

Պ. Աբրահամ ըստ հրամանին Աստուծոյ տուանէն դուրս ըրաւ զԻսմայել անոր մօրը Հագարայ հետ : Հագար և Իսմայել անապատին մէջ ծառաւէ պիտի մեռնէին , բայց Աստուած ջուր բղխեցուց անոնց և Իսմայել անապատին մէջ մեծնալով շատ ազդերու հայր եղաւ :

Հ. Իսահակայ վրայ յիշուելու արժանի ի՞նչ բան կայ :

Պ. Աբրահամ շատ կը սիրէր զԻսահակ , և Աստուած Աբրահամու հնազանդութիւնը վեր-



ձեւու համար (1872 ն. ք. զԳ.) հրամայեց անոր իւր որդին զոհել : Աբրահամ իսկոյն հնազանդեցաւ , և առանձին տեղ մը տարաւ զԻսահակ զո-



հելու , բայց Աստուած չթողուց , և անոր տեղ ոչխար մը զոհել տուաւ :

Հ. Այս դէպքէն ետքը ի՞նչ պատահեցաւ :

Պ. Այս դէպքէն քիչ ժամանակ ետքը Սառա մեռաւ (1860 Ն. ք. զԲ.) 127 տարեկան : Աբրահամ մինչեւ անատեն ափ մը գետին չունէր Քանանացւոց մէջ , անոր անթիւ հօտերը բաց տեղեր կ'արածէին : Երբ Սառա մեռաւ , Աբրահամ ֆանանու երկրին ազգերուն մէկէն , ֆետացիներէն , գերեզմանի համար Մակիբեայի դաշտը գնելով հոն այրի մը մէջ թաղեց զՍառա :

## 2. ԻՍԱՀԱԿԱՅ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Հ. Սառայի մահուանէն ետքը Աբրահամ ի՞նչ րբաւ :

Պ. Սառայի մահուանէն ետքը Աբրահամ ուզելով ամուսնացնել զիսահակ , և չուզելով աղջիկ առնուլ ֆանանացիներէն , իւր ծառան եղիազար զրկեց Միջագետք իւր ազգակներու , եւ անկէ իւր հօրեղբորդուն Բաթուէլի աղջիկը Ռեբեկան բերել տուաւ : Իսահակ Ռեբեկայի հետ ամուսնանալով (1857 Ն. ք. զԲ.) երկու որդի ունեցաւ Եսաւ և Յակոբ : Իսկ Աբրահամ 175 տարեկան մեռաւ :

Հ. Եսաւ և Յակոբ ի՞նչ բնութեան տէր էին :

Պ. Եսաւ Դաւաթ և Հայրէ էր , և որսորդութիւն կ'ընէր . Յակոբ Ժափուկ և Ընդհի էր , և հօրը հօտերը կ'արածէր : Բայց Իսահակ կը սիրէր զԵսաւ , իսկ Յակոբ մօրը սիրելի էր : Անգամ մը

Յակոբ ոսպնաթան եփած էր և Եսաւ որսէն անօթի գալով ոսպէն ուզեց ուտել : Յակոբ անոր ըսաւ : Ոսպէն քեզի կու տամ , եթէ անդրանկանիք ինձի կը Ժափուկ : Եսաւ յանձն առաւ այս պայմանը և ոսպէն կերաւ :

Շատ տարիներ անցան և Իսահակ ծերացաւ , այնպէս որ չէր տեսներ : Օր մը Իսահակ կ'ըսէր Եսաւայ . Գնա ինձի որս բեր որ ուտեմ և քեզ օրհնեմ : Ռեբեկա զայս լսելով շուտով ուլ մը եփեց , Յակոբայ տուաւ և զրկեց Իսահակայ :



Յակոբ գնաց հօրը քով , և ըսելով , Ես եմ Եսաւ , կերցուց ուէն Իսահակայ և առաւ օրհնութիւնը : Երբ Եսաւ գալով խնացաւ եղբօրը գործը , շատ բարկացաւ , և միտքը գրաւ զՅակոբ ապրիկէ հօրը մեռնելէն ետքը :

## 3. ՅԱԿՈԲԱՅ ՄԻՋԱԳԵՏՔ ԵՐԹԱՆ ԵՒ ԱՄՈՒՍՆԱՆԱԼԸ

Հ. Յակոբ իւր եղբօրը վրէժխնդրութենէն ազատելու համար ի՞նչ րբաւ :




Պ. Մօրը խորհրդով գնաց (1760 Ն. ք. զԳ.)  
Միջագետաց խառան քաղաքը և հոն 20 տարի  
կենալով իւր մօրեղբորը լաբանու քով, անոր եր-  
կու աղջիկները լէս և Ռաֆէլ իրեն կին առաւ, և  
զաւակներ և շատ հարստութիւն ստանալէն ետքը  
դարձաւ իւր հօրը քով:

Հ. Յակոբ Բնչ տեսիլք ունեցաւ:

Պ. Յակոբ երկու խորհրդաւոր տեսիլք ունեցաւ:  
Նախ՝ երբ խառան կ'երթար, գիշերը քնոյ մէջ  
տեսաւ ասորոյն մը որոյ մէկ ծայրը գետինն էր,  
և միւսը մինչեւ երկնք կը հասնէր, և հրեշտակներ  
կ'ելլէին և կ'իջնէին անոր վրայ: Սանդղին  
վերի ծայրը կեցած էր Աստուած, որ մեծամեծ  
խոստումներ ըրաւ Յակոբայ: Երկրորդ՝ երբ խա-  
ռանէ կը դառնար, նոյնպէս գիշեր մը քնոյ  
մէջ մինչեւ առաւօտ կ'ուռնեցաւ Բարդուէլ հետ,  
որ յաղթուելով Յակոբէն՝ զննեց զնա, և անոր  
իւրայեւ անունը տուաւ որ ասորոստաղը ըսել է:  
Այնուհետեւ Յակոբ կոչուեցաւ նաեւ իւրայեւ,  
և անոր զաւակները կոչուեցան իւրայեւեթ, որ ա-  
ռաջ Եփրայեթ կը կոչուէին:

Հ. Եսաւ չիմացաւ Յակոբայ գալը:

Պ. Յակոբ շատ կը վախնար Եսաւէն, ուստի  
անոր սիրտն առնելու համար շատ ընծաներ  
ղրկելով անոր իմացուց իւր գալը. և երբ եր-  
կուքն իրարու հանդիպեցան, Յակոբ մեծ խո-  
նարհութեամբ վարուեցաւ Եսաւայ հետ եօթն  
անգամ գետին իյնալով անոր երկրպագութեան  
ըրաւ, և Աստուած շարժեց Եսաւայ սիրտը,



և երկու եղբարք հաշտուեցան իրարու հետ:

Հ. Յակոբ քանի՞ որդի ունեցաւ:

Պ. Յակոբ ուսուցեց իւր զինքն ունեցաւ, որոց ա-  
նուններն են՝ Ռուբէն, Շմաւոն, Դեւի, Յուդա,  
Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար, Զա-  
բուղոն, Յովսէփ և Բենիամին: Ասոնց վերջին  
երկուքը, Յովսէփ և Բենիամին, էին Ռաբելէ զոր  
շատ կը սիրէր Յակոբ:




4. ՅՈՎՍԵՓԱՅ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Հ. Յովսեփայ վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. Յակոբ քան զմիւս որդիներն աւելի կը սիրէր զՅովսեփի և անոր ծաղիկայ պատմութեան մը շինած էր : Այս պատճառաւ եղբայրները Նախնայելի Կառնի զՅովսեփի : Անգամ մը Յովսեփ իւր երկու երազները պատմեց իւր եղբայրներուն : « Կը տեսնէի որ , » ըսաւ , « դաշտի վրայ որայ կը կապէինք , և ձեր որաները կանգնելով իմ որայիս երկրպագութիւն ըրին » : « Դարձեալ տեսայ որ , » ըսաւ , « արեգակը , լուսինը և մետասան աստղ ինծի երկրպագութիւն ըրին » : Ասոր վրայ եղբայրներն աւելի եւս սկսան ատել զՅովսեփի :

Հ. Այս ատելութեան արդիւնքն ի՞նչ եղաւ :

Պ. Անգամ մը Յովսեփայ եղբայրներն հեռու տեղ մը գացած էին իրենց ոչխարներն արածելու . և երբ ուշացան , Յակոբ զրկեց զՅովսեփի երթալ եղբայրներէն լուր բերել : Յովսեփի գնաց գտաւ իւր եղբայրները , և անոնք ուղեցին նախ սպաննել զնա , բայց ետքը գուրի մը մէջ նետեցին , և ապա անկէ հանելով վաճառեցին զնա իսմայելացի վաճառականներու , որ եգիպտոս տանելով զՅովսեփի վաճառեցին փարաւոն թագաւորին դահճապետին Պետափրեսի : Իսկ Յովսեփայ եղբայրներն Յովսեփայ պատմութեանն այժի արեան մէջ թաթխելով տարին իրենց հօրը , որ կարծելով թէ գաղանները կերած էին զՅովսեփի , մեծ սուգ ըրաւ անոր վրայ (1729 Ն. ք. ԴՔ.) :



Հ. Յովսեփի եգիպտոսի մէջ ի՞նչ եղաւ :

Պ. Յովսեփի շատ սիրելի եղաւ Պետափրեսի , բայց ետքը զրպարտուելով անոր կնոջմէն՝ Բուդիլիս :



Հ. Յովսեփի բանտէն ի՞նչպէս ազատեցաւ և ի՞նչ եղաւ :



Պ. Փարաւոնի տակառապետը և մատակարարը յանցանքի համար բանտ դրուելով երազ տեսան : Յովսէփի մեկնեց անոնց երազը , և անոր տուած մեկնութեան պէս մատակարարը գլխատուեցաւ , և տակառապետն ազատելով իւր առջի պաշտօնին հասաւ : Քանի մը տարի ետքը Փարաւոն երազներ տեսաւ , և երբ Եգիպտոսի



գիտունները չկրցան մեկնել անոր երազները , տակառապետին խորհրդովն Յովսէփի կանչուեցաւ բանտէն և մեկնեց Փարաւոնի երազը՝ ըսելով թէ եօթը տարի առաջ պիտի ըլլայ , և յետոյ եօթը տարի առաջ : Փարաւոն տեսնելով Յովսէփայ իմաստութիւնը՝ իրեն երկրորդ ըրաւ զնա , և բոլոր Եգիպտոսի երկրին կառավարութիւնն անոր յանձնեց (1716 Ն. ք. զԲ.) :

Հ. Փարաւոնի երազներն ինչպէս կատարուեցան :

Պ. Յովսէփայ ըսածին պէս : Յովսէփի առաւելութեան տարիները շատ ցորեն ժողվելով պահեց : Երբ սովը բոլոր երկրի վրայ սաստկացաւ , ամէն կողմէ մարդիկ կու գային Եգիպտոս քրն գնել , Յովսէփայ եղբայրներն եւս եկան բաց ի Բենիամինէ :

Հ. Յովսէփի իւր եղբայրներուն ինչ ըրաւ :

Պ. Անոնք չճանչցան զՅովսէփի , բայց Յովսէփի զանոնք ճանչնալով Խոսեֆ վարուեցաւ անոնց հետ , և զՇմաւոն իւր քով պահելով միւսները զրկեց ցորենով , պատուիրելով որ ի դարձին իրենց կրտսեր եղբայրը Բենիամին եւս մէկ տեղ բերեն , երբ անոնք երկրորդ անգամ Եգիպտոս եկան Բենիամինի հետ , Յովսէփ յայտնեց զինք անոնց , և ետ զրկելով զանոնք , իւր Հայրը Յակոբ բերել տուաւ Եգիպտոս :

## 5. ԻՍՐԱՅԵԼԱՅԻՈՑ ՊԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆ ՅԵԳԻՊՏՈՍ

Հ. երբ Յակոբ Յովսէփայ ողջ ըլլալն իմացաւ , ինչ ըրաւ :

Պ. Ուրախութեամբ իւր բոլոր ընտանեօր ճամբայ ելլելով եկաւ Եգիպտոս , և (1706 Ն. ք. զԲ.) , հրամանաւ Փարաւոնի , բնակեցաւ Գեռնէ կոչուած տեղը , ուր և մեռաւ 147 տարուան : Յովսէփ մեծ սուգ ընելով իւր հօրը վրայ , և պառել տալով անոր մարմինը Եգիպտոսի « Գեռնէ » տեղը :





համեմատ, մեծ պատուով տարաւ թաղեց զնա քանանու երկիրը Մակիեւայի այրը :

Հ. Եգիպտացւոց սովորութեանը համեմատ մեռել պատել ինչ ըսել է :


Պ. Եգիպտացիք սովորութիւն ունէին մեռելոց մարմինները զմռսելով դնել քարայրներու մէջ : Այսպէս զմռսեալ կամ պատեալ մարմինները մինչեւ ցարդ կը գտնուին Եգիպտոսի մէջ, և հոգի կը կոչուին : Այս կերպով պատել տուաւ Յովսէփի իւր հօրը մարմինը, նաեւ Յովսէփայ մարմինը նոյնպէս պատելով պահեցին իսրայելացիք, և Եգիպտոսէն ելլելու ատեն մէկտեղ տաւրին Քանանացւոց երկիրը, ինչպէս որ Յովսէփ անոնցմէ խնդրած էր :

Հ. Յակոբայ մահուանէն ետքը անոր սերունդէն ինչ եղաւ :

Պ. Յիսուն տարի ետքը մեռաւ Յովսէփ 110

տարեկան, և Եգիպտացիք սկսան նեղել իսրայելացիներն՝ ա-

ղիւս շինել տալով անոնց, և տեսնելով որ անոնք տակաւին կը բազմանային, այն ատենուան փարաւոն թագաւորը հրաման ըրաւ գե-



տը նետել անոնց նոր ծնած մանչ տղայք :

Հ. Ո՞վ էր այն տղայն զոր փարաւոնի դուստրը գետէն հանելով իրեն որդեգիր ըրաւ :

Պ. Մովսէս : Մովսէսի ծնողքը պրտուեղէն անտուկի մը մէջ դնելով զնա, փարաւոնի հրամանին համեմատ Նեղոս գետը նետեցին, և Մովսէսի քոյրը հեռուն կեցած տրտմութեամբ կը նայէր թէ ինչ պիտի ըլլար տղան : Փարաւոնի աղջիկը որ այն միջոցին գետին եզերքը լուացուելու եկած էր՝ տեսնելով անտուկը հրամայեց հանել ջուրէն, և տղան առնելով իրեն յօգնէր ըրաւ : Մովսէս փարաւոնի պաշտօնի մէջ կը թուելով մեծնալէն ետքը գիտցաւ թէ իսրայելացի էր, և օր մը տեսնելով որ Եգիպտացի մը իսրայելացի մարդ մը կը ծեծէր, նեղանալով «պոնե» Եգիպտացին, և վախնալով փարաւոնէն, քանզի իմացուեցաւ անոր սպանութիւնը, Արաբիոյ առաջատար փախաւ Մագիանացւոց քուրմին քով, և անոր փեսայացաւ :



6. ՄՈՎՍԵՍԻ ԿՈՉՈՒՄԸ

Հ. Մովսէս ինչ կերպով ազատեց իսրայելացիները եգիպտոսէ :

Պ. Մինչ Մովսէս Արարիոյ Քորեբ լեռը հովուութիւն կ'ընէր, օր մը տեսաւ որ մորենի մը չէ լաւէր բայց չէր պէտք : Երբ Մովսէս զարմանօք կը նայէր, Աստուած մորենուոյն մէջէն խօսեցաւ, և հրաշք գործելու չորս-թիւն տալով անոր, պատուիրեց երթալ իւր եղբայրներն իսրայելացիները եգիպտոսէ հանել և աւետեաց (ֆանանու) երկիրը տանել :

Հ. Մովսէս ինչ ըրաւ :

Պ. Մովսէս գնաց և խնդրեց փարաւոնէն արձակել իսրայելացիները : Փարաւոն ի սկզբան չուզեց արձակել իսրայելացիները, բայց Աստուած Մովսէսի ձեռքով եգիպտացւոց վրայ սոսկալի հարուածներ բերելէն ետքը, երբ մէկ գիշերուան մէջ անոնց բոլոր անբարեկէսերը ջարդուեցան՝ փարաւոն ստիպուեցաւ թողուլ իսրայելացիները (1491 նախ քան զՔրիստոս) :

Հ. Աստուած ինչպէս զարկաւ եգիպտացւոց անդրանիկները :

Պ. Աստուած իսրայելացւոց հրամայեց որ տուն գլուխ հարստի մը առնուն, և մորթելով զայն անոր արիւնը իրենց տուններուն դրանդիներուն վրայ քսեն, որպէս զի եգիպտացւոց անդրանիկները զարնող հրեշտակը տեսնելով արիւնը՝ չգարնէ իսրայելացւոց անդրանիկները : Այս է Զարի

կամ Պատիւ կոչուած հրէական տօնին սկիզբը : Հրեայք ամէն տարի այս տօնին զառնուկ մը մորթելով կը խորովէին և կ'ուտէին իրենց յիշատակ իրենց ազատութեանը փարաւոնի ծառայութեանէն :



Դ. ԺԱՄԱՆԱԿ

ՅԵԼԻՅ ՅԵԳԻՊՏՈՍԷ ՄԻՆՉ Ի ՍԿԻՉԲՆ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀՐԷԻՅ

Հ. Այս ժամանակին երեւելի դէպքերը ո՞րոնք են :

Պ. Այս ժամանակին երեւելի դէպքերն են .

1. Կորէր ծովէն անցը .
2. Անապարին ձիւ ճափորդորութիւնը .
3. Յորդանանէն անցը և Յետապ գործերը .
4. Դարաւորաց գործերը .

1. ԿԱՐՄԻՐ ԾՈՎԷՆ ԱՆՅԲԸ

Հ. իսրայելացիք եգիպտոսէն ելելով ո՞ւր գացին :

Պ. իսրայելացիք եգիպտոսէն ելելով եկան Կորէր ծովն եղբր.քը : Փառաւոն զանոնք արձակելուն համար զղջալով՝ անոնց ետեւէն եկաւ իր զօրքովը : Անատեն Մովսէս իր գաւազանը զարնելով կարմիր ծովուն՝ ձեղքեց ծովը և իսրայելացիք ծովուն մէջէն քալելով անցան : Երբ եգիպտացիք ալ անոնց ետեւէն մտան, ջուրերը միացան, և եգիպտացիք կորեան :




2. ԱՆԱՊԱՏԻ ՄԷՋ ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Հ. Խորայեղացիք կարմիր ծովէն անցնելէն ետ-  
քը ուր եկան :


Պ. Խորայեղացիք կարմիր ծովէն անցնելով ե-  
կան Արաբիոյ անապատը , և Աստուած ցորեկն ահա-  
պեղեալ , և գիշերն հրեշտակաւ ճամբայ կը ցուցնէր  
անոնց՝ մինչեւ հասան Աւետեաց երկիրը :

Հ. Անապատին մէջ Խորայեղացուց ի՞նչ երեւե-



լի դէպքեր պատահեցան , և ո՞րն էր առաջին  
դէպքը :

Պ. Առաջին երեւելի դէպքն էր Մանանան :  
Անապատը որուն մէջէն Խորայեղացիք պիտի անց-  
նէին՝ անբեր և անջուր երկիր էր , հոն ոչ ծառ  
կար , ոչ աղբիւր , ոչ գետ : Աստուած անոնց  
հառաձայն տուաւ ուտելու : Մանանայն գնձի նման  
մեղրահամ նիւթ էր , և հրաշքով ջուր կուտար ա-  
նոնց Աստուած : Անգամ մը անոնք ջուրի մը քով  
եկան որ շատ դառն բլլալով չէր խմուէր : Աստ-



ուած Մովսէսի փայտ մը ցուցուց , որ ջուրին մէջ  
դրուելով անուշցուց ջուրը : Ուրիշ անգամ մ'ալ  
Մովսէս իւր գաւազանը քարի մը զարնելով ջուր  
բխեցուց :

Հ. Ո՞րն էր երկրորդ դէպքը :

Պ. Երկրորդ երեւելի դէպքն էր Ամաղեկաց-  
ուց դէմ պատերազմը : Ամաղեկացիք Արաբացի  
Ժողովուրդէն , և տեսնելով որ Խորայեղացիք  
բազմութեամբ կու գային , յարձակեցան անոնց  
վրայ : Մովսէս իւր զօրավարն Յեսուս՝ անոնց վրայ  
ղրկեց , և ինք լեռ մը ելլելով սկսաւ բաղկատա-  
րած աղօթել : Երբ Մովսէս ձեռուրները վեր կը  
բռնէր , Խորայեղացիք կը զօրանային , երբ յոգ-  
նելով ձեռուրները վար կ'առնուր , Ամաղեկացիք  
կը զօրանային , ուստի Ահարոն և Ովր Մովսէսի  
թեւերը վեր բռնեցին մինչեւ որ Ամաղեկացիք  
յաղթուեցան :



Հ. Ո՞րն էր երրորդ դէպքը :

Պ. Երրորդ և քան զամենայն երեւելի դէպքն էր շէնքը : Երբ իսրայելացիք Արաբիոյ անապատին մէջ Սինա կոչուած լեռան մօտ հասան , հոն Աստուած տուաւ անոնց Մովսէսի ձեռքով Կանաքանէայ պարտէիները երկու տախտակներու վրայ , և ուրիշ Կանաքանէայ և Զեփան օրէնք :

Հ. Իսրայելացիք այն միջոցին ի՞նչ ըրին :

Պ. Երբ Մովսէս այս օրէնքն ընդունելու համար Սինա լեռը ելած էր Աստուծոյ քով , ուր մնաց Կանաքանէայ օր , իսրայելացիք ոսկիէ հորթ մը շինեցին : Երբ Մովսէս լեռնէն իջնելով տեսաւ հորթը , բարկութենէն զարկաւ կոտորեց տախտակները , հորթը ջնջեց , և յետոյ Աստուծոյ հրամանաւ դարձեալ լեռը ելլելով նորէն գրեց տասը պատուիրաններն ուրիշ երկու տախտակներու վրայ : Երբ լեռնէն իջաւ Մովսէս , երեսներն այնպէս փառաւորուած էին , որ երեսը քող ծածկելով կը խօսէր Ժողովրդեան հետ :

Հ. Իսրայելացւոց քաղաքային օրէնքն ի՞նչ բաներու վրայ էին :

Պ. Այս օրէնքն էին ընկերական կենաց յարաբերութիւններու վրայ , զոր օրինակ կենաց և ընչից պահպանութեան , տան և կնոջ , ծնողաց և որդւոց , քեռանց և ծառայից պարտականութիւններուն , ամուսնութեան , դաշնաց , երկրի շահութեան և ուրիշ ասոնց նման բաներու վրայ :

Հ. Ծիսական օրէնքն ի՞նչ բաներու վրայ էին :

Պ. Ծիսական օրէնքն էին կրօնական պաշտա-

մանց վերաբերեալ բաներու վրայ , զոր օրինակ՝ շնորհ , Կորեկան Գծներու , շաբաթ օրուան , Կանաքանէայ օծութեան , անոնց զգեստներուն , պաշտօններուն , և ուրիշ արարողութեանց վրայ : Աստուած նաեւ Կանաքանէայ ջնջ մը որոշեց , այսինքն Ղեւեայ ցեղը , որմէ պիտի ըլլային կրօնքի բոլոր պաշտօնեաները , և առաջին Կանաքանէայի եղաւ Ահարոն , Մովսէսի եղբայրը :

Հ. Իսրայելացւոց տարեկան տօները որո՞նք էին :

Պ. Իսրայելացւոց տարեկան տօներն երեք էին , Զահլէ կամ Պասեփ Գծը՝ ի յիշատակ ելից յեգիպտոսէ , Պենթէկոսթէ Գծը՝ ի յիշատակ սինէական օրէնսդրութեան , և Տաղաարահարաց տօնը :

Իսրայելացիք ուրիշ մեծ տօն մը ունէին որ Կանաքանէայ Գծ կը կոչուէր . այն օրը քահանայապետը կը մօտէր Սրբութիւն սրբութեանց կոչուած տեղը , և իւր ու Ժողովրդեան մեղաց համար արեամբ քաւութիւն կ'ընէր : Այս տօնին էր որ Կահանայապետը երկու նոխազ առնելով , մին կը զոհէր , և միւսը կ'արձակէր անապատը :


Հ. Իսրայելացիք հրապարակաւ պաշտօն մատուցանելու ի՞նչ տեղ ունէին :

Պ. Մովսէս Աստուծոյ հրամանաւ շինեց խորան մը որ կը կոչուի Խորան վայոյթեան , և էր քառակուսի վրան որ երկու մաս կը բաժնուէր : Ներքին մասը կը կոչուէր Սրբութեան սրբութեան , և վարագուրով մը կը զատուէր երկրորդէն որ կը կոչուէր Սրբութեան , և նոյնպէս վարագուրով մը կը զատուէր արտաքին գաւթէն :



Հ. Այս տեղերուն վրայ դիտելու թնչ բան կայ :

Պ. Ներքին մասին , այն է Սրբութիւն սրբութեանց մէջ էր ուխտին ճապարակը բերով բէններով որ և փառաբանէր կողուէր : Հոս կը մտնէր քահանայապետը միայն տարին անգամ մը իւր և ժողովրդեան մեղաց համար քաւութիւն ընելու :



Երկրորդ մասին , այն է Սրբութեան մէջ էին խնայ սեղանը , առաջադրութեան հացին սեղանը և ոսկիէ աշտակը : Հոս կը մտնէին քահանայք խոնկ ծխելու :

Դուրսի գաւթին մէջ էին Պննէ քաւ կոչուած աւաղանը և Ողնակէտ սեղանը ուր զոհները կը մատուցուէին : Հոս կու գար ժողովուրդն աղօթք և զոհ մատուցանելու :

Հ. Խորայեւացիք անապատին մէջ միշտ հնազանդ էին Աստուծոյ :

Պ. Անոնք շատ անգամ միտնալով Աստուծոյ բարերարութիւնները , և յիշելով Եգիպտոսի տիւնն ու սխտորը , կը տրտնջէին Աստուծոյ և Մովսէսի դէմ , ուստի և շատ անգամ մեծամեծ պատիժներ տրուեցան անոնց :

Հ. Առաջին գլխաւոր պատիժը ո՞րն էր :

Պ. Առաջին գլխաւոր պատիժն էր Նադաբայ և Աբիուդինը : Ասոնք Ահարոնի որդիք և փահա-



նայ էին , և փոխանակ ողջակիցաց սեղանին կըրակէն դնելու իրենց բուրուառներուն մէջ , տար կրակ դնելով գացին խոնկ ծխել , և խաւոյն սեղանէն կրակ ելլելով այրեց զանոնք :

Հ. Երկրորդ երեւելի պատիժն ո՞րն էր :

Պ. Երկրորդ երեւելի պատիժն էր Հրայրեացը : Անգամ մը ժողովուրդը մանանայէն ձանձրանալով միտ ուղեց , և Աստուած անոնց լորսաբեկ տեղացուց : Բայց քիչ մը ետքը կրակ բորբոքեցաւ



Ժողովրդեան մէջ և շատերն այրեց , մինչեւ Մովսէս աղօթքով դադրեցուց կրակը :

Հ. Երրորդ երեւելի պատիժը ո՞րն էր :

Պ. Երրորդ երեւելի պատիժը Կորխեանց սոսկալի պատուհասն էր : Կորխ , Դաթան և Աբիրոն անուն երեք նշանաւոր անձինք ապստամբութիւն հանեցին Մովսէսի և Ահարոնի դէմ , և չէին ուզեր անոնց առաջնորդութիւնը : Հետեւեալ օրը բոլոր Ժողովրդեան առջեւ գետինը բացուելով կլլեց այն երեք խռովարարները , և անոնց համախոհներէն երկու հարիւր յիսուն հոգի այրեցան երկնառաք հրով :

Հ. Այս պատժով Մովսէսի և Ահարոնի դէմ ապստամբութիւնը դադրեցաւ :

Պ. Ոչ . ի սկզբան սարսափեցան ապստամբք , բայց հետեւեալ օրը կատաղութեամբ դիմեցին Մովսէսի և Ահարոնի վրայ : Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ , և Ժողովրդեան մէջ սկսաւ ահագին կոտորած մը : Մինչեւ որ Ահարոն Մովսէսի հրամանաւ բուրուռն առնելով դնացքաւութիւն ընել Ժողովրդեան մեղաց համար , տասն ու չորս հազար եօթն հարիւր հոգիք մեռան :

Հ. Մովսէսի և Ահարոնի դէմ տրտունջն ի՞նչպէս վերջացաւ :

Պ. Մովսէս Աստուծոյ հրամանաւ պատուիրեց տասուերկու ցեղին , նաեւ Ահարոնի , մէյմէկ գաւազան բերել վկայութեան խորանը , և մինչեւ հետեւեալ օրը որու գաւազանը որ ծաղկէր ,

յայտնի ըլլար թէ այն էր Աստուծմէ ընտրեալն ի քահանայութիւն : Ժողովուրդն այսպէս ըրաւ , և հետեւեալ առտուն տեսնուեցաւ որ Ահարոնի գաւազանը ծաղկած էր : Այսպէս քահանայութիւնն Ահարոնի ցեղին սեպհական ճանչցուեցաւ , և վէճը դադրեցաւ :

Հ. Չորրորդ երեւելի պատիժը ո՞րն էր :



Պ. Ժողովուրդն անգամ մ'ալ մանանայէն ձանձրանալով , ուրիշ ուտելիք ուզեց , և Աստուած կիզող օձեր դրկեց : Մովսէս Աստուծոյ հրամանաւ պղնձէ օձ մը կանգնեց , և բուն օձերէն խայթուողներէն ով որ այն պղնձէ օձին կը նայէր՝ կը բժշկուէր :

Հ. Մովսէս և Ահարոն երբէք յանցաւոր չգտնուեցան :

Պ. Անգամ մը Ժողովուրդը ջրոյ համար տըր-



տընջեց , և Աստուած հրամայեց Մովսէսի ապա-  
ռաժ քարի մը զարնելով գաւազանը ջուր հանել :  
Մովսէս և Ահարոն երկմտեցան Աստուծոյ այս  
հրամանին վրայ , և Աստուած բարկանալով չթու-  
ղուց անոնց Աւետեաց երկիրը տեսնել : Նաեւ  
Մովսէսի քոյրը Մարիամ անգամ մը Մովսէսի  
դէմ արհամարհանօք խօսելուն համար բորոտե-  
ցաւ , և եօթն օր բանակէն դուրս մնալէն ետքը  
բժշկուեցաւ :

Հ. Մ'նացեալ ժողովուրդը մտա՞ւ Աւետեաց  
երկիրը :

Պ. Երբ իսրայելացիք Քանանացւոյ երկրին  
մօտեցան , Մովսէս իսրայելի երկրորդասան ցեղե-  
րէն մէյմէկ հոգի զրկեց երթալ լրտեսել երկի-  
րը : Ասոնք գէշ լուր բերին այն երկրին վրայ , և  
ժողովուրդը վախնալով ուղեց Եգիպտոս դառ-  
նալ : Այս պատճառաւ Եգիպտոսէ ելլող անձինք  
Աստուծոյ վճռով չկրցան մօտել Աւետեաց եր-  
կիրը : Ասոնց ամէնքը քառասուն տարուան մի-  
ջոյին մեռան անապատին մէջ , անոնք միայն որ  
անապատին մէջ ծնած էին՝ Ժառանգեցին Աւե-  
տեաց երկիրը :

Հ. Մարդասպաններու համար Մովսէս դիտու-  
ղութեան արժանի ի՞նչ օրէնք դրաւ :

Պ. Հին ատենը Հրէից նաեւ ուրիշ ազգաց մէջ  
սպաննելոյ մը ազգականներն սպանողը մեռցնե-  
լու իրաւունք ունէին՝ առանց քննելու թէ սպա-  
նութիւնը կամա՞ւ թէ ակամայ եղած էր : Մովսէս  
պատուիրեց իսրայելացւոյ մարդասպաններու

ապաւինութեան համար քանի մը ապաստանի քա-  
ղաք որոշել : Երբ սպանող մը այն քաղաքներէն մին  
կը փախչէր , կ'ազատէր սպաննելոյն ազգականնե-  
րուն ձեռքէն , բայց հոն քննութիւններ կ'ըլլային ,  
և եթէ կ'իմացուէր որ սպանութիւնը դիտմամբ և  
կամաւ եղած էր , մարդասպանը կը պատժուէր



լստ օրինաց , ապա թէ ոչ ազատ կը թողուէր :

Հ. Իսրայելացիք խաղաղութեամբ հասան Քա-  
նանացւոյ երկիրը զոր Աստուած անոնց խոստա-  
ցած էր :

Պ. Ոչ . անոնք իրենց ճամբորդութեան ատե-  
նը շատ անգամ պատերազմներ ունեցան Արա-  
բացի ցեղերու հետ , որ էին Եփրայեցիք , Մադյե-  
ցիք , Մաքիմացիք , Մովաբացիք և Ամոնացիք :



Հ. Եղոմայեցիք ինչ ըրին իսրայելացւոց :

Պ. Իսրայելացիք խնդրեցին բարեկամաբար անցնիլ Եղոմայեցւոց երկրէն որ իսրայելի ճամբուն վրայ էր , բայց Եղոմայեցիք անոնց անցք չտուին , և իսրայելացիք ուրիշ կողմէ յառաջ տարին իրենց ճամբան առանց կռուելու Եղոմայեցւոց հետ , վասն զի Եղոմայեցիք Յակոբայ եղբօր Եսաւայ սերունդն ըլլալով մերձաւոր կը համարուէին իսրայելացւոց :

Հ. Մովաբացիք ինչ ըրին իսրայելացւոց :

Պ. Մովաբացւոց թագաւորը Բաղադ՝ Բաղաամ անուն մարդարէ մը կանչեց և իսրայելի իսրայելի Երբ Բաղաամ այդ ինքերուն մէջտեղէն նեղ ճամբէ մը կ'անցնէր , հրեշտակ մը ելաւ անոր դիմացը : Բաղաամ առաջ չտեսաւ հրեշտակը . բայց էջը որոյ վրայ Բաղաամ նստած էր՝ վախ-



նալով կեցաւ : Բաղաամ կը զարնէր իշուն որ քալէր , և ելն Բաղաամ Եղի Եղի իսրայելի յանդիմանեց զԲաղաամ . անատեն Բաղաամ հրեշտակը տեսնելով՝ անկէ պատուէր ընկալաւ իսրայելացիներն օրհնել : Բայց իսրայելացիք Մովաբացւոց փեղեկէն անուն կուռքը պաշտեցին , և 24 հազար հոգի սպանուեցան սորէ և խանութիցէ :

Հ. Այն ատեններն աշխարհի վրայ իսրայելացիներէն զատ ուրիշ աստուածապաշտներ չկային :

Պ. Կային , զոր օրինակ Յոբ և անոր բարեկամները , որ հաւանականաբար Մովսէսի ժամանակը կ'ապրէին Արաբիոյ մէջ :

Հ. Յոբ ո՞վ էր և անոր վրայ ինչ կը պատմուի :

Պ. Յոբ (1520 ն. ք. զԲ.) շատ հարուստ միանգամայն շատ բարեպաշտ մարդ էր Արաբիոյ մէջ , ունէր նաեւ շատ մանչ և աղջիկ զաւկերն : Ստանան նախանձելով այս մարդուն վրայ ամբաստանեց զնա Աստուծոյ ըսելով թէ Յոբ յաջողութեան մէջ ըլլալուն համար բարեպաշտ կը ձեւանար , եթէ ձախորդութեան մէջ իյնար , պիտի մոռնար զԱստուած : Աստուած սատանան ամիցնելու համար անոր թոյլ տուաւ Յոբայ վրայ ամէն տեսակ ձախորդութիւն բերել : Յոբ իւր զաւկերները և բոլոր հարստութիւնը կորսնցնելով , խոց և վիրաւոր կը նստէր աղբերաներու մէջ , բայց իւր վստահութիւնը երբէք չվերցուց Աստուծմէ : Յոբայ երեք բարեկամներն անոր այցելութեան գալով և յետին թշուառութեան մէջ տեսնելով զնա , կարծեցին թէ այն ձախորդութիւնները պատիժ էին Աստուծմէ անոր մեղաց համար , բայց Աստուած յանդիմանեց զանոնք , և Յոբայ տուաւ զաւկերն , և արեւելեան կրկին հարստութիւն :





3. ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ԱՆՅՔԸ ԵՒ ՅԵՍՈՒԱՅ ԳՈՐԾԵՐԸ

Հ. Իսրայելացիք Քանանու երկրին ինչպէս տիրեցին :

Պ. Մովսէս և Ահարոն անապատին մէջ մեռած էին , ուստի և Յեսու , Մովսէսի յաջորդը , Քանանացւոց ազգերուն յաղթելով , Իսրայելացւոց բաժնեց անոնց երկիրները :

Հ. Քանանացւոց ազգերը որո՞նք էին :

Պ. Բայ ի փնիկէցիներէն և փղափայտներէն որ Միջերկրական ծովուն եզերքը կը բնակէին , Քանանացւոց փնացեալ ազգերն էին՝ փեփափ , Յեբուսացի , Ամօրացի , Գերգեսացի և խեաւացի :

Հ. Յեսու ինչ երեւելի գործեր ըրաւ :

Պ. Յեսու նախ հրաշով բաժնեց Յորդանոս գետը որուն մէջէն Իսրայելացիք ցամաքով անցան , ինչպէս որ քառասուն տարի առաջ Մովսէսի ատեն կարմիր ծովէն անցած էին : Նոյնպէս հրաշով կործանելով երէտով որ Քանանացւոց երեւելի քաղաքն էր՝ Ջադգեց անոր բնակիչները , բայ ի Ռաֆաէսուն ևն ինծմէն որ Յեսուայ լրտեսները ծածուկ փախուցած էր :

Հ. Ո՞ր ժողովուրդն է որ զՅեսու խաբելով դաշինք ըրաւ և կոտորածէ ազատեցաւ :

Պ. Քանանացւոց երկրին մէջ Գաբաւոն անուն քաղաք մը կար . ասոր բնակիչներէն ոմանք իրեն և պատգամաւոր եկան Յեսուայ , և հեռու տեղէ եկած ձեւանալով , խաբեցին զՅեսու և անոր հետ բարեկամութեան դաշինք ըրին : Յե-

սու ետքը իմացաւ անոնց խաբէութիւնը , այլ երդման համար անոնց փառս չըրաւ , բայց Գաբաւոնացիք Իսրայելացւոց փայտ կտրող և ջուր բերող ծառաներ եղան :

Հ. Քանանացիք Գաբաւոնի անձնատուր ըլլալով լսելով ինչ ըրին :

Պ. Հինգ Ամօրհացի թագաւորք միաբանե-



լով եկան Գաբաւոնացւոց վրայ , բայց Յեսու Աստուծոյ հրամանաւ Գաբաւոնացւոց օգնութեան երթալով , չարաչար զարկաւ Ամօրհացիները , և հինգ թագաւորները բռնելով սպաննեց : Այս պատերազմին ատենն էր որ Յեսու արեգակը և լուսինը կեցուց :

Յեսու այս և ուրիշ գործեր ընելէ , և Քանանացւոց երկրին մեծ մասն Իսրայելացւոց երկու տասան ցեղերուն բաժնելէ ետքը , մեռաւ :



Հ. Իսրայելացիք ուրիշ ինչ պատերազմ անեցան, և ինչ պատահեցաւ անոնց :

Պ. Յեսու զերիքով առնելէն ետքը, Գալիլոյն քաղքին վրայ զօրք զրկեց, որ յաթիւթուելով փախան : Այս դժբախտութիւնը պատահեցաւ անոնց, վասն զի Աքար անուն ոմն Երիքովի նշովեալ աւարէն քանի մը կտոր բան պահած էր : Այս գողութիւնն իմացուեցաւ, և Աքար քարկոծուեցաւ ընտանեօք :

#### 4. ԴԱՏԱԻՈՐԱՅ ԳՈՐԾԵՐԸ

Հ. Իսրայելացիք Յեսուայ մահուանէն ետքը ինչպէս կառավարուեցան :

Պ. Յեսուայ մահուանէն ետքը, մինչեւ թաւաորութեան ժամանակը (1450-1400 Ն. ք. զԳ.) իբր 350 տարի, Իսրայելացիք շատ անգամ ապստամբելով Աստուծմէ կռապաշտութիւն կ'ընէին, Աստուած ալ զանոնք կը մատնէր դրացի թագաւորաց ձեռքը, և երբ կը զղջային եւ Աստուծոյ կը դիմէին, Աստուած երեւելի անձ մը հանելով անոր ձեռքով կ'ազատէր զանոնք թշնամիներուն ձեռքէն : Այս երեւելի մարդիկ Դաւիթը կը կոչուէին, և կը կառավարէին ժողովուրդը մինչեւ իրենց մահը :

Հ. Երբ Իսրայելացիք կռապաշտութեան մէջ կ'իյնային, ինչ կուռքեր կը պաշտէին :

Պ. Կը պաշտէին դրացի ազգաց, քանանաց, և Արամացոց կուռքերը, Բահլ, Փելեթիթ,

Աֆեղէթու, Մեղոֆ և Ապար : Իսրայելացիք այն եղբերուն դարչելի սովորութեանը հետեւելով իրենց շաւիւրը կը զոհէին այս կուռքերուն :

Հ. Իսրայելացոց դատաւորներուն գլխաւորները որոնք են :

Պ. Իսրայելացիք մինչեւ Սաուլը, Հրէից առաջին թագաւորն, ունեցան իբր բսան դատաւոր. որոց գլխաւորներն են, Քաղեր, Գողոնիէլ, Աւովդ, Դերովրա և Բարակ, Գեդէոն, Յեփթայէ, Սամիսոն, Հեղի և Սամուէլ :

Հ. Քաղեր ո՞վ էր :

Պ. Յուդայի ցեղէն իշխան մը, որ Յեսուայ յաջորդելով Քանանացոց քանի մը ցեղերը նըռաճեց, և անոնց թագաւորն Աղոնիքեղեկ բռնելով ձեռուրներն ու ոտուրները կտրել տուաւ, վասն զի Աղոնիքեղեկ եօթանասուն թագաւորներու այնպէս ըրած էր :

Հ. Գողոնիէլ ո՞վ էր :

Պ. Գողոնիէլ Քաղերայ կրտսեր եղբայրն էր, և ազատեց Իսրայելացիներն Ասորոց Գուսարսաթեմ թագաւորէն, որոյ ձեռքը մատնած էր զանոնք Աստուած անոնց կռապաշտութեան համար :

Հ. Աւովդ ո՞վ էր :

Պ. Աւովդ էր Բենիամինի ցեղէն իշխան մը որ Իսրայելացիներն ազատեց Մովաբացոց Եգղոմ թագաւորէն : Աւովդ ընծաներ տանելով Եգղոմայ, մտաւ անոր սենեակը որպէս թէ ծածուկ խօսք մը ունէր անոր, և դաշոյնը մէջքէն հանելով մխեց Եգղոմայ կուշոր և փախաւ :



Հ. Դերովրա և Բարակ ո՞վ էին :

Պ. Դերովրա էր կին մարգարէ , և Բարակ՝ Նեփթաղիմի ցեղէն քաջ երիտասարդ մը : Այն ատեն Խորայեղացւոց վրայ կ'իշխէր Քանանացւոց Յաբին թագաւորը : Բարակ Դերովրայէ քաջալերուելով , տասն հազար հոգւով գնաց Յաբինի զօրաց վրայ , զօրքը ցրուեցաւ , և Յաբինի զօրապետը Սիսարա Յայել անուն Կինեցի կնոջ մը ձեռք սպանուեցաւ : Այսպէս Խորայեղացիք ազատեցան :

Հ. Գեդէոն ո՞վ էր :

Պ. Գեդէոն իշխան էր Մանասէի ցեղէն : Իս-



րայեղացիք Մագիանացւոց ձեռքը մատնուած էին : Գեդէոն Աստուծոյ հրամանաւ 300 հոգի ընտրեց , որ գիշերայն աղաղակելով « Սուր Տեառն և Գեդէոնի , » յարձակեցան Մագիանացւոց բանակին վրայ . Մագիանացիք շփոթելով և իրար ջարդելով փախան :

Հ. Գեդէոն ինչպէս համարձակեցաւ 300 հոգւով Մագիանացւոց բանակին վրայ յարձակիլ :

Պ. Աստուած անոր նշան տուած էր : Գեդէոն գլաթ (փօփօ) մը դրաւ գետինը , և գիշերը անձրեւ գալով այն գլաթը միայն թրջեց . հետեւեալ գիշերը դարձեալ անձրեւ եկաւ , բայց գետինը միայն թրջեցաւ և գլաթը չոր մնաց : Գեդէոն այս հրաշքը տեսնելով քաջալերուեցաւ և յաղթեց :


Հ. Յեփթայէ ո՞վ էր :

Պ. Յեփթայէ Գաղաադացի սրիկայ էր , բայց Աստուած ընտրեց զնա դատաւոր ըլլալ իւր ժողովրդեան որ Ամոնացւոց ձեռքը մատնուած էին : Յեփթայէ չարաչար զարնելով Ամոնացիները , քսան քաղաք առաւ անոնցմէ և դարձաւ յաղթութեամբ : Յեփթայէ պատերազմէն առաջ ուխտ ըրած էր որ , եթէ յաղթութեամբ դառնար , իւր ընտանիքէն գիմացը ելլող առաջին անձը զոհէր : Յեփթայէի միամօր դուստրը , հօրը ուխտը չգիտնալով , ուրախութեամբ անոր առջեւ ելաւ , երբ Յեփթայէ յաղթանակաւ ետ կը դառնար : Յեփթայէ շատ ցաւեցաւ , բայց կատարեց իւր ուխտը :

Հ. Սամիսոն ո՞վ էր :

Պ. Սամիսոն Դանայ ցեղէն էր , նուիրեալ Աստուծոյ ի մանկութենէ : Աստուած անոր մարմնոյ սաստիկ ոյժ տուած էր : Անգամ մը առիւծու մը պատահելով բռնեց երկու կտոր ըրաւ գազանը : Ուրիշ անգամ մը իշու ծնօտով փղշտացիներէն , որոց ձեռքը մատնուած էին այն ատեն Խորայեղացիք , 1000 հոգի սպաննեց : Ուրիշ անգամ մը





Դադա քաղքին մէջ պաշարուած էր թշնամիներէն , և կէս գիշերուն քաղքին դուռները նիգերէն հանելով շալկեց տարաւ լերան մը գլուխը :



Սամիսոն փղշտացիներուն շատ վնասներ տա-



լէն ետքը վերջապէս ինկաւ անոնց ձեռքը որ կուրացուցին գնա : Անգամ մը երբ փղշտացւոց իշխաններն իրենց Դադոն Աստուծոյն մեհենին մէջ ժողովուած էին , Սամիսոն մեհենին երկու սիւններէն բռնելով քաշեց , շէնքը կործանեցաւ և 3000 հոգի , ինք եւս անոնց հետ վլատակին տակ մնալով մեռան :

Հ. Հեղի ո՞վ էր եւ ի՞նչ բրաւ :

Պ. Հեղի քահանայապետ էր , և Սամիսոնէն ետքը դատաւոր եղաւ Իսրայելացւոց : Հեղի բարեպաշտ էր , բայց անոր որդիքը չար էին , եւ Հեղի թոյլ մարդ մը ըլլալով զանոնք չպատժելուն համար՝ կը մեղադրուի Սուրբ գրոց մէջ : Ասոր օրը Իսրայելացիք պատերազմ ունեցան փղշտացւոց հետ , և փղշտացիք Իսրայելացւոց յաղթելով Տապանակը գերի տարին : Երբ ձե-



բունին Հեղի տապանակին գերի տարուիլը լսեց ,  
կողին վրայ իյնալով մեռաւ : փղշտացիք իրենց



Դադոն աստուծոյն մեհեանը դրին տապանակը

և հետեւեալ  
օրը տեսնելով  
որ Դադոնի  
կուռքը Տա-  
պանակին առ-  
ջեւ կործանած  
և կտոր կտոր  
եղած էր : Փը-  
ղշտացիք մե-  
ծամեծ հար-  
ուածներ կրե-  
լով Տապանա-  
կին պատճա-  
ռաւ, ընծանե-

րով ետ դարձուցին Տապանակն իսրայելացւոց :



Հ. Սամուէլ ո՞վ էր և ի՞նչ ըրաւ :

Պ. Սամուէլ Ղեւտացւոց ցեղէն Աննա անուն  
բարեպաշտ կնոջ մը որդի էր : Տղայութենէն  
Աստուծոյ նուիրուելով Հեղիի քով կը բնակէր ,  
և անոր մահուանէն  
ետքը դատաւոր ե-  
ղաւ : Աստուած զՍա-  
մուէլ շատ կը սիրէր ,  
և անոր շատ անգամ  
կը յայտնէր իւր կամ-  
քը : Ասոր օրով Իս-  
րայելացիք տեսնելով  
որ ուրիշ ազգեր թա-  
գաւոր ունէին և ի-  
րենք չունէին , Սա-  
մուէլէ թագաւոր  
խնդրեցին : Եւ Սամուէլ Աստուծոյ հրամա-  
նաւ թագաւոր օծեց անոնց Սաւուղ անուն գե-  
ղեցիկ երիտասարդ մը բենիամինի ցեղէն : Այս-  
պէս դատաւորները կը դադրին և կը սկսի թա-  
գաւորաց ժամանակը :



Հ Ռ Ռ Թ

Հ. Դատաւորաց ժամանակ կռապաշտներէն  
աստուածապաշտ եղող ո՞ր կինն է , որոյ պատ-  
մութիւնը յատկապէս յիշուած է Հին Կտակա-  
րանին մէջ :

Պ. Հուլթ է , որոյ պատմութիւնը սա կեր-  
պով կը յիշուի Հին Կտակարանին մէջ :



Դատաւորաց ժամանակը մեծ սովի մը պատ-  
ճառաւ մարդ մը բեթղեհեմէ Մովսէսացւոց եր-  
կիրը կ'երթար իւր Նոյեմի անուն կնոջմով և եր-  
կու որդիներով, որ հոն ամուսնանալով Մովսէս-  
ցի աղջիկներ կ'առնուն : Մարդը և երկու որդի-  
քը մեռնելէն ետքը՝ Նոյեմի նորէն իւր երկիրը  
դառնալ կ'ուզէ, և հարսերուն մին, Հուլթ,  
չուզելով իւր կեսուրը թողուլ՝ անոր հետ կու  
գայ բեթղեհեմ : Հոն Բոոս անուն հարուստ մարդ



մը հնձոյ ատեն տեսնելով զՀուլթ, և լսելով  
անոր առաքինութիւնը, միանգամայն խմանալով  
որ անոր վախճանեալ այրն ազգական էր իրեն,  
իրեն կին կ'առնու զՀուլթ : (Հրէից մէջ օրէնք  
էր որ, երբ մարդ մը կը մեռնէր անորդի, անոր  
մօտագոյն ազգականը պարտական էր այրի մնա-  
ցած կինն առնուլ : ) Այս Հուլթ մեծ թագաւո-  
րի մը, այսինքն Դաւթի, հաւուն (սէպէ) մայ-  
րն է :

Ե. ԺԱՄԱՆԱԿ

ԻՍՐԱԵԼԱՅԻՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻՋԲԷՆ

ՄԻՆՁՆԻ ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

(1100-600 Ն. Ք. ՋԲԲ.)

Հ. Սաւուղ ինչպէս թագաւոր ընտրուեցաւ :

Պ. Սաւուղ գեղեցիկ և բարձրահասակ երի-  
տասարդ էր : Անգամ մը հօրը կորսուած էշեր  
փնտռելու ելլելով, Սամուէլ մարգարէին գնաց  
էշերուն համար անոր պատգամ հարցնելու : Սա-  
մուէլ հաւնելով Սաւուղայ, հրամանաւ Աստու-  
ծոյ օծեց զնա թագաւոր և բերաւ Իսրայելաց-  
ւոց, և անոնք «կեցցէ արքայ» ըսելով Խաշա-  
ռուէն զնա :

Հ. Սաւուղ ինչպէս թագաւորութիւն ըրաւ,  
և անոր վախճանն ինչպէս եղաւ :

Պ. Սաւուղ (1092-1052 Ն. Ք. զԲ.) մեծամեծ  
յաղթութիւններ ընելով ազատեց Իսրայելացի-  
ներն անոնց թշնամիներէն : Բայց Ամաղեկացւոց  
վրայ յրկուելով զանոնք ջարդելու, Աստուծոյ  
հրամանին հակառակ չմեռցուց անոնց Աստու-  
ծոյ երեսէն ինկաւ, և լաւ հոգի մը կը տանջուէր :  
Վերջապէս Փղշտացւոց դէմ պատերազմի մէջ  
յաղթուելով հաւանքէն ապաւինեցաւ, և օգ-  
նութիւն չգտնելով Խաշառուէն : Անոր յաջոր-  
դեց Դաւիթ :

Հ. Դաւիթ ո՞վ էր :

Պ. Դաւիթ Բաբելոնի պատանի էր Յուդայի



ցեղէն , և իւր հօրը յիշմէր : Սաւուղի թագաւորութեան ատենը , երբ անգամ մը իսրայելացիք փղշտացւոց հետ պատերազմ կ'ընէին : Գողթան անուն հսկայ մը փղշտացւոց բանակէն ելլելով ուղեց իսրայելացիներէն մէկուն հետ ձիա-  
հարստութեան ընել , և ոչ ոք կը համարձակէր անոր դէմ ելլել : Դաւիթ պատանին դիպուածով բանակին մէջ գտնուելով անոր դիմաց ելաւ , և պարսպաբաշտ մը զարկաւ սպաննեց հսկան :



Հ. Դաւիթ ինչպէս ընտանեցաւ Սաւուղայ և Սաւուղ անոր հետ ինչպէս կը վարուէր :

Պ. Դաւիթ Գողթան ըլլալով , երբ Սաւուղի դէմ կը բռնէր , քնար զարնելով կը հանդարտեցընէր զՍաւուղ : Դաւիթ մեծնալով քաջ զինուոր եղաւ , և մեծամեծ ծառայութիւն-

ներ ըրաւ Սաւուղի , և վերջապէս անոր փեսայացաւ : Բայց Սաւուղ տեսնելով որ Դաւիթ շատ սիրելի էր Ժողովրդեան , նախանշեցաւ և կը խորհէր ինչպէս զնա : Դաւիթ տեսնելով որ Սաւուղի քով մնալ վտանգաւոր էր , փախաւ , և մինչեւ Սաւուղի մահը հալածական կը պտտէր լեռներու

մէջ և օտար երկիրներ : Սաւուղ այնչափ կ'ատէր զԴաւիթ , որ անոր բարեկամներն անգամ կը հալածէր և կը սպաննէր : Սպաննել տուաւ Աֆֆէլ Գողթանի փեսային որ հաց և զէնք տուած էր Դաւիթի անոր փախած ատենը . քիչ մնաց որ պիտի սպաննէր նաեւ իւր որդին Յովիաթան որ մտերիմ բարեկամ էր Դաւիթի : Ընդհակառակն Դաւիթ կը յարգէր և կը սիրէր զՍաւուղ իբրեւ իւր թագաւորը : Քանի մը անգամ Սաւուղ Դաւ-



թի ձեռքն ինկաւ , այնպէս որ կրնար Դաւիթ սպաննել զնա , բայց չմօտեցաւ անոր :

Հ. Դաւիթ ինչպէս թագաւորեց :

Պ. Արդէն Սամուէլ մարգարէ Սաւուղի կենդանութեան ատեն հաշտ թագաւոր օծած էր զԴաւիթ : Սաւուղի մահուանէն ետքը Դաւիթ թագաւորեց նախ Յուդայի ցեղին վրայ . միւս ցեղերն իրենց թագաւոր ընտրեցին Սաւուղի որդին Յեբուսիթ . բայց քանի մը տարի ետքը ,




Սաւուղի զօրապետին Աբեններայ միջոցաւ Դաւիթ Բաբի իսրայելացւոց վրայ թագաւորեց 40 տարի (1052-1012 Ն. ք. զԲ.) : Դաւիթ երուսաղէմ քաղաքն առնելով իւր զօրավարին Յովաբայ քաջութեամբ, նորէն շինեց զայն, և Աստուծոյ Տապալակ մեծ հանդիսիւ բերաւ Սիւն որ երուսաղէմի մէջ բլուր էր : Դաւիթ Պաղեստինու մէջ շատ ազգերու յաղթեց, և ընդարձակեց իսրայելացւոց թագաւորութիւնը :

Հ. Դաւիթ ինչ սխալմունք բրաւ :

Պ. Դաւիթ որ այնչափ երկիւղած և բարեպաշտ էր՝ քանի մը սխալում բրաւ : Նախ բոլոր ժողովուրդը համբել տուաւ, ինչպէս կը կարծուի, իմանալու համար իւր հպատակներուն թիւը : Աստուած Դաւթի այս ամբարտաւանութիւնը պատժել ուզելով, Դաւթ մարգարէին բերնով առաջարկեց անոր երեք պատիժ, որոց մին էր երեք օր ժանտամահ : Դաւիթ ժանտամահ ընտրեց, և ժողովուրդէն եօթանասուն հազար հոգի մեռան երեք օրուան մէջ : Երբ ժողովուրդը զարնող հրեշտակը երուսաղէմի մէջ ևս պիտի ընէր նոյն կոտորածը : Դաւիթ զղջաց, և Աստուած դադրեցուց հարուածը : Դաւիթ դարձեալ ուրիշ անգամ մը Ուրբանուն մարդու մը կնոջը, Բերսաբէի, զարնուելով, զՈւրբիս սպաննել տուաւ և առաւ անոր կինը : Ի պատիժ Դաւթի այս մեղաց՝ Աստուած անոր դէմ հանեց որդին Աբիսայի : Աբիսայի շատ խորագէտ ըլլալով ժողովրդեան սիրտը շահեցաւ, և կ'ուզէր հօրը տեղ

թագաւորել, և որովհետեւ որդի չունէր, իւր անունը մշտնջենաւոր ընելու համար արձան մը կանգնեց, և վերջապէս յարմար ժամանակ մը գտնելով ապստամբեցաւ Դաւթէ և փախուց զնա իւր աթոռէն, բայց մինչ ջորով անտառի մէջէն կ'անցնէր, հաշտեալ կախուեցաւ ծառի մը ճիւղէն և սպանուեցաւ : Դաւիթ նորէն դառնալով



իւր աթոռը՝ մեռաւ, դեռ չմեռած՝ փոխանակ իւր՝ թագաւոր ընտրել տալով իւր որդին Սուլամն :

Հ. Սողոմոն ինչպիսի մարդ էր :

Պ. Սողոմոն (1012-972 Ն. ք. զԲ.) բաց հարըստութենէ և զօրութենէ, ունէր նաեւ Բեթ Էման, և իւր իմաստութեան համար այնպէս համբաւեալ էր որ Սաբա (Արաբիոյ) թագուհին եկաւ տեսնել զՍողոմոն, և անոր իմաստութիւնն ու մեծութիւնը տեսնելով այնպէս զարմացաւ որ երանի տուաւ անոր բոլոր ծառաներուն :



Կը պատմուի թէ Սողոմոնի թագաւորութեան սկիզբը երբեք զատաստանի եկան անոր առջեւ : Ասոնք մի և նոյն տան մէջ բնակելով մէյմէկ տղայ ծնած էին , բայց այս երկու կանանց մին գիշերը պառկելով իւր տղուն վրայ մեռուցած էր զայն : Հիմա իւրաքանչիւրը կը պնդէր թէ ողջ տղան իւրն էր : Երբ Սողոմոն այս դատը լսեց , հրաման ըրաւ ողջ տղայն երկու կտոր ընելով



կէսը մէկ կնոջ տալ և կէսը՝ միւսին : Տղուն բուն մայրը լսելով այս վճիռը , և տեսնելով որ տղան պիտի սպանուէր , առ գլխոյն սկսաւ աղաչել որ տղան ամբողջ միւս կնկան տրուէր : Ան ատեն Սողոմոն հասկնալով որ ողջ տղուն մայրը նա էր , հրամայեց տղան անոր տալ :

Հ. Սողոմոն ինչ երեւելի գործեր ըրաւ :

Պ. Սողոմոն փիւնիկեցի ճարտարապետներու ձեռքը շատ մեծ և փառաւոր համար մը շինեց երուսաղէմ , և զո՛հ մատուցանելով Աստուծոյ

այրի կնոջ մը ալիւրն ու ձէթը բազմացուց հրաշիւք , և անոր մեռած որդին յարոյց : Իսրայելի ժողովրդեան իմացնելու համար թէ Աստուած է ճշմարիտ , և Բահաղ՝ սուտ : Անգամ մը Բահաղի բոլոր քուրմերը ժողվեց Կաթիլ լեռը , և ըստ անոնց որ Բահաղի ողջակէզ մատուցանեն , ինք ալ իհնովայի , ճշմարիտ Աստուծոյ , ողջակէզ մատուցանէ , և որոյ ողջակէզին փայտերը որ երկինքէն կրակով բորբոքին , անոր Աստուածը ճշմարիտ է : Բահաղին քուրմերը մինչեւ կէսօր աղաղակեցին իրենց աստուծոյն և բան մը չեղաւ . ետքը երբ Եղիա աղօթեց Աստուծոյ , երկինքէն կրակ իջնելով լափեց ողջակէզը : Ան ատեն ժողովուրդը հաւատաց Աստուծոյ , և Բահաղի քուրմերը ջարդուեցան :

Հ. Ա. քայաբու ո՞վ յաջորդեց :

Պ. Ա. քայաբու յաջորդեց որդին Ո. քողիա , հօրը պէս չար : Ո. քողիա երկու անգամ զօրք ղրկեց բռնել և բերել զԵղիա որ բարձր բլրոյ մը գլուխը նստած էր , բայց Եղիա երկու անգամուն եւս երկնէն կրակ իջեցաւ զօրաց վրայ : Եղիա այս հրաշալի գործերն ընելէն ետքը , իրեն յաջորդ թողլով զԵղիսէ մարգարէ , հրեղէն հաւատ երկնէ վերայ առ Յովրամաւ որ Ո. քողիայի եղբայր և յաջորդ էր :

Հ. Եղիսէ ո՞վ էր և ինչ հրաշք գործեց :

Պ. Եղիսէ Եղիայի աշակերտն էր , և Եղիայի վերանալէն ետքը անոր կրկին հոգին Եղիսէի վրայ եկաւ , այնպէս որ Եղիսէ սկսաւ Եղիայի պէս հրաշք գործել :



Այրի կնոջ մը եղն աճեցուց , ուրիշ կնոջ մը մեռած որդին կենդանացուց , քսան հայով և քիչ մը թղով շատ մարդիկ կերակրեց , Ասորուց թագաւորին նէեման անուն զօրավարին բորոտութիւնը բժշկեց լոկ լուացմամբ : Եղիսէի գլուխը կնտակ էր , և երբ անգամ մը ստահակ տըղայք կը նախատէին զեղիսէ « կնտակ » կոչելով ,



Եղիսէ անիծեց զանոնք , և իսկոյն անտառէն արշեր ելլելով պատառեցին այն տղայք :

Անգամ մը իսրայելի և Ասորուց թագաւորներուն մէջտեղ պատերազմ կար , և Եղիսէ մարգարէաբար կը յայտնէր իսրայելի թագաւորին ինչ որ կ'ընէին Ասորիք : Ասորուց թագաւորն իմանալով զայս , զօրօք պաշարեց քաղաքն ուր կը գտնուէր Եղիսէ : Եղիսէի ծառան քաղաքն Ասորիներէն պաշարուած տեսնելով շատ վախցաւ , բայց հրաշխք հրեղէն ձիեր և կառքեր տեսաւ , որ Եղիսէի օգնութեան եկած էին : Աստուած

Ասորուց զօրուն աշուրները տեսակ մը կուրու թեամբ զարկաւ , այնպէս որ կարծելով թէ ուրիշ տեղ կ'երթան՝ շիտակ իրենց թշնամոյն իսրայելի մայրաքաղաքը Սամարիա եկան Եղիսէի հետ , և երբ հոն անոնց աշուրները բացուելով տեսան որ Սամարիոյ մէջ էին՝ զարհուրեցան , բայց Եղիսէ զանոնք անվնաս իրենց տեղը դարձուց :

ՏԱՍՐ ՅԵՂԵՐՈՒՆ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ 771-740-721

Հ. իսրայելի թագաւորութեան վախճանն ինչպէս եղաւ :

Պ. Յովրամէն ետքը Եղիսէի թագաւոր իրար սպաննելով տիրեցին իսրայելի : Ասոնց մէջ երեւելիներն են Յէու , Մանայէմ , Փակէէ և Ովսէէ իսրայելի վերջին թագաւորը : Ասոնց բոլորն ալ կուսպաշտութիւն կ'ընէին , ուստի և չարիքը պակաս չէր իսրայելէն : Ասորէ ստեպ ստեպ յարձակելով կ'աւերէին երկիրը (771-740 Ն. ք. զԲր.) :

Մարգարէներն ի զուր կը խրատէին ժողովուրդը և կ'սպառնային երկրին կործանումը . իսրայէլ եւս քան զեւս ընկղմեցաւ կուսպաշտութեան մէջ , և աւելի չարացաւ : Վերջապէս Աստուած զրկեց անոնց վրայ Ասորէի կամ Նինիէի հզօր թագաւորները :

Նախ Թադմուտ (740 Ն. ք. զԲր.) փակէէի օրով իսրայելի թագաւորութեան մէկ մասին տիրեց , և ապա Սալմանասր Ովսէէի օրով (722 Ն. ք. ըզԲր.) ջնջեց իսրայելի թագաւորութիւնը , որ տեւեց



ԼԻՐ 250 տարի : Իսրայելի տաճն ցեղերն իրենց թագաւորով գերի տարուելով Մարաստան և Ասորեստանի թագաւորութեան այլ և այլ կողմերը՝ այլ եւս չդարձան իրենց երկիրը :

Հ. Իսրայելացւոց երկիրն ի՞նչ եղաւ :

Պ. Ասորեստանի թագաւորներն Ասորւոց երկրէն և Միջագետէն որոց տիրած էին՝ գաղթականներ զրկեցին Իսրայելի երկիրը : Այս գաղթականները խառնուեցան հոն մնացող Իսրայելացւոց հետ , և Սամարացի կոչուած նոր ժողովուրդ մը կազմուեցաւ , որոց կրօնքն հրէութենէ և կուսպաշտութենէ խառն էր :

ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ 975-588

Հ. Իսրայելի տաճն ցեղերը բաժնուելէն ետքը Ռորովամ ի՞նչ ըրաւ :

Պ. Ռորովամ քիչ մը ժամանակ բարեպաշտութեամբ թագաւորելէն ետքը խոտորեցաւ իւր նախորդաց ճամբէն : Ասոր օրով եգիպտացւոց Սաւսակիմ թագաւորը գալով Երուսաղէմի վրայ , ինչ մեծագին բան որ գտաւ տաճարին և պալատան մէջ՝ կողոպտելով տարաւ :

Հ. Ռորովամայ ո՞վ յաջորդեց :

Պ. Ռորովամայ յաջորդեց Աբիա՝ որոյ ընթացքը շատ գովելի չէր . բայց որդին և յաջորդը Ասա՝ Դաւթի պէս բարեպաշտ էր , և այնպէս նախանձաւոր , որ իւր մայրը Մաաքա կուսպաշտութեան համար ընկէց տիկնութենէ : Ասոր օրով եթովպացւոց Զարեհ թագաւորը եկաւ

Յուդայի վրայ , բայց Ասա յաղթեց անոր և շատ կողոպտաւ առաւ :

Հ. Ասայի յաջորդն ո՞վ եղաւ :

Պ. Որդին Յովսապատ , իւր հօրը պէս բարեպաշտ : Յովսապատու յանցանքը սա էր որ Իսրայելի ամբարիշտ թագաւորին Աքայաբու հետ խնամութիւն ըրաւ՝ անոր աղջիկը Գոթողիա իւր որդւոյն Յովրամայ կին առնելով :

Հ. Այս ամուսնութեան հետեւանքն ի՞նչ եղաւ :

Պ. Այս ամուսնութեան հետեւանքը սա եղաւ որ Յովրամ և անոր որդին և յաջորդը Ոքողիա Գոթողիայի խրատուն հետեւելով , չարութեամբ թագաւորեցին և չարաչար մեռան :

Հ. Ոքողիայի մահուանէն ետքը Գոթողիա ի՞նչ ըրաւ :

Պ. Թագաւորութեան ժառանգներն սպաննելով ինք թագաւորեց . բայց եօթը տարի ետքը Յովիթայէ քահանայապետը թագաւորեցուց Ոքողիայի կրտսեր որդին Յովսա զոր Գոթողիայի կոտորածէն ազատելով տաճարին մէջ սնուցած էր , և Գոթողիա սպանուեցաւ :

Հ. Յովսա ի՞նչպէս թագաւորեց :

Պ. Բարեպաշտութեամբ թագաւորեց ցորչափ Յովիթայէ կենդանի էր : Անոր մահուանէն ետքը չարացաւ . Յովիթայեայ որդին Զաբաբիա քարկոծել տուաւ , և ինք իւր ծառաներէն սպանուեցաւ :

Հ. Յովսաու ո՞վ յաջորդեց :

Պ. Որդին Ամասիա , և Ամասիայի յաջորդեց



որդին Ողիա : Ասոնք աղէկ սկսելով իրենց թագաւորութիւնը , յետոյ չարացան : Մանաւանդ Ողիա մեծամեծ բարեկարգութիւններ ընելէն և բաւական զօրանալէն ետքը , այն աստիճան հպարտացաւ որ քահանայութիւնն իսկ յափշտակեց :

Երբ օր մը կ'ուզէր խնկարկութիւն ընել տաճարին մէջ , յանկարծ բորոտեցաւ , ուստի և թագաւորութիւնը յանձնելով իւր որդւոյն Յովթամայ , առանձնացաւ մինչեւ իւր մահը :

Հ. Յովթամայ ինչպէս թագաւորեց :

Պ. Յովթամայ բարեպաշտութեամբ թագաւորեց , բայց անոր որդին և յաջորդը , Աքաղ , նորոգեց կռապաշտութիւնը , տաճարը փակեց , և շատ տեղեր կռատուններ շինել տուաւ Ասորոց աստուածներուն , զորս տելի զօրաւոր կը կարծէր քան իսրայելի Աստուածը Եհովա : Ասոր օրով Ասորեստանի թագաւորը Թագղաթփաղասար եկաւ և հարկատու ըրաւ Յուդայի թագաւորութիւնը :

Հ. Աքաղու յաջորդ ո՞վ եղաւ :

Պ. Որդին Եղեկիա որ աստուածապաշտութիւնը նորոգեց , և Զատիկի տօն մը կատարեց այնպիսի մեծ հանդիսիւ որոյ նմանը եղած չէր Սողոմոնէ հետէ : Եղեկիա զօրանալով սկսաւ տուրք չտալ Ասորեստանցոց , և թէպէտ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորը մեծ զօրութեամբ եկաւ անոր վրայ , չարաչար յաղթուելով ետ դարձաւ : Եղեկիա ամէն բարեկարգութիւն ընելէն ետքը ծանր հիւանդացաւ և պիտի մեռնէր , բայց Աստ-

ուած տաան և հինգ տարի ևս պարգեւեց անոր :

Հ. Եղեկիայի ո՞վ յաջորդեց :

Պ. Եղեկիայի յաջորդեց որդին Մանասէ որ հօրը հակառակ ճամբայ բռնելով ըսկըսաւ կռատուններ շինել , նոյն իսկ տաճարը կռատուն ըրաւ և իւր զաւկները կը զոհէր Ասորոց աստուծոյն Մողորայ : Այս Մանասէն է որ Եսայի մարգարէն սղոցել տուաւ :

Հ. Մանասէ ինչ վարձան ունեցաւ :

Պ. Ասորեստանի Ասորդան թագաւորին զօրավարները գալով չղթայակապ Բաբելոն տարին զՄանասէ , որ զղջալով նորէն դարձաւ իւր թագաւորութիւնը և մեծամեծ ուղղութիւններ ըրաւ :

Հ. Մանասէ ետքը ինչ եղաւ Յուդայի թագաւորութիւնը :

Պ. Մանասէ ետքը իրարու ետեւէ նստան Ամն , Յովսիա , Յովաբաղ , Յովակիմ , Յերոնիա և Սեդեկիա : Ասոնց մէջ բարեպաշտութեամբ





Նշանաւոր եղաւ Յովսիա (642-609), որ ամէն կը-  
ռապաշտական պաշտօն ջնջեց, քուրմերուն ու-  
կորներն անգամ հանելով գերեզմաններէն, այ-  
րեց, տաճարը նորոգելով մեծ շքեղութեամբ  
Զատիկ մը կատարեց: Յովսիայի օրով գտնուե-  
ցաւ տաճարին մէջ Մովսիսի օրինաց գիրքը, զոր



կարդաց Յովսիա և տեսնելով թէ որչափ խոտո-  
րած էր ազգն Աստուծոյ օրէնքէն շատ ցաւեցաւ:  
Յովսիայ գերի տարուեցաւ Եգիպտոսի Նեքա-



ւով թագաւորէն, իսկ Յերոնիա և Սեղեկիա,  
Յուդայի վերջին թագաւորը, բաբելոն գերի  
տարուեցան մեծէն Նաբուգոդոնոսորէ, որ կու-  
րացոյց զՍեղեկիա, զԵրուսաղէմ կործանեց, տա-  
ճարն այրեց, սրբազան անօթներն առաւ և Հրէից  
ազգին բոլոր մեծամեծները գերի տարաւ: Այս-  
պէս Յուդայի թագաւորութիւնը 387 տարի տե-  
ւելէն ետքը շնչուեցաւ 588 ին նախ քան զՔ.

### Մ Ա Ր Գ Ա Ր Է Ք

Հ. Թագաւորաց ժամանակ Յուդայի և Իսրա-  
յելի մէջ ինչ երեւելի մարդիկ կային:

Պ. Թագաւորաց ժամանակ Յուդայի և Իսրա-  
յելի մէջ մարդարէ կոչուած երեւելի մարդիկ կա-  
յին: Ասոնք ~~ասորացիք~~ (ներշնչեալ) մարդիկ  
ըլլալով, Աստուծոյ կամբը և հրամանները կը  
պատմէին, ժողովրդեան ապագայն կը գուշակէին,  
ոմանք նաեւ հրէի կը գործէին: Յուդայի և Իս-  
րայելի ամբարիշտ թագաւորներն սասնցմէ ո-  
մանք հալածեցին և սպանին:

Հ. Այս մարդարէներուն երեւելիները որոնք  
են:

Պ. Այս մարդարէներուն երեւելիներն են,  
Եսայի, Երեմի, Եսէիէլ և Դանիէլ: Այս չորսը «մեծ  
մարդարէներ» կը կոչուին, քանզի բաւական  
ընդարձակ գիրքեր թողած են: Կան ուրիշ երեւ-  
ելի մարդարէներ որ իրենց գիրքերուն փո-



քրդիութեան համար « փոքր մարգարէներ » կը կոչուին :

Հ. Մեծ մարգարէները երբ մարգարէացան :

Պ. Եսայի՝ Յուդայի Ասորի և Եղեկիմ թագաւորներուն ատենը (760-710 Ն. Ք. զԳր.), կը մարգարէանար, Երեմիա՝ Յուդայի թագաւորութեան Քիւշի Կաթիմի (630-580 Ն. Ք. զԳր.), Եղեկիէլ՝ Մարգարէ (650 Ն. Ք. զԳր.) գերի եղող Խորայեւայեւոց, Դանիէլ՝ Բաբելոնի մէջ (537 Ն. Ք. զԳր.) :

Հ. Փոքր մարգարէք որոնք են :

Պ. Փոքր մարգարէք են՝ Ովսէէ, Ամուս, Միքիա, Յովել, Աբդիու, Յովնան, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, Անգէ, Զաքարիա և Մաղարիա : Ասոնց առաջին ինը յառաջ են քան ըզգերութիւնն, վերջին երեքը՝ գերութենէն ետքը :

Հ. Աստուած Խորայեւայեւոց միայն մարգարէ կը զրկէր :

Պ. Աստուած Ասորեստանցոց եւս մարգարէ մը զրկեց Խորայեւէ : Ասորեստանցոց մայրաքաղաքը Նինուէ շատ հարուստ և ընդարձակ քաղաք էր : Աստուած Յովնան մարգարէին պատուիրեց երթալ քարոզել Նինուէացոց, բայց Յովնան անհնազանդ գտնուելով Աստուծոյ ձայնին, նաւը մտաւ Յովպէ երթալ, և ճամբան սաստիկ ալէկոծութիւն եղաւ, այնպէս որ նաւը պիտի ընկղմէր : Նաւին մէջ եղողները վիճակ ձգեցին գտնելու համար թէ որո՞ւ մեղաց համար Աստուած այն ալէկոծութիւնը տուած էր : Վիճակը

Յովնանու ելաւ, և Յովնան ծովը նետուեցաւ, և մեծ ձուկ մը Աստուծոյ հրամանաւ կլանելով զՅովնան երեք օր ետքը դուրս փսխեց զնա : Յովնան Նինուէ գնաց և քարոզեց, ըստ հրամանին Աստուծոյ, ըսելով, « Նինուէ երեք օրէն պիտի կործանի : » Բայց Նինուէացիք ապաշխարեցին և Աստուած ներեց անոնց և չկործանեց անոնց քաղաքը :

Յովնան տրտմելով որ իւր խօսքը չկատարուեցաւ, յոգնած կը նստէր քաղքէն դուրս : Աստուած նոյն օրը հոն դղմենի մը բուսոյց, որոյ հովանոյն տակ պառկելով Յովնան մը խիթարուեցաւ, բայց հետեւեալ առաւօտուն երբ արեւը ծագեցաւ, դղմենին չորցաւ, և Յովնան շատ ցաւեցաւ դղմենոյն համար : Անտեն Աստուած անոր ըսաւ, « Դուն դղմենոյ մը համար այսչափ գթացիր և տրտմեցար, հապա ես ի՞նչ պէս չգթայի Նինուէի, որ այնչափ անմեղներ կը բնակին : »





## 2. ԺԱՄԱՆԱԿ

ԲԱՖԵԼՈՒՆԻ ԳԵՐՈՒԹՆԵՆ ՄԻՆՁԵԻ ՔՐԻՍՏՈՍԻ  
ԳԱԼՈՒՍՏԸ (588-1 ՆԱՍ ԲԱՆ ԶԳՐ.)

Հ. Հրեայք գերութեան ատեն ինչ ըրին :

Պ. Հրէից մէջէն շատ բարեպաշտ անձինք չմոռցան երբէք իրենց հայրենի երկիրը, միշտ հոն դառնալ կը փափաքէին, մանաւանդ որ մարգարէներն արդէն ըսած էին թէ Յուդայի կամ Հրէից գերութիւնը եօթանասուն տարի պիտի տեւէր : Եւ Աստուած գերեալ Հրէից մէջ հանեց քանի մը երեւելի անձինք, որ Նաբուգոդոնոսորայ և անոր յաջորդաց, ինչպէս նաև Պարսից թագաւորներուն, շատ սիրելի եղան : Այսպէս էին Դանիէլ, Չոբաբբէլ, Նեեֆթա և Եշթա :

Հ. Դանիէլ ո՞վ էր և ինչպէս երեւելի եղաւ :

Պ. Բաբելոնացոց Նաբուգոդոնոսոր թագաւորը երուսաղեմէ գերի տարուած Հրեաներէն քանի մը աղնուական և ուշիմ պատանիներ ընտրելով՝ զանոնք Քաղդէացոց, այսինքն Բաբելոնացոց գիտուններուն իմաստութեան մէջ կը թել տուաւ : Այս պատանիներուն մէջ յանուանէ կը յիշուին Դանիէլ և անոր երեք ընկերները Սեդրաք, Միսակ և Աբեգնէթ :

Նաբուգոդոնոսոր անգամ մը երազ տեսաւ : Քաղդէացոց իմաստունները չկրցան մեկնել թագաւորին երազը, և Դանիէլ Աստուծոյ հոգւով

մեկնելով երազը սիրելի եղաւ թագաւորին և մեծ պաշտօններու հասաւ :

Հ. Դանիէլի երեք ընկերաց համար ինչ կը պատմուի :

Պ. Անգամ մը Նաբուգոդոնոսոր իւր պատկերը կանգնելով հրամայեց իւր հպատակներուն երկրպագութիւն ընել այն պատկերին, և այս հրամանին չհնազանդողը բոլորքեալ հնոցի մէջ



պիտի նետուէր : Դանիէլի երեք ընկերներն աստուածապաշտ ըլլալով չուղեցին Նաբուգոդոնոսորայ պատկերին երկրպագութիւն ընել, և բոլորքեալ հնոցին մէջ նետուելով՝ անփսաս մնացին հրաշիւք : Նաբուգոդոնոսոր տեսնելով այս հրաշքը զարմացաւ, և Հրէից և անոնց Աստուծոյն անունը փառաւորուեցաւ հեթանոսաց մէջ :

Հ. Նաբուգոդոնոսորայ մահուանէն ետքը Դանիէլ ինչ եղաւ :



Պ. Նաբուգոդոնոսորայ յաջորդներուն ատեն եւս Դանիէլ մեծ պատուոյ և պաշտօնի մէջ էր : Անգամ մը Բաբելացւոց վերջին թագաւորը Բաղտասար իւր պալատին մէջ խնճոյք ընելով, Նաբուգոդոնոսորայ ժամանակ երուսաղեմի տաճարէն առնուած սրբազան անօթներով գինի կը խմէր : Յանկարծ սրահին պատին վրայ ձեռք մը երեւնալով սա երեք բառերը գրեց . « Մահ , Բէն , Ժարե » : Դանիէլ միայն կըցաւ այս խօսքերը կարդալ , և անոնց մեկնութիւնը տուաւ թագաւորին , ըսելով թէ անոր թագաւորութիւնը պիտի չնջուէր : Եւ այնպէս եղաւ . քիչ ատենէն Պարսիկները գալով տիրեցին Բաբելոնի :

Հ. Պարսից թագաւորներուն ատենը Դանիէլի բնի պատահեցաւ :



Պ. Պարսից Դարեհ թագաւորին ատենը Պարսից իշխաններն ամբաստանեցին ըզ-Դանիէլ թէ օտար աստուած կը պաշտէր , և առիւծներու գուր մը նետել տուին զնա : Դանիէլ հրաշիւք կենդանի մնաց կառաղի առիւծներուն մէջ :

Հետեւեալ օրը Դարեհ թագաւորը որ շատ կը սիրէր զԴանիէլ տեսնելով այս հրաշքը , հա-

նեց զԴանիէլ գուրէն , և Դանիէլ առաւել բարձրացաւ :

Հ. Զօրաբարէլ , Նէեմիա և Եղրաս ո՞վ էին և ինչ ըրին :

Պ. Երուսաղեմի աւերմանէն եօթանասուն տարի ետքը , Պարսից թագաւորը կիւրոս Բաբելացւոց տէրութիւնը կործանելով բոլոր Ասիոյ տիրեց , և հրաման տուաւ Հրէից իրենց երկիրը դառնալով նորէն շինել զԵրուսաղէմ և տաճարը նաեւ Սողոմոնի տաճարին ոսկեղէն անօթներուն մեծ մասը զոր Նաբուգոդոնոսոր Բաբելոն բերած էր՝ անոնց դարձուց :

Հրէից թագաւորական յեղէն Զօրաբարէլ աւսուն իշխանի մը՝ և Յեսու անուն քահանայապետին առաջնորդութեամբ քառասուն և երկու հազար ընտանիք Հրէաստան դառնալով , սկսան տաճարին շինութիւնը , Զաբարիա և Անգէ մարգարէները կը քաջալերէին զանոնք :

Կիւրոսի յաջորդներէն Դարեհ թագաւորը ղրկեց Երուսաղէմ նաեւ զԵղրաս , որ քահանայ ըլլալով հին Մովսիսական պաշտամունքը և օրէնքը նորէն հաստատեց գերութենէ դարձող Հրէից մէջ : Եւ Դարեհի յաջորդն Արտաշէս ղըրկեց Նէեմիա անուն Հրէոյ իշխանը որ թագաւորին մատուռակն էր՝ Երուսաղեմի պարիսպները շինելու , քանդի մինչեւ ան ատեն քաղաքն անպարիսպ մնացած էր և Հրէայք չըջակայ ժողովուրդներէն , մանաւանդ Սամարայիներէն շատ նեղութիւն կը կրէին : Հրէոյք Նէեմեայ



առաջնորդութեամբ մէկ կողմանէ պարիսպը կը շինէին, միւս կողմանէ զանոնք արդեւել ուզող դրացի ազգերուն դէմ կը կռուէին :



Հ. Հրեայք ղերուսողէմ և տաճարը շինելէն ետքը ինչպէս կառավարուեցան :

Պ. Հրեայք ղերուսողէմ և տաճարը շինելէն ետքը, Պարսից հպատակ էին, բայց ունէին ազգային կառավարութիւն ընդ գլխաւորութեամբ քահանայապետաց որոց օգնական էր ազգային ժողով մը որ ծերակոյտ կը կոչուէր : Այս առանձին կառավարութիւնը տեւեց մինչեւ ի վախճան Պարսից թագաւորաց :

Հ. Բոլոր Հրեայք դարձան գերութենէ իրենց երկիրը :

Պ. Թէպէտ հիւրոսի հրամանն ընդհանուր էր, դարձողները Յուդայի ցեղէն էին, միւս ցեղերը մեծաւ մասամբ ցրուեալ մնացին Պարսից թա-

գաւորութեան այլ և այլ երկիրներուն մէջ, և Պարսից թագաւորներն ընդհանրապէս մարդասիրաբար կը վարուէին անոնց հետ, ինչպէս կը տեսնուի Եսթերայ պատմութենէն :

Հ. Եսթեր ո՞վ էր և անոր ինչ պատահեցաւ :

Պ. Եսթեր Հրեայ բարեպաշտ աղջիկ էր, և իւր հօրմէն ու մօրմէն որք մնալով, կ'ապրէր իւր ազգականին Մուրթէի քով որ Պարսից Ասուերոս կամ Քսերքսէս թագաւորին պալատն էր և մեծ հաւատարմութեամբ կը ծառայէր անոր :



Բայց Քսերքսէսի իշխաններուն մէջ Համան անուն երեւելի մարդ մը կար, որ մեծ թշնամի ըլլալով Հրէից, թագաւորէն հրաման հանել տուաւ Պարսից տէրու թեան մէջ գլտնուող բոլոր Հրեաները ջնջել : Բայց Եսթեր փրկութեամբ առջեւ

ելլելով յայտնեց անոր իւր Հրեայ ըլլալը և Համանայ դաւաճանութիւնը Հրէից դէմ : Համան կախուեցաւ և Հրեայք ազատեցան :



## ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Հ. Մինչեւ հիմա յիշուած պատմութիւններէն զատ Հրէից վրայ ուրիշ ինչ պատմութիւններ կան :

Պ. Մինչեւ հիմա յիշուած պատմութիւնները կը գտնուին Հին Կտակարանին երբայեցերէն լեզուաւ գրուած գիրքերուն մէջ : Կան Հին Կտակարանին վերաբերեալ ուրիշ քանի մը գիրքեր որ Յունարէն լեզուաւ գրուած են , ինչպէս են Տովբիթայ , Յուդթայ և Մակաբայեցւոց կոչուած գիրքերը : Այս գիրքերուն , ինչպէս նաեւ ուրիշ գիրքերու մէջ , Հրէից վերաբերեալ այլ եւ այլ մասնաւոր և ընդհանուր գէպք կը յիշուին :

Հ. Տովբիթայ գիրքին մէջ ինչ կը պատմուի :

Պ. Տովբիթ Ասորեստանի Սաղմանասար թագաւորէն գերի տարուած տասը ցեղերէն էր , և գիպուածով աչքը կորուսանելէն ետքը , ստակի կարօտ ըլլալով , իւր որդին Տուբիա առնելէ մը պահանջելու համար Մարաց երկիրը շրկել ու զեց , և երբ անոր ճամբու ընկեր կը փնտռէր , Ռափայէլ հրեշտակ երիտասարդի կերպարանօք երեւնալով ընկեր եղաւ Տուբիայի : Տուբիա ճամբան ձուկ մը բռնեց , և հրեշտակին խրատովը պահեց անոր սիրտը , լեարդն ու լեղին : Տուբիա ճամբան իւր մէկ ազգականին տունը գնաց անոր Սառա անուն աղջիկին իրեն կին առնելու : Սառա

եօթն անգամ հարս եղած էր , և ամէն անգամուն հարսանեաց առաջին գիշերը դեւ մը գալով սպաննած էր փեսան : Տուբիա Սառայի հետ պսակուելուն առաջին գիշերը , հրեշտակին խրատուն համեմատ , ձուկին լեարդն ու սիրտը կրակի վրայ ծխելով դեւը փախուց , և ինք ու աղջիկը մահուանէ ազատեցան : Վերջապէս Տուբիա ստակն առնելով դարձաւ տուն , որ նոյնպէս հրեշտակին խրատով ձկան լեղին քսեց հօրը աչուրնելուն , և աչուրները բացուեցան : Տովբիթ չգիտնալով որ Տուբիայի ուղեկիցը հրեշտակ էր , ու զեց վարձատրել զնա , բայց նա յայտնելով թէ Ռափայէլ հրեշտակն էր , և անոնց խրատներ տալով աներեւոյթ եղաւ :

Հ. Յուդթայ գիրքին մէջ ինչ կը պատմուի :

Պ. Յուդիթ գեղեցիկ և բարեպաշտ կին էր Հրէաստանի Բետուղիա քաղաքը : Այս քաղաքն Ասորեստանի Նաբուգոդոնոսոր (Ասորդան) թագաւորին զօրապետէն Հոդեփեռնէսէ պաշարուեցաւ , քաղաքացիք մեծ նեղութեան մէջ ինկան , բայց Յուդիթ Հոդեփեռնէսի բանակը գալով անոր հետ շատ քաղցրութեամբ խօսեցաւ , և գիշերը մնալով Հոդեփեռնէսի քով՝ կտրեց անոր գլուխը , երբ նա կը քնանար , և գիշերանց գալով բանակէն ելլելով եկաւ քաղաքը , և Հոդեփեռնէսի գլուխը ցուցուց Բետուղիացւոց , որք հետեւեալ առաւօտուն յարձակեցան Ասորեստանցւոց վրայ , և անոնք իմանալով իրենց զօրապետին սպաննուած ըլլալը սարսափած ցրուեցան :



Հ. Մակարայեցւոյ կոչուած գիրքերուն մէջ ինչ կը պատմուի :

Պ. Մակարայեցւոյ կոչուած գիրքերուն մէջ կը պատմուին այլ և այլ դէպք որ, Պարսից տէրութեան կործանելէն ետքը, Պողոմեան և Սելեւկեան Յոյն թագաւորաց ժամանակ պատահեցան Հրէից, ինչպէս նաեւ Մակարայեցի կոչուած Հրեայ իշխանաց գործերը :

Հ. Պողոմեան և Սելեւկեան թագաւորը ո՞վ էին :

Պ. Աղեքսանդր մեծ, Մակեդոնացւոյ թագաւորը (330 նախ քան զՔր.) Պարսից տէրութիւնը կործանելով տիրեց անոնց երկիրներուն, ուստի և Հրէաստան, իբրեւ նահանգ Պարսից, անցաւ Աղեքսանդրի : Պողոմեանը և Սելեւկեանը Աղեքսանդրի յաջորդներէն էին, և հետզհետէ տիրեցին Հրէաստանի :

Հ. Աղեքսանդր և անոր յաջորդներն ինչպէս վարուեցան Հրէից հետ :

Պ. Աղեքսանդրի համար կը պատմուի թէ, Պարսից երկիրներուն տիրելէն ետքը, հնազանդութիւն պահանջեց Հրեաներէն, և երբ անոնք զլացան, Աղեքսանդր բարկանալով սկսաւ երուսաղեմի վրայ քալել քաղաքը կործանելու մտօք : Բայց Հրէից քահանայապետը Յադդուս հանդիսիւ դիմաւորելով զԱղեքսանդր իջուց անոր բարկութիւնը :

Աղեքսանդրի մահուանէն ետքը նախ եգիպտոսի Պողոմեան կոչուած թագաւորը տիրեցին Հրէաստանի : Պողոմեանը իսկզբան սիրով վար-

ուեցան Հրէից հետ : Պողոմէոս Սոտէր հազարներով Հրեայ եգիպտոս տարաւ բնակեցուց, անոնց այլեւայլ արտօնութիւններ տալով : Պողոմէոսի որդին և յաջորդը, Պողոմէոս եղբայրասէր, նոյնպէս սիրով էր Հրէից հետ, և Աստուածաշունչին գիրքերը եբրայեցերէնէ Յունարէն թարգմանել տուաւ (275 ն. ք. զՔր.) : Այս թարգմանութիւնն է որ եօթնամանից կը կոչուի, և մեր Հայերէն Աստուածաշունչն ասկէ թարգմանուած է : Պողոմէոս հայրասէր (222-205) երուսաղեմ գալով ուղեց տաճարը մօտել, և ընդդիմութիւն տեսնելով Հրէից կողմէն, բարկացաւ և սաստիկ հալածում հանեց Հրէից դէմ : Բայց աւելի սաստիկ հալածանք կրեցին Հրեայք Սելեւկեան կոչուած թագաւորաց ժամանակ, որոց իշխանութեան անցաւ Հրէաստան 205 էն ետքը նախ քան զՔր. : Սելեւկոս փրկապատր և Անտիոքոս Եպիփան (186-164) ամէն կերպով ջանացին Հրեաները կռապաշտ ընել, բայց զանուեցան բարեպաշտ Հրեայք, ինչպէս Եղիազար անուն ծերունի քահանայ մը և եօթն եղբարք իրենց մարքը, որ մարտիրոս եղան չուղելով ուրանալ իրենց հաւատքը :

Հ. Հրեայք այս բռնութիւններէն ինչպէս ազատեցան :

Պ. Յուդա Մակարէ անուն քաջ Հրեայ մը որ Մատթթիա անուն քահանայի մը որդի էր, տեսնելով Հրէից նեղութիւնները Սելեւկեանց ձեռքէն, 25,000 հոգւով ապստամբեցաւ և յաղթեց



Անտիոքոսի , և Երուսաղէմ առնելով աստուած-  
պաշտութիւնը նորէն հաստատեց : Յուդա և ա-  
նոր եղբայրները Յովնաթան , Շմաւոն և Շմաւո-  
նի որդին Յովհաննէս Հիւրկանոս , որ միանգա-  
մայն քահանայապետ էին և Մակարեանը կոչ-  
ուեցան , իրարու յաջորդելով իբր վաթսուն տա-  
րի կռուեցան Սելւեկեանց դէմ և պաշտպանեցին  
իրենց անկախութիւնը (166-107):

Հ. Յովհաննէս Հիւրկանոսի ով յաջորդեց :

Պ. Որդին Արիստոբուլոս որ քահանայապե-  
տութեան վրայ աւելցուց նաեւ թագաւոր տիտ-  
ղոսը (107):

Հ. Հրէից այս թագաւորութիւնն ինչպէս յա-  
ռաջ գնաց և ինչպէս վերջացաւ :

Պ. Արիստոբուլոս իբր տարի մը անգթու-  
թեամբ թագաւորելէն ետքը մեռաւ , թողլով իշ-  
խանութիւնն իւր եղբորը Աղեքսանդր Յաննէոսի ,  
որուն յաջորդեց կինը Սողոմէ կամ Աղեքսանդ-  
րա , և ապա Սողոմէի որդին Հիւրկանոս Բ. :  
Հիւրկանոսի դէմ ելաւ նախ եղբայրը Արիստո-  
բուլոս , և ապա Արիստոբուլոսի որդին Անտի-  
գոնոս : Եւ մինչ Հրէից մէջ այս կռիւները կ'ըլ-  
լային , Հռոմայեցիք որ արդէն զօրացած էին  
Ասիոյ մէջ , ջնջելով Մակարեանց թագաւորութիւ-  
նը՝ Հրէաստան հարկատու նահանգ ըրին 63ին  
նախ քան զՔր. , և ապա 37ին Հերովդէս անուն  
Եղոմայեցի իշխան մը դրին թագաւոր Հրէաս-  
տանի : Այս Հերովդէս է առ որով ծնաւ Յիսուս :

## Մ Ա Ս Ն Բ.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հ. Նոր կտակարանին պատմութիւնը քանի  
գլխաւոր ժամանակ կը բաժնուի :

Պ. Նոր կտակարանին պատմութիւնը կը բաժ-  
նուի երեք գլխաւոր ժամանակ :

Ա. Ի Յնդէն Գրիստոսի մինչեւ անոր «արդ-  
նեան» (1-30 յետ Գրիստոսի) .

Բ. Ի «արդ-նեան» Գրիստոսի մինչեւ անոր հա-  
ջորդին (30-33 յետ Քր.) .

Գ. Ի հաջորդանէն մինչեւ Առաքելոց ժամանակն ընթեր-  
(33-66 յետ Քր.) :

## Ա. Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Ի ԾՆՆԴԵՆԵՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԻՆՁԵՒ

ԱՆՈՐ ՔԱՐՈՋՈՒԹԵԱՆ ՍԿԻՋԲԸ (1-30 ՅԵՏ ՔՐԻՍՏՈՍԻ)


Հ. Գրիստոսի ծնունդն ինչպէս եղաւ :

Պ. Գաբրիէլ  
հրեշտակ ար-  
դէն աւետած  
էր Կոյս Մարի-  
ամու Յիսուսի  
ծնունդը : Այն  
ատեն Հրէաս-  
տան Հռոմա-  
յեցւոց իշխա-





նութեան տակն էր, և Հռոմայեցւոյ կայսրը Օգոստոս հրաման ըրած էր աշխարհագիր ընել իւր բոլոր տէրութեան մէջ: Մարիամ և անոր այրը Յովսէփ որ Գալիլեայի Նազարէթ քաղաքը կը բռնակէին, Դաւթի ցեղէն ըլլալով աշխարհագրին մէջ մտնելու համար Դաւթի քաղաքը Բեթղեհէմ եկան: Հոն ծնաւ Յիսուս մարի մը մէջ, քանզի



Մարիամ և Յովսէփ իջեւանի տեղ չգտնելով՝ դոմի (եղերու ախոռի) մը մէջ իջեւան ըրած էին:

Հ. Յիսուսի ծնանելէն ետ-

քը ինչ պատահեցաւ:

Պ. Բեթղեհէմի մօտ բաց տեղ մը հովիւներ իրենց հօտերը կ'արածէին: Հրեշտակներ երկինքէն իջնելով աւետեցին ասոնց Յիսուսի ծնունդը, «Փառք ի բարձունս» երգելով: Հովիւներն հրեշտակներէն այս աւետիսն առնելով, եկան Բեթղեհէմ, և գտնելով զՅիսուս մանուկը մարոյն մէջ, երկրպագութիւն ըրին անոր:

Հ. Ուրիշ ո՞վ եկաւ Բեթղեհէմ Յիսուս մանուկը տեսնելու:

Պ. Արեւելքի կողմը երեք մոգեր աստղ մը տեսնելով իմացան թէ մեծ թագաւոր մը ծնած էր, և անոր երկրպագութիւն ընելու համար ե-

րուսաղէմ գալով հարցուցին թէ ուր էր Հրէից նորածին արքայն: Հերովդէս որ անատեն Հռոմայեցւոյ կողմէն կը թագաւորէր Հրէաստանի վրայ,



մոգերէն լսելով թէ Հրէից թագաւոր մը ծնած էր, խռովեցաւ, կարծելով թէ Յիսուս Հրէից մարմնաւոր թագաւորը պիտի ըլլար, և ուզելով կորսնցնել զնա, և տեղեկանալով թէ Քրիստոս Բեթղեհէմ պիտի ծնանէր, Բեթղեհէմի սահմանին մէջ երկու տարուրնէ ի վեր բոլոր տղայք Զորեւ տուաւ, յուսալով թէ Յիսուս մանուկն ալ այն մեռնողներուն հետ պիտի կորսուէր: Բայց Յովսէփ հրեշտակէն իմանալով որ Հերովդէս զՅիսուս կորուսանել կը խորհէր, առաւ մանուկը և անոր մայրը, Եգիպտոս գնաց, և Հերովդէսի մահուանէն ետքը նորէն Նաւրէթ գարձաւ:





Հ. Յիսուսի եգիպտոս երթալէն առաջ ինչ պատահեցաւ :



Յիսուսի տղան թրիատել , ինչպէս որ մենք հիմա կը մկրտենք , և քառասուն օրուանը տաճար տանել : Տաճարին մէջ Սիմէոն անուն ծերունի մը գիրկն առնելով զՅիսուս օրհնեց , ըսաւ թէ նա էր մարդոց փրկիչը , և մարգարէաբար գուշակեց թէ Յիսուս չարչարուելով

պիտի մեռնէր : Այս Սիմէոն ծերունին Աստուծոյ հրամանն առած էր չմեռնիլ , բայց եթէ զՔրիստոս տեսնելէն ետքը :



Հ. Յիսուս երբ դարձաւ եգիպտոսէ , ուր բնակեցաւ :

Պ. Հերովդէսի մահուանէն ետքը Աստուծոյ հրեշտակը նորէն երեւնալով Յովսէփայ , պատուիրեց դառնալ Հրէաստան : Բայց որովհետեւ Հերովդէսի որդին Արքեղայոս թագաւորած էր Հրէաստանի , Յովսէփ վախնալով գնաց բնակեցաւ Գալիլէայի Նազարէթ քաղաքը որ Արքեղայոսի իշխանութենէն դուրս էր :

Հ. Յիսուս մինչեւ իւր քարոզութիւնն սկսելը Նազարէթի մէջ ինչպէս կեանք անցուց , և այն միջոցին ինչ պատահեցաւ :

Պ. Յիսուս շնորհօք և իմաստութեամբ կը մեծնար , և հաշտեցաւ էր իւր ծնողաց : Անոր ծնողքը Մարիամ և Յովսէփ , ըստ սովորութեան բարեպաշտ Հրէից , ամէն տարի Զառէ տօնին երուսաղէմ կ'երթային Տաճարը : Անգամ մը այսպէս Զատիկի ատեն , երբ անոր ծնողքը երուսաղէմէ կը դառնային , Յիսուս երուսաղէմ մնաց : Մարիամ և Յովսէփ կը կարծէին թէ Յիսուս միւս ուղեւորներուն հետ էր , բայց ետքը չտեսնելով



դնա ուղեկցաց հետ, սկսան փնտռել, և երեք  
օր ետքը գտան զՅիսուս որ խրուսաղեմի տաճա-



րին մէջ նստած Հրէից վարդապետներուն հետ  
կը խօսէր մեծ իմաստութեամբ և կը զարմացու-  
նէր զանոնք :




#### Բ. ԺԱՄԱՆԱԿ

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՁԵՒ ԱՆՈՐ  
ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ (30-33 Յ. ՔԲ.)

Հ. Յիսուս իւր քարոզութիւնն ինչպէս սկսաւ :  
Պ. Երբ Յիսուս քարոզութեան պիտի սկսէր,  
Գալիլեայէն Յարութեան եկաւ առ Յուդէա Մարտի-  
անկէ մկրտուելու, և մկրտուելէն ետքը երկինք  
բացուեցաւ, Հոգին Սուրբ աղանձոյ կերպա-

րանքով իջաւ անոր վրայ, և երկինքէն ձայն ե-  
կաւ թէ Մատուծոյ սիրելի որդին էր Յիսուս :  
Հ. Յովհաննէս Մկրտիչ ո՞վ էր :  
Պ. Յովհաննէս Մկրտիչ Զաւրէ անուն քահա-



նայի մը որդին էր, և անոր մօրը անունը Եւ-  
ֆէն էր : Յովհաննէս իրր հինգ ամիս յառաջ  
քան զՅիսուս իւր պառաւ մօրմէն հրաշիւք ծնա-  
նելէն ետքը երբ մեծցաւ, սկսաւ քարոզութիւն  
ընել՝ մարդիկ ապաշխարութեան յորդորելով և  
մկրտելով, աւետելով նաև Քրիստոսի գալուստը :  
Հ. Յիսուս մկրտուելէն ետքը ինչ բռաւ :  
Պ. Մնապատ զնաց ուր քառասուն օր և քա-



առտուն գիշեր ոչ կերաւ և ոչ խմեց , և փորձը-  
ուեցաւ սատանայէն :

Հ. Յիսուս ինչպէս փորձուեցաւ սատանայէն :

Պ. Նախ սատանան առաջարկեց Յիսուսի իւր  
աստուածային զօրութիւնը ցուցնել քարերը հաց  
ընելով , և երբ Յիսուս մերժեց անոր առաջար-  
կութիւնը , սատանան տաճարին աշտարակին  
ծայրը հանելով զՅիսուս , յորդորեց զնա ինքզինք  
վար նետել , ըսելով թէ հրեշտակները ձեռքի  
վրայ պիտի բռնէին զնա : Սատանան այս ան-  
գամ եւս մերժուելով , բարձր լերան մը գլուխը  
հանեց զՅիսուս , և աշխարհիս բոլոր թագաւո-  
րութիւնները ցուցնելով խոստացաւ անոր տալ  
զանոնք , եթէ Յիսուս իյնալով երկրպագութիւն  
ընէր սատանային : Անատեն Յիսուս վռնտեց սա-  
տանան իւր քովէն , և հրեշտակներ եկան և  
սկսան ծառայութիւն ընել Յիսուսի :

Հ. Յիսուս իւր փորձութիւնը կատարելէն ետ-  
քը ինչ ըրաւ :

Պ. Սկսաւ իրեն աշակերտներ ընտրել երկու-  
տասան անձինք որ առաքեալ կոչուեցան և միշտ  
Յիսուսի հետ կը պտըտէին : Յիսուս ունէր նաեւ  
եօթանասուն աշակերտ զորս այլեւայլ տեղեր կը  
ղրկէր Հրէից քարոզելու :

Հ. Երկոտասան առաքեալք ինչպիսի մարդիկ  
էին , և ինչ են անոնց անունները :

Պ. Երկոտասան առաքելոց շատերն անուս մար-  
դիկ , ոմանք ձկնորս էին : Անոնց անուններն են՝  
Պետրոս և Անդրէաս անոր եղբայրը , Յակոբոս և

Յովհաննէս երկու եղբարք , Փիլիպպոս , Բար-  
թոլոմէոս , Մատթէոս մաքսաւոր , Թովմաս ,  
Յակոբոս Ալփեայ , Թադէոս , Սիմոն Կանանացի  
և Յուդա Իսկարիովտացի :

Հ. Յիսուս առաքեալներն ընտրելէն ետքը  
ինչպէս սկսաւ իւր քարոզութիւնը :

Պ. Յիսուս առաքեալներն ընտրելէն ետքը լեռ-  
մը ելաւ , և առաքելոց և ուրիշ բաղմութեան  
առջեւ խօսեցաւ իւր առաջին քարոզը , որ Լե-  
րան քարոզ կ'ըսուի , ուր երանի տուաւ հոգւով  
ազքատներուն , սգաւորներուն , հեղերուն , ար-  
դարութիւն սիրողներուն , ողորմածներուն , խա-  
ղաղարարներուն և ճշմարտութեան համար հա-  
լածանք և նախատինք կրողներուն :

Հ. Յիսուս որչափ ատեն քարոզեց և ինչ սոր-  
վեցուց :

Պ. Յիսուս իբր երեք տարի բոլոր Հրէաստա-  
նի և Գալիլեայի մէջ քարոզելով , սորվեցուց  
նախ թէ Աստուած մեր գլխի վրայ է որ մեզ ա-  
մէն կերպով կը խնամէ , այնպէս որ մեր գլխէն  
հոգւոյ անգամ չիյնար առանց անոր հրամանին :  
Այսպէս Յիսուս ուզեց յորդորել մեզ որ բոլորու-  
վին Աստուծոյ ապաւինինք , և ասոր համար Տե-  
րակոստոս սորվեցուց որ է Հոյ Բեր :

Երկրորդ սորվեցուց թէ զմեզ փրկելու համար  
աշխարհ եկած էր , և թէ պիտի մեռնէր խա-  
չին վրայ մեզ Աստուծոյ հետ հաշտեցունելու  
համար , բայց ետքը յարութիւն առնելով երկինք  
պիտի համբառնար Աստուծոյ քով մեզի համար



բարեխօս ըլլալու, և ի կատարածի աշխարհիս պիտի գար արդարներն ու մեղաւորները դատելու:

Երրորդ սորվեցուց թէ մենք իբրեւ, իբրեւ իբրեւ, և մանաւանդ իրարու յանդէմ և պատասխաններէն ենք, եթէ կ'ուզենք որ նաեւ Աստուած մեր յանցանքները ներէ: Այս գթութեան և ներողութեան վրայ Յիսուս քանի մը շատ գեղեցիկ և ազդու առակներ խօսած է:

Հ. Ի՞նչ են այս առակները:

Պ. Այս առակներն են՝

1. Երկու պարտապանաց,
2. Բարի Սամարացւոյն,
3. Մեծատան և Ղազարու և
4. Անիրաւ դատաւորին առակները:

Հ. Ի՞նչ է երկու պարտապանաց առակը:

Պ. Թագաւոր մը, ըսաւ Յիսուս, իւր ծառաներէն մէկուն տան հազար քանքարի պարտքը ներեց, իսկ ծառան իւր ծառայակիցներէն մին հարիւր դահեկանի համար բանտը դնել տուաւ: Երբ թագաւորն իմացաւ անոր անգթութիւնը, կապել տալով այն անիրաւ ծառան, բոլոր պարտքերը հատուցանել տուաւ:

Հ. Ի՞նչ է բարի Սամարացւոյն առակը:

Պ. Մարդ մը, ըսաւ, երբ երուսաղեմէ երիւքով կ'երթար, աւազակներու ձեռք ինկաւ, որ վիրաւորեցին զնա և կիսամահ թողին: Փահաւայ մը և Ղեւտացի մը այն ճամբէն անցնելով տեսան վիրաւորը և զանց ըրին: Յետոյ Սամարացի մը անցնելով, երբ տեսաւ վիրաւորը, վեր-

ցուց և պանդուկ մը տանելով դարմանել տուաւ զնա իւր ստակով:

Հ. Ի՞նչ է մեծատան և Ղազարու առակը:

Պ. Մեծատուն, այսինքն՝ հարուստ մարդ մը փափուկ հանդերձներ կը հագնէր և միշտ աղէկ կ'ուտէր և կը խմէր: Անոր դրան տակ Ղազարոս անուն աղքատ մը կար այնպէս թշուառ որ շուները կու գային կը լիզէին անոր վէրքերը: Մեծա-



տունն ամենեւին չէր ողորմեր այս աղքատին, որ անոր սեղանէն ինկած փշրանօք միայն կ'ապրէր: Երկուքն ալ մեռան: Մեծատունը որ դժոխք դնաց՝ աչքը վերցնելով տեսաւ զՂազարոս Աբրահամու դուռը, և սկսաւ աղաչել ըսելով. Հայր Աբրահամ, զրկէ զՂազարոս որ գոնէ մատին ծայրովը քիչ մը ջուր կաթեցնէ լեզուիս, քանզի կը պապակիմ: Ոչ, ըսաւ Աբրահամ, Ղազարոս չի կրնար դալ. մեր և ձեր մէջտեղ մեծ վիճ կայ: Դուն աշխարհի վրայ ամէն բարիք վաճեցիր, և Ղազարոս տանջուեցաւ. հիմա դուն



տանջուելու ես, և Ղազարոս վայելելու է:

Հ. Ի՞նչ է անիրաւ դատաւորին առակը:

Պ. Դատաւոր մը կար, ըսաւ Յիսուս, որ Աստուծոյն չէր վախնար և մարդէ չէր ամօնար, և այրի կին մը իւր դատին համար ամէն օր կու գար և կը թախանձէր դատաւորը, որ վերջապէս ձանձրանալով տեսաւ անոր դատը: Եթէ, ըսաւ Յիսուս, անիրաւ դատաւորը չդիմացաւ այրւոյն թախանձանաց, որչափ եւս առաւել Աստուած պիտի լսէ զրկելոց աղաչանաց:

Հ. Յիսուս այս առակներն միայն ըսաւ:

Պ. Յիսուս ունի ուրիշ խրատական առակներ, ինչպիսի են՝

1. Սերմանացանին,

2. Որոմանց,

3. Անառակին,

4. Տասն կուսանաց,

5. Մշակներուն, և

6. Քանքարներու առակները, որ հոգեւոր և բարոյական ճշմարտութիւններ կը պարունակեն:

Հ. Ի՞նչ է սերմանացանին առակը:

Պ. Սերմանացան մը, ըսաւ Յիսուս, ելաւ սերմ ցանել, և սերմերէն մաս մը ինկաւ համբու վրայ և թռչունները կերան. ուրիշ մաս մը ինկաւ քարուտ տեղեր, և չկրնալով արմատ ձգել՝ չորցաւ. մաս մ'ալ փուշերու մէջ ինկաւ և չկրցաւ պտուղ տալ, վասն զի փուշերը խեղդեցին. աղէկ երկիր ինկած սերմանք միայն պտուղ տուին: Ասով հասկցնել ուզեց Յիսուս թէ Աւե-

տարանին քարոզութիւնը շատերուն սրտին մէջ այլեւայլ պատճառներով անպտուղ կը մնայ, քիչերուն մէջ միայն պտուղ կը բերէ:

Հ. Ի՞նչ է որոմանց առակը:

Պ. Մարդ մը, ըսաւ, իւր արտին մէջ աղէկ սերմ ցանեց, և թշնամին գալով որոմ ցանեց այն աղէկ սերման մէջ: Երբ սերմը բուսաւ, ծառաները տեսնելով որոմը, ուղեցին որոմը քաղելով այրել, բայց արտին տէրը հրամայեց թողուլ այնպէս մինչեւ հնձոց ժամանակը և անատեն որոմը ցորենէն զատելով այրել և ցորենը շտամարանը դնել: Այս առակով Քրիստոս ուղեց հասկցնել թէ իւր եկեղեցւոյն մէջ չար և մոլար մարդիկ պիտի գտնուին մինչեւ աշխարհիս վերջը, և անատեն չարերը պիտի զատուին բարիներէն, բարիները պիտի ընդունուին արքայութիւն, և չարերը պիտի նետուին դժոխք:

Հ. Ի՞նչ է անառակին առակը:

Պ. Մարդ մը, ըսաւ, երկու որդի ունէր: Կրտսերը հօրմէն իւր ժառանգութիւնները առնելով գընաց անառակու-





Թեամբ վասնեց բոլորը, և երբ անօթի մնաց, գղջալով դարձաւ իւր հօրը, և հայրը համբուրելով ընկալաւ անառակ որդին և մեծ խնճոյք ըրաւ: Այս առակով հասկցնել ուզեց Յիսուս թէ Աստուած իբրեւ գթած հայր պատրաստ է միշտ ընդունել մեղաւորները որ ապաշխարելով կը դառնար անոր:

Հ. Ի՞նչ է տաճան կուսանաց առակը:

Պ. Տասը կուսանք, ըսաւ, իրենց լապտերներն առնելով փեսան դիմաւորելու գացին: Ասոնց հինգն իմաստուն էին, և հինգը՝ յիմար: Իմաստուններն իրենց հետ ձէթ առին, իսկ յիմարները՝ չառին: Երբ փեսան ուշացաւ, ամէնքը քնացան: Կէս գիշերուն ձայն ելաւ թէ Սհա փեսան կու գայ: Կուսանք ելան վառել իրենց լապտերները, և յիմարները որ ձէթ չունէին՝ իմաստուններէն ձէթ ուզեցին, բայց անոնք չտուին ըսելով թէ իրենց ձէթն հաղիւ իրենց կը բաւէր: Փեսան եկաւ, և իմաստուն կուսանք որոց լապտերները վառած էին՝ փեսան դիմաւորելով անոր հետ մտան հարսանեաց տունը, դուռները դոցուեցան, և յիմար կուսանք դուրս մնացին:

Այս առակը կը խրատէ զմեզ հաւատով և բարի գործովք միշտ պատրաստ գտնուիլ քրիստոսի առջեւ երեւնալու ի ժամու մահուան:

Հ. Ի՞նչ է մշակներուն առակը:

Պ. Մարդ մը առաւօտուն ելաւ իւր այգւոյն համար մշակ փնտռել, և տեսնելով քանի մը մշակ, զրկեց զանոնք այգին: Երրորդ ժամուն դարձաւ

եալ ելաւ, և գտնելով ուրիշ մշակներ, զանոնք եւս զրկեց: Նոյնպէս ըրաւ վեցերորդ և իններորդ ժամուն, և երեկոյին ամենուն հաւասար վարձք տուաւ: Այս առակով հասկցնել ուզեց Յիսուս թէ, Աստուած իրեն թէ կանուխ և թէ ուշ ծառայել սկսողները, բաւական է որ հաւատարմութեամբ ծառայեն, հաւասար կը վարձատրէ: Ուստի ոչ որ իւր տարիքը պատճառելով ետ կենալու է բարեպաշտ կեանք վարելու սկսել:

Հ. Ի՞նչ է քանքարներուն առակը:

Պ. Տէր մը որ հեռու երկիր մը կ'երթար, կանչելով իւր ծառաները, միոյն հինգ քանքար տուաւ, ուրիշի մը՝ երկու, դարձեալ ուրիշի մը՝ մի քանքար, և պատուիրեց այն քանքարներն յարգել (բանեցունել), վասն զի յետոյ տոկոսեօք պիտի պահանջէր: Հինգ քանքար առնողն յարգեց իրեն յանձնուած ստակը և հնգին վրայ հինգ եւս շահեցաւ, երկու քանքար առնողը նոյնպէս կրկին ըրաւ իւր քանքարները. իսկ մի քանքար առնողը ծածկեց իւր քանքարը և բան մը չշահեցաւ: Երբ տէրը դարձաւ, իրենց քանքարները յարգող և բազմացնող ծառաները գովեց և անոնց մեծամեծ պաշտօններ տուաւ, իսկ իւր քանքարը թաքուցանող ծառան պատժեց: Ասով քրիստոս կը խրատէ զմեզ Աստուծոյ մեզի տրուած ձիրքերը, որչափ և փոքր ըլլան, յարգելով օգտակար ընել թէ՛ մեզ և թէ՛ այլոց, ապա թէ ոչ իբրեւ անպիտան ծառայ կը դատապարտուինք:



Հ. Յիսուս քարոզութիւն միայն կ'ընէր :

Պ. Յիսուս ոչ միայն ճշմարտութիւն կը քարոզէր մարդոց , այլեւ հրաշք գործելով քաւէ՛ կ'ընէր ամենուն , հիւանդներ , անդամալոյծներ , կոյրեր և ամէն տեսակ ցաւազարներ բժշկելով , դեւեր հանելով և մեռելներ յարուցանելով :

Հ. Յիսուսէ բժշկուած հիւանդներէն , անդամալոյծներէն և կոյրերէն որո՞նք կը յիշուին մասնաւորապէս :

Պ. Յիսուս ամէն տեսակ ցաւազար կը բժշկէր . գլխաւորները որ յանուանէ կը յիշուին աւետարաններուն մէջ՝ ասոնք են .

1. Կափառնայումցի տղան .
2. Չեղունէն կախուած անդամալոյծը .
3. Տեռատես կինը .
4. Երեսունեւութամեայ անդամալոյծը .
5. Տասն բորոտները .
6. Բարտիմէոս կոյրը .
7. Ի ծնէ կոյրը :

Հ. Կափառնայումցի տղան ո՞վ էր և ի՞նչպէս բժշկուեցաւ :

Պ. Այս տղան Կափառնայումի մէջ երեւելի իշխանի մը որդի էր : Հայրը Գալիլեա եկած էր և կ'աղաչէր Յիսուսի Կափառնայում երթալով՝ տղան բժշկել : Յիսուս անոր ըսաւ . « Երթ , որդին քո կենդանի է , » և նոյն ժամայն բժշկեցաւ տղան , այնպէս որ երբ հայրը տուն եկաւ , գըտաւ որ տղան բժշկուած էր այն վայրկեանին որ Յիսուս ըսաւ . « Երթ , որդին քո կենդանի է » :

Հ. Չեղունէն կախուած անդամալոյծն ո՞վ էր և ի՞նչպէս բժշկուեցաւ :

Պ. Այս անդամալոյծը մահճով բերին Յիսուսի որ տան մը մէջ կը քարոզէր : Բազմութենէն չկրնալով ներս մտնանել հիւանդը , սենեկին ուր Յիսուս կը գտնուէր՝ ձեղունը բանալով՝ անդամալոյծը մահճովն հանդերձ իջուցին Յիսուսի առջեւ : « Որդեակ , թողեալ լիցին քեզ մեղք քո , » ըսաւ Յիսուս անդամալուծին : Մինչ Հրեայք կը դատապարտէին զՅիսուս իրենց մոլեքն իբրեւ հայհոյիչ , Յիսուս ըսաւ անդամալուծին . « Արի , առ դմահիծս քո և երթ . » և խօսյն անդամալոյծը ելաւ , և մահիծն առնելով գնաց : Այսպէս զՅիսուս իբրեւ հայհոյիչ մեղադրողները զարմացան և ամչցան :

Հ. Տեռատես կինն ո՞վ էր և ի՞նչպէս բժշկուեցաւ :

Պ. Տեռատեսութիւնը հիւանդութիւն է : Այս հիւանդութիւնն ունեցողէն արիւն կ'երթայ : Այս կինը որ տասուերկու տարիէ հետէ ունէր այս հիւանդութիւնը , և շատ բժիշկներու դիմելով դարման չէր գտած՝ ճամբան գալտ Յիսուսի հանդերձին դպչելով միայն ողջացաւ :

Հ. Երեսուն և ութամեայ անդամալոյծն ո՞վ էր և ի՞նչպէս բժշկուեցաւ :

Պ. Երուսաղէմ Պրոբատիկէ անուն աւազան մը կար , և հրեշտակ մը տարին անգամ մը իջնելով կը խառնէր ջուրը , և այն միջոցին ով որ առաջ կը նետուէր աւազանը՝ կը բժշկուէր իւր հիւան-



դուժենէն : Անդամալոյծ մը՝ երեսուն և ութ տարիէ հետէ կու գար աւազանը նետուելու , բայց օգնական չունենալով չէր կրնար : Յիսուս այս մարդուն ըսաւ . « Արի , առ զմահիճս քո և գնա . » և անդամալոյծն իսկոյն առողջանալով առաւ մահիճը և գնաց :

Հ. Տասն բորոտներն ո՞վ էին և ինչպէս բժշկուեցան :

Պ. Երբ Յիսուս անգամ մը Սամարիոյ մօտ տեղէ մը կ'անցնէր , տասն բորոտք հեռուէն սկսան աղաղակել . « Յիսուս , ողորմեաց մեզ : » Յիսուս բժշկեց զանոնք , և պատուիրեց քահանաներուն երթալ և Մովսիսական օրէնքէն պահանջուած արարողութիւնը կատարել : Ասոնց մին որ Սամարացի էր՝ յետոյ եկաւ և շնորհակալ եղաւ Յիսուսի , և Յիսուս ըսաւ անոր . « Երթ , հաւատք քո կեցուցին զքեզ : » Այս խօսքով Յիսուս անոր նաև հոգեւոր բժշկութիւն տուաւ :

Հ. Բարտիմէոս ո՞վ էր և ինչպէս բժշկուեցաւ :

Պ. Այս մարդը ճամբուն վրայ նստելով կը մուրար և ամենուն ծանօթ էր : Օր մը լսելով թէ Յիսուս կ'անցնէր այն ճամբէն , եկաւ և բժշկութիւն կը խնդրէր : Յիսուս անոր ըսաւ . « Հաւատք քո կեցուցին զքեզ , » և իսկոյն կուրին աչուրները բացուեցան :

Հ. Ի ծնէ կոյրն ո՞վ էր և ինչպէս բժշկուեցաւ :

Պ. Մօրմէն կոյր ծնած մուրացկան էր : Յիսուս այս կոյրը զարմանալի կերպով մը բժշկեց : Գետնէն հող առաւ և թրջելով թրջելով կուրին աչքին

ծեփեց , և պատուիրեց երթալ լուացուիլ Սելովամ կոչուած աղբիւրը : Կոյրը կատարեց այս պատուէրը և սկսաւ տեսնել :

Հ. Դիւահար ինչ էր , և Յիսուսէ բժշկուած որ դիւահարները կը յիշուին յանուանէ :

Պ. Դիւահար կը կոչուէին անատեն դեւերէ բռնուած մարդիկ : Յիսուս ասոնցմէ եւս շատերը կը բժշկէր : Նշանաւոր է Քանանացի կնոջ աղջկան և գերեզմանոցին դիւահարաց բժշկութիւնը :

Հ. Քանանացի կինն ո՞վ էր և ինչպէս բժշկուեցաւ անոր դուստրը :

Պ. Այս կինը թէպէտ կռապաշտ Քանանացի էր , կատարեալ հաւատով Յիսուսի ետեւէն կ'աղաղակէր , « Որդի Դաւթի , ողորմեաց ինձ , դուստր իմ չարաչար այսահարի : » Յիսուս ի սկզբան պատասխան չտուաւ անոր : Աշակերտները կ'աղաչէին , և Յիսուս ըսաւ անոնց . « Ես եկի առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի : » Կինը եւս աւելի կ'աղաչէր : « Ոչ է պարտ , » ըսաւ Յիսուս անոր , « առնուլ զհաց մանկանց և արկանել շանց : » « Տէր , » ըսաւ կինը խոնարհութեամբ առանց վշտանալու որ Յիսուս չան նմանցուց զնա , « և շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ Տեառն իւրեանց : » Յիսուս որ հեթանոս կնոջ հաւատքը յայտնելու համար խստիւ վարուած էր անոր հետ , ըսաւ վերջապէս . « Ո՞վ կին դու , մեծ են հաւատք քո , եղիցի քեզ որպէս և կամիս . » և իսկոյն բժշկուեցաւ անոր դիւահար դուստրը :



Հ. Գերեզմաննոցին դիւահարներն ո՞վ էին և ի՞նչպէս բժշկուեցան :

Պ. Ասոնք երկու դիւահար էին որ գերեզմանները կը բնակէին , և այնպէս կատաղի էին որ շղթաներով անգամ հնար չէր կապել զանոնք , վասն զի անոնց մէջ լէգէոն մը դեւ մտած էր : Հոն ծովուն վրայ բարձր տեղ մը խողերու երամակ մը կ'արածէր : Դեւերն Յիսուսի հրամանաւ այն երկու մարդէն ելլելով խողերուն մէջ մտան , և բոլոր երամակն այն բարձր տեղէն ծովը թափեցաւ :

Հ. Ո՞վ էր այն կինը որմէ Յիսուս եօթն դեւ հանեց :


Պ. Մարիամ Մագդաղենացի :

Հ. Ո՞ր անձինք կը յիշուին յանուանէ որոց Յիսուս յարութիւն տուաւ :

Պ. Յայրոսի աղջիկը , Այրի կնոջ որդին և Յիսուսի բարեկամը Ղազարոս :

Հ. Յայրոսի աղջկան վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. Յայրոս Հրէից իշխան էր : Ասոր երկոտասանամեայ միամօր դուստրը հիւանդացած էր , և հայրը գալով կ'աղաչէր Յիսուսի շուտով հասնիլ , վասն զի մեռնելու մօտ էր աղջիկը : Մինչդեռ Յիսուս ճամբան էր , լուր եկաւ Յայրոսի . « Մեռաւ դուստրն քո , մի աշխատ առնէր ըզվարդապետդ : » Յիսուս ըսաւ Յայրոսի , « Մի երկնչիր , բայց միայն հաւատա : » Երբ տուն գալով մեռելին սենեակը մտան , Յիսուս բազմութիւնը դուրս հանեց , ըսելով , « Ոչ է մեռեալ աղջիկդ , այլ ննջէ , » և Հրէարէն ըսաւ աղջ-



կան , « Տալիթա , կումի , » որ ըսել է , « Ա՛ղջիկ , ել , » և իսկոյն ելաւ աղջիկը :

Հ. Այրի կնոջ տղուն վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. Երբ անգամ մը Յիսուս Նային կոչուած քաղաքը կը մտնէր , տեսաւ որ քաղքին դուռնէն դուրս մեռել մը կը հանէին : Մեռելն այրի կընոջ մը միամօր որդին էր : Յիսուս գթալով տղուն մօրը , մօտեցաւ դագաղին և ըսաւ , « Որդեակ , արի . » և իսկոյն մեռելը կանգնեցաւ դագաղին մէջ :

Հ. Ղազարոսի վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. Ղազարոս Ս .

Երուսաղեմի մօտ Բեթանիա կոչուած գիւղը կը բնակէր : Յիսուս շատ կը սիրէր զՂազարոս և աւնոր քոյրերը Մարիամ և Մարթա





Երբ իմացաւ թէ Ղազարոս հիւանդ էր, աշակերտներուն հետ ճամբայ ելաւ Բեթանիա երթալ: Ղազարոս այն միջոցին մեռաւ: Երբ Յիսուս Բեթանիա եկաւ. Մարիամ և Մարթա լալով Յիսուսի դիմացը ելան: Ղազարոսի մահուան վրայ չորս օր անցած էր, և Յիսուս գերեզմանը երթալով, բարձր ձայնով կանչեց. « Ղազարէ, արի, ել արտաքս »: Իսկոյն մեռեալը պատանքով դուրս ելաւ: Բոլոր ժողովուրդը որ հոն էին՝ տեսնելով այս հրաշքը զարմացան, բայց Հրէից վարդապետները որ թշնամի էին Յիսուսի, խորհուրդ ըրին սպաննել զՅիսուս:

Հ. Յիսուս ուրիշ ինչ հրաշք ունի:

Պ. Յիսուս քանի մը հրաշք եւս ըրած է իւր աստուածային զօրութիւնը ցուցնելու համար, ինչպէս են՝

1. Զուրը գինիի փոխելը.
2. Զուկերուն հրաշքը.
3. Ծովին սաստելը.
4. Հացը բազմացունելը.
5. Ծովին վրայ քալելը.
6. Սատերին հրաշքը:

Հ. Յիսուս երբ շուրջ գինիի փոխեց:

Պ. Յիսուս իւր մօրը և աշակերտներուն հետ Գալիլեայի կանաքաղաքը հարսնիք հրաւիրուած էր: Երբ գինին սակսեցաւ, մայրը գալով Յիսուսի իմացուց: Հարսանեաց տունը վեց մեծ թակոյկներ (+ի-ի) կային, Յիսուս հրամայեց այն թակոյկները շրով լեցունել և տակարապետին

տանել: Տակարապետը ճաշակելով գտաւ որ շուրջ պատուական գինւոյ փոխուած էր: Յիսուսի հրաշքներուն առաջինն էր այս:

Հ. Զուկերուն հրաշքը ո՞րն է:

Պ. Յիսուս անգամ մը Գալիլեայի ծովուն մէջ Պետրոսի նաւը մտնելով ցամաքը կեցող բազմաթիւ յետնորդներէն ետքը, հրամայեց Պետրոսի ուսկանները ծովը նետել: Պետրոս և ընկերներն այն գիշերը մինչեւ առաւօտ աշխատած էին առանց ձուկ մը բռնելու, բայց անսալով Յիսուսի՝ ուսկանները նետեցին, և իսկոյն այնչափ ձուկ բռնուեցաւ որ մեծ դժուարութեամբ կրցան ուսկանները քաշել:

Հ. Յիսուս երբ ծովին սաստեց:

Պ. Երբ անգամ մը Յիսուս աշակերտներուն հետ նաւով կ'երթար Գալիլեայի ծովուն մէջ,



սաստիկ ալէկոծութիւն եղաւ, և Յիսուս կը քնանար: Աշակերտները վախնալով արթնցու-



ցին զՅիսուս , որ ելլելով սաստեց ծովուն , և իսկոյն հանդարտեցաւ ծովը : Նաւին մարդիկը զարմանալով կ'ըսէին , « Ո՞վ է սա զի հոգմբ և ծով հնազանդին սմա : »

Հ. Յիսուս հացը ե՞րբ բազմացուց :

Պ. Յիսուս շատ անգամ անապատ տեղեր կ'երթար քարոզել , և շատ ժողովուրդ անոր ետեւէն կ'երթային մտիկ ընել քարոզութիւնը : Անգամ մը Յիսուս տեսնելով որ ժողովուրդն աւօթի էր , հրամայեց աշակերտներուն հաց տալ բազմութեան , բայց անոնք հինգ հաց և երկու ձուկ միայն ունէին : Անատեն Յիսուս այն հինգ հացը և երկու ձուկն այնչափ բազմացուց որ հինգ հազար հոգի կերան և յագեցան , և կըտորներէն աւելցան քանի մը զամբիւղ : Ուրիշ անգամ մը Յիսուս եօթը հացով չորս հազար մարդ կերակրեց :

Հ. Ծովին վրայ քալելուն հրաշքը ի՞նչ է :



Պ. Յիսուս հացը բազմացնելէն ետքը լեռը ելաւ , և աշակերտներն արձակեց նաւով : Մինչանոնք դեռ ծովուն վրայ էին , սաստիկ ալէկոծութիւն ելաւ , և այն միջոցին աշակերտները տեսնելով որ ծովուն վրայ մարդ մը քալելով կուգար , շատ վախցան : « Ես եմ , մի երկնչիք , » ըսաւ Յիսուս : « Եթէ դու ես , » ըսաւ Պետրոս , « հրաման տուր ինձ գալ առ քեզ : » Յիսուս հրաման տուաւ , և մինչ Պետրոս սկսաւ ընկղմիլ , Յիսուս բռնեց զՊետրոս , և երկուքն ի միասին ծովը ելան , և ծովը հանդարտեցաւ :

Հ. Սատերին հրաշքը ո՞րն է :

Պ. Անգամ մը հարկահաններ գալով Յիսուսէ տուրք կ'ուզէին : Յիսուս ստակ չունենալով տալու , հրամայեց Պետրոսի երթալ ձուկ մը բռնել Պետրոս բռնեց ձուկը , և Յիսուսի հրամանաւ ձկան փորը բանալով սատեր մը (տեսակ մը ստակ) գտաւ , և այն սատերը տուաւ հարկահանին :

Այս հրաշքներով Յիսուս ուզեց ցուցնել թէ տէր եւ արարիչ է ամենայնի , և բոլոր տիեզերքը կը հնազանդին անոր հրամանին :

Հ. Յիսուսի հրաշքներն ի՞նչ ազդեցութիւն կ'ընէին ժողովրդեան վրայ :

Պ. Ժողովուրդը կը սիրէր և կը յարգէր զՅիսուս իբրեւ մարգարէ , նաեւ Հրէից իշխաններէն շատերը հաւատացած էին անոր , բայց Հրէից վարդապետները կ'ատէին զՅիսուս , որ ստէպ կը յանդիմանէր անոնց կեղծաւորութիւնը , կոյր նախանձը , ագահութիւնը եւ մնապաշտութիւնը :



Հ. Յովհաննէս Մկրտիչ Յիսուսի հրաշները լսելով ի՞նչ ըրաւ :

Պ. Յովհաննէս Մկրտիչ որ անատեն մեծ համբաւ ունէր իբրեւ մարգարէ , զՀերովդէս յանդիմանելուն համար բանտը դրուած էր : Յովհաննէս բանտին մէջ լսելով Յիսուսի գործերը մարդ զրկեց հարցունելու թէ ի՞նքն է Քրիստոսն : Յիսուս անոնց առջեւ շատ հրաշներ գործելէն ետքը զրկեց ըսելով . Գացէք պատմեցէք Յովհաննու ինչ որ տեսաք :

Հ. Յովհաննէս Մկրտիչ բանտին մէջ ի՞նչ եղաւ :

Պ. Հերովդէս անուն անառակ կին մը կար : Անգամ մը ասոր աղջիկը Հերովդէսի առջեւ խաղաց , եւ Հերովդէս շատ հաճելով , երգմամբ խոստացաւ տալ անոր ինչ որ խնդրէր , եւ աղջիկը մօրմէն խրատուելով խնդրեց Յովհաննու Մկրտչի գլուխը : Հերովդէս շատ տրտմեցաւ , բայց երգմանը համար , գլխատել տուաւ զՅովհաննէս բանտին մէջ , եւ գլուխը բերել տալով սկտեղբ տուաւ աղջկան :

Հ. Հերովդէս բարեկամ էր Յիսուսի :

Պ. Հերովդէս շատ հետաքրքիր էր տեսնել զՅիսուս , վասն զի կը լսէր անոր հրաշները , իսկ ներքուստ թշնամի էր անոր : Բայց Յիսուսի գլխաւոր թշնամիներն էին փարիսեցիները :

Հ. Փարիսեցիք ո՞վ էին :

Պ. Յիսուսի ժամանակ Հրէից մէջ կային կրօնական աղանդներ , որոց գլխաւորներն էին փարիսեցւոց եւ Սադուկեցւոց աղանդները : Փարի-

սեցիք Հրէական օրինաց սաստիկ նախանձաւոր էին , եւ Աստուծոյ պատուէրներուն վրայ աւելորդ եւ փասակար աւանդութիւններ աւելցնելով կը սորվեցունէին ժողովրդեան : Սադուկեցիք միայն Մովսիսի գիրքերը կ'ընդունէին , հրեշտակներու , դեւերու եւ յարութեան չէին հաւատար :

Հ. Փարիսեցիք ինչո՞ւ համար թշնամի էին Յիսուսի :

Պ. Նախ՝ վասն զի Յիսուս կը դատապարտէր անոնց ընթացքը : Երկրորդ՝ վասն զի Յիսուս մեղաւորներու հետ ստէպ կը տեսնուէր : Երրորդ՝ վասն զի Յիսուս շաբաթ օրերը բժշկութիւն կ'ընէր : Չորրորդ եւ ի վեր բան զամենայն՝ վասն զի Յիսուս զինք որդի Աստուծոյ կ'անուանէր :

Հ. Յիսուս փարիսեցւոց ինչ ընթացքը կը դատապարտէր :

Պ. Փարիսեցիք հպարտ էին . արդար կը համարէին զիրենք , եւ օրինապահ ձեւանալով կ'ուղէին պատիւ գտնել ժողովրդեան առջեւ : Այս բաներուն համար Յիսուս կը յանդիմանէր զփարիսեցիս եւ կը զգուշացնէր ուրիշներն անոնց կեղծաւորութենէն : Անգամ մը վայ կարդաց անոնց : Ուրիշ անգամ մը սա առաւին ըսաւ . « Փարիսեցի մը եւ Մաքսաւոր մը , ըսաւ , տաճարը ելան աղօթելու : Փարիսեցին իւր բարեգործութիւններն յիշելով կը պարծենար մտքէն : « Փառք որ » կ'ըսէր , « սա Մաքսաւորին պէս չարագործ չեմ : » Իսկ Մաքսաւորն հեռուն կայնելով չէր համարձակեր աշուրներն երկինք վերցունել , այլ ձեռքը



կուրծքին զարնելով կ'ըսէր : « Աստուած , քաւեա  
զիս զմեղաւորս : » « Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ , » Ը-  
սաւ Յիսուս , « այս Մաքսաւորը քան զՓարիսեցին  
աւելի արդար ելաւ Աստուծոյ առջեւէն : »

Հ. Յիսուս ինչու համար մեղաւոր մարդոց  
հետ ստէպ կը տեսնուէր :

Պ. Յիսուս մեղաւոր մարդոց հետ ստէպ կը  
տեսնուէր զանոնք դարձի բերելու համար . բայց  
հպարտ փարիսեցիք կը պարսաւէին զՅիսուս Ը-  
սելով , « Ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ  
և ըմպէ : » Յիսուս ըսաւ անոնց . « Ոչ է պիտոյ  
բժիշկ ողջոյ այլ հիւանդաց : » « Ես ոչ եկի կոչել  
զարդարս , այլ զմեղաւորս յապաշխարութիւն : »

Հ. Յիսուսի առ մեղաւորս սիրոյն երեւելի մէկ  
օրինակը կրնա՞նք յիշել :

Պ. Հարուստ մաքսապետ մը , Զաքէոս անուն ,



չատ կը ցանկար տեսնել զՅիսուս , բայց կարճ  
ըլլալով հատակաւ չէր կրնար տեսնել բաղմութե-  
նէն : Օր մը լսելով որ Յիսուս երեքովէ պիտի  
անցնէր , գնաց ճամբուն վրայ թղենւոյ մը վրայ  
ելաւ զՅիսուս տեսնելու : Երբ Յիսուս մօտեցաւ  
թղենւոյն , վեր նայելով կանչեց զԶաքէոս , որ  
ուրախութեամբ իջնելով ծառէն իւր տունը տա-  
րաւ զՅիսուս , և խոստացաւ հատուցանել ինչ  
անիրաւութիւն որ ըրած էր ուրիշներուն : Փա-  
րիսեցիները կ'ըսէին . « Տեսէք , ինչպիսի մեղաւոր  
մարդու տուն գնաց : » Բայց Յիսուս ըսաւ . « Այ-  
սօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ : »

Հ. Յիսուս ինչ օրինակ տուաւ օտարազգի և  
այլակրօն մարդոց հետ վարուելու :

Պ. Հրեայք կ'ատէին օտարազգիները , մանա-  
ւանդ Սամարացիները , և անոնց հետ հաղորդու-  
թիւն չէին ըներ : Յիսուս անգամ մը Նրհորի մը  
քով կը նստէր Սամարիայի մօտ , և Սամարացի կին  
մը եկաւ ջուր  
առնելու : Յիսուս  
անկէ ջուր ուղե-  
լով խմեց : Կինը  
զարմացաւ որ Յի-  
սուս Հրեայ ըլ-  
լալով ինչպէս  
Սամարացւոյ մը  
ամանէն ջուր կը խմէր : Յիսուս քաղցրութեամբ  
խօսելով այս կնոջ հետ , խմացուց անոր թէ ինք  
էր Մեսիան : Կինը հաւատալով գնաց պատմեց





քաղաքը, և շատ Սամարացիներ գալով հաւատացին Յիսուսի, և կ'ըսէին կնոջը. « Այսուհետեւ ոչ թէ քու խօսքիդ համար կը հաւատանք, այլ անձամբ տեսանք, և կը հաւատանք թէ այս է աշխարհիս փրկիչը: »

Հ. Շաբաթ օրերը բժշկութիւն ընելուն համար փարիսեցիք ինչո՞ւ համար կը բամբասէին զՅիսուս:

Պ. Շաբաթ օրերը գործել Հրէից մէջ մեծ մեղք էր: փարիսեցիք տեսնելով որ Յիսուս շաբաթ օրերն ալ բժշկութիւն կ'ընէր, կը գայթակղէին, և իբրեւ օրինազանց կը բամբասէին: Յիսուս անգամ մը ըսաւ անոնց. « Եթէ ձեր էշը կամ ոչխարը շաբաթ օր փոս մը կ'ընայ, չէ՞ք հաներ. ապա ո՞րչափ առաւել է մարդ քան զանասունս: » Այս ըսելով անոնց առջեւ մարդու մը գօսացեալ ձեռքը բժշկեց շաբաթ օրը, և տասնեւութ տարիէ հետէ կարկամեալ կ'ին մը առողջացուց:

Հ. փարիսեցիք ինչո՞ւ համար կը մեղադրէին զՅիսուս որ որդի Աստուծոյ կ'անուանէր զինք:

Պ. փարիսեցիք թէպէտ Յիսուսի մեծամեծ հրաշքները կը տեսնէին, ատելութենէ կուրացեալ՝ չէին ուղեր ճանչնալ զնա իբրեւ Մեսիա. ուստի և, երբ Յիսուս զինք որդի Աստուծոյ կ'անուանէր, կը գայթակղէին հայհոյիչ համարելով զնա: Բայց Յիսուս ըսաւ անոնց. « Եթէ ես Հօրս գործերը չեմ գործեր, մի հաւատաք ինձ. իսկ եթէ կը գործեմ, եթէ ոչ ինձ, գոնէ գործերուս հաւատացէք: »

Հ. Յիսուսի ո՞ր խրատները մասնաւորապէս յիշուելու արժանի են:

Պ. Մասնաւորապէս յիշուելու արժանի են Յիսուսի խրատներն արծաթսիրութեան, ազահութեան և փառասիրութեան դէմ:

Հ. Յիսուս արծաթսիրութեան դէմ ի՞նչ խրատ տուաւ:

Պ. Յիսուս կը խրատէր իւր աշակերտներն զգուշանալ անիրաւ մամոնայէ: « Ոչ կարէք, » ըսաւ, « ծառայել Աստուծոյ և մամոնայի: » Եւ անգամ մը արծաթասէր հարուստ մը տեսնելով ըսաւ. « Զիարդ դժուարին է որ զինչս ունիցին մտանել յարքայութիւն Աստուծոյ: » « Աւելի դժուարին է, » ըսաւ, « մալխոյ, այսինքն հաստ չուանին, ասեղի ծակէն անցնիլ, քան թէ արծաթասէր մեծատան՝ Աստուծոյ արքայութիւնը մտնել: »

Հ. Յիսուս ազահութեան դէմ ի՞նչ խրատ տուաւ:

Պ. « Զգոյշ եղիք, » ըսաւ, « ազահութենէ, վասն զի ստակ դիզելը մարդուս կեանք չի տար: » Եւ ասոր համար սա առակը խօսեցաւ: Մարդ մը տեսնելով որ արտերը շատ պտուղ տուին, ըսաւ մտքէն. « Շտեմարաններս քակեմ և աւելի մեծ շինեմ, և անոնց մէջ լեցունելով բերքերս, ըսեմ անձիս. « Անձն, շատ տարիներու համար պատւաւորուած բարիք ունիս. կեր, արբ և ուրախ եղիք: » Բայց Աստուած ըսաւ Անոր. « Ո՛վ անմիտ, վաղիւ պիտի մեռնիս, այսչափ բարիքը որ պատւաւորացիր՝ որո՞ւ պիտի ըլլան: »



Հ. Յիսուս փառասիրութեան դէմ ինչ խը-  
րատ տուաւ :

Պ. « Ձեր մէջ ով որ մեծ է , » ըսաւ , « թող ա-  
մենուն սպասաւորն ըլլայ : » Անգամ մը լսելով որ  
աշակերտներն իրենց մէջ կը վիճէին թէ ով մեծ  
է , Յիսուս յանդիմանեց զանոնք , և տղայ մը  
կանչելով , ըսաւ անոնց . « Եթէ այս տղուն պէս  
չըլլաք , պիտի չմտնէք Աստուծոյ արքայութիւնը : »  
Ուրիշ անգամ մը ժողովուրդէն ոմանք իրենց  
տղաքը կը բերէին Յիսուսի , իսկ աշակերտները  
կը մերժէին : Բայց Յիսուս ըսաւ . « Թող տուէք  
այդ տղայոց որ ինծի գան . » և զանոնք գիրկն  
առնելով օրհնելէն ետքը ըսաւ . « Այդպիսեացդ  
է արքայութիւն Աստուծոյ : »

Հ. Բաց ի հրաշից ուրիշ ինչ նշան ցուցուց Յի-  
սուս իւր աստուածութեանը :

Պ. Յիսուս քանի մը մարգարէութիւններ ըրաւ  
յորոց ոմանք կատարուած են և ոմանք պիտի  
կատարուին : Յիսուս մարգարէացաւ նախ իւր  
մահը և յարութիւնը . երկրորդ՝ երուսաղեմի  
կործանումը . երրորդ՝ աշխարհիս վերջը :

Հ. Յիսուս իւր մահուան և յարութեան հա-  
մար ինչ ըսաւ :

Պ. Յիսուս մարգարէացաւ թէ պիտի մատ-  
նուէր Հրէից բահանայապետներուն և փարիսեց-  
ւոց ձեռքը , որ պիտի նախատէին զնա , չարչա-  
րէին և ի խաչ հանէին , բայց երեք օր ետքը  
յարութիւն պիտի առնէր , և այնուհետեւ Աւե-  
տարանը բոլոր աշխարհք պիտի քարոզուէր :

Հ. Յիսուս ինչ անակով իմացուց թէ Հրեայք  
պիտի սպաննէին զնա :

Պ. « Մարդ մը , » ըսաւ , « այգի մը տնկելով  
յանձնեց մշակաց , և ժամանակին իւր ծառանե-  
րը զրկեց առնուլ այգւոյն պտղէն . բայց մշակ-  
ներն անոր ծառաներէն ոմանք տանջեցին , ու-  
րիշներն սպաննեցին : Յետոյ այգւոյն տէրն ուրիշ  
ծառաներ զրկեց , մշակներն անոնց ալ այնպէս  
ըրին : Ի վախճանի զրկեց իւր որդին , ըսելով .  
« Թերեւս այս որդիէս ամշնան : » Բայց մշակները  
որդին ևս սպաննեցին : Այս առակին մէջ այգ-  
ւոյն տէրն է Աստուած , այգին՝ Հրէից ազգը , ծա-  
ռաներն են մարգարէները , իսկ որդին՝ Քրիստոս :

Հ. Քրիստոսի մահը նշանակող ուրիշ ինչ  
դէպք պատահեցաւ Յիսուսի մահուան մօտ :

Պ. Անգամ մը երբ Յիսուս Սիմոն բորոտ ա-  
նուն փարիսեցւոյ մը տունը կերակուր կ'ուտէր ,  
կին մը շիշ մը շատ աղնիւ իւր բերելով թափեց  
Յիսուսի գլուխը : Շատերը կ'ըսէին . « Մեղք ,  
այս իւրը ծախելու և ստակն աղքատաց բաշխե-  
լու էր : » Յիսուս ըսաւ անոնց . « Աղքատները  
միշտ ձեր հետ ունիք , բայց զիս միշտ ձեր հետ  
պիտի չունենաք : Այս կինն իմ թաղումն նշա-  
նակելու համար թափեց այս իւրը : »

Հ. Յիսուս իւր երեքօրեայ յարութիւնն ինչ-  
պէս իմացուց :

Պ. Յովնանու առակով . « Ինչպէս որ , » ըսաւ ,  
« Յովնան ձկան փորը մնաց երեք տիւ և երեք  
գիշեր , այնպէս Որդին մարդոյ պիտի մնայ



երկրիս սիրտը երեք օր և երեք գիշեր : »

Հ. Յիսուս Աւետարանին բոլոր աշխարհք տա-  
րածուելուն վրայ ինչ մարգարէութիւն ըրաւ :

Պ. « Ձեզ նեղութիւններու պիտի մատնեն , »  
ըսաւ իւր աշակերտներուն , « և պիտի սպաննեն  
զձեզ , և իմ անուանս համար ատելի պիտի ըլլաք  
բոլոր ազգերուն . » բայց , աւելցուց վերջը , « Եւ  
քարոզեսցի աւետարանս ընդ ամենայն տիեզե-  
րոս , և ապա եկեսցէ Կատարած : »


Հ. Յիսուս Երուսաղեմի աւերման և աշխար-  
հիս կատարածին համար ինչ ըսաւ :

Պ. Օր մը , երբ Յիսուս տաճարին առջեւէն  
կ'անցնէր , աշակերտները տաճարը ցուցնելով  
կ'ըսէին . « Վարդապետ , տես , որպիսի՛ են քա-  
րինքս և որպիսի՛ շինուածք : » Յիսուս ըսաւ .  
« Եր տեսնէք այս տաճարը . այնպէս պիտի կոր-  
ծանի որ քարքարի վրայ պիտի չմնայ : » Այս առ-  
թիւ Յիսուս մարգարէացաւ նաեւ թէ Երուսա-  
ղէմ պիտի պաշարուէր զօրօք , թէ մեծ նեղու-  
թիւն և սով պիտի ըլլար քաղքին մէջ , և թէ  
վերջապէս հիմնայատակ պիտի ըլլար այն քա-  
ղաքը : Յետոյ վայ տալով լացաւ քաղքին վրայ :  
Երուսաղեմի կործանման հետ Յիսուս մարգա-  
րէացաւ նաեւ աշխարհիս կատարածն , ըսելով  
թէ արեգակը պիտի խաւարէր , լուսինը լոյս  
պիտի չտար , աստղերը պիտի թափէին և բոլոր  
տիեզերքը պիտի շարժէր :

Հ. Յիսուսի աստուածութիւնն ինչ մասնաւոր  
կերպով ցուցուեցաւ առաքելոց :

Պ. Յիսուս իւր

մահուան մօտ ա-  
շակերտներէն ե-  
րեքը , զՊետրոս ,  
զՅակոբոս և ըղ-  
ջովհաննէս առ-  
նելով ելաւ լեռ-  
մը : Հոն անոր կեր-  
պարանքը փոխ-  
ուելով եղաւ ա-  
րեւու պէս լու-  
սաւոր , և հան-  
դերձներն եղան  
ձեան պէս սպի-  
տակ փայլուն :  
Նաեւ Մովսէս և  
Եղիա երեւնալով  
սկսան խօսիլ Յիսուսի չարչարանաց և մահ-  
ուան վրայ : Մինչ առաքեալներն ապշելով կ'ա-  
ղաչէին Յիսուսի միշտ հոն մնալ , յանկարծ  
ամպ մը ծածկեց զանոնք , և երկինքէն սա ձայ-  
նը եկաւ . « Դա է որդի իմ սիրելի , դմա լուա-  
րուք : »



Հ. Փարիսեցիք զՅիսուս մահապարտ ցուցնե-  
լու համար ինչ հնարք խորհեցան :

Պ. Փարիսեցիք խորհեցան զՅիսուս ապստամբ  
ցուցնել կառավարութեան դէմ , ուստի դալով  
հարցուցին անոր . « Վարդապետ , կայսեր հարկ  
տալ պէտք է թէ ոչ : » Յիսուս իմանալով անոնց




խորամանկութիւնը , առաւ դահեկան մը և հարցուց անոնց . « Այս պատկերը որո՞ւն է : » « Կայսեր , » պատասխանեցին փարիսեցիք : « Գացէ՛ք , » ըսաւ Յիսուս , « տուք զկայսերն՝ կայսեր , և զԱստուծոյն՝ Աստուծոյ : » Այս պատասխանին վրայ փարիսեցիք պապանձելով մեկնեցան :

Հ. փարիսեցիք ուրիշ ի՞նչ փորձ ըրին :

Պ. Բաղմութեամբ գալով հարցուցին Յիսուսի թէ ստուգիւ Մեսիան էր : Յիսուս յայտնապէս ըսաւ անոնց թէ ինքն է Մեսիան , այսինքն ֆրիստոս , Աստուծոյ որդին , հաւասար Հօր : փարիսեցիք սաստիկ դայթակղելով Յիսուսի այս խօսքէն , ուղեցին քարկոծել զնա իբրեւ հայհոյիչ , և Յիսուս հեռացաւ Երուսաղէմէ , բայց երբ Զատիկին օրերը մօտեցան նորէն դարձաւ :

Հ. Յիսուս ի՞նչ հանդիսիւ մտաւ Երուսաղէմ :



Պ. Էլ մը բերել տուաւ , և վրան նստելով մտաւ Երուսաղէմ : Ժողովուրդն իմանալով Յիսուսի գալուստը , արմաւենւոյ և ձիթենւոյ ճիւղե-

րով դիմացը ելան , և կ'երգէին , « Ովաննա որդւոյ Դաւթի , օրհնեալ որ դաս յանուն Տեառն , ովաննա ի բարձունս : »

Հ. փարիսեցիք այս տեսնելով ի՞նչ ըրին :

Պ. փարիսեցիք տեսնելով որ ժողովուրդը կ'ընդունէր զՅիսուս իբրեւ Մեսիա , Զատիկի տօնէն երկու օր առաջ քահանայապետներուն և ուրիշ երեւելիներու հետ խորհուրդ ընելով ըսին . « Եթէ այսպէս թողունք , բոլոր ժողովուրդն անոր ետեւէն պիտի երթայ , և Հռոմայեցիք գալով պիտի ջնջեն մեր ազգը : Ուստի որոշեցին սպաննել զՅիսուս : Առ այս իրենց գործակից գտան Յիսուսի աշակերտներէն մին , զՅուդա Իսկարիովտացի , որ յանձն առաւ մատնել զՅիսուս ըստակով , և պատեհ ժամանակի կը սպասէր :

Հ. Յիսուս իւր մահուան մօտ յիշուելու արժանի ի՞նչ ըրաւ :

Պ. Առաքեալք Յիսուսի հրամանաւ վերնատուն մը պատրաստած էին ուր պիտի ուտէին Զատիկական գառն ըստ սովորութեան Հրէից : Երբ ընթրիք ընելու պիտի նստէին , Յիսուս խոնարհութեան օրինակ մը տալու համար իւր աշակերտաց , լուաց անոնց ոտուրները , և յետ ընթրեաց հաստատեց Հաղորդութեան սուրբ խորհուրդը : Նախ հաց առնելով տուաւ աշակերտներուն ըսելով . « Առէ՛ք , կերէ՛ք , այս է մարմին իմ . » յետոյ բաժակը տալով ըսաւ . « Արբէք ի սմանէ , այս է արիւն իմ : » Յիսուս իմացնելով իւր աշակերտներուն թէ այն գիշերը պիտի մատ-



նուէր , և թէ Պետրոս պիտի ուրանար և միւս աշակերտները պիտի փախչէին , աշակերտներուն հետ գնաց Ներուսաղեմի մօտ պարտեզ մը որ Գեթսեմանի կը կոչուէր :

Հ. Յիսուս Գեթսեմանի պարտեզին մէջ ի՞նչ ըրաւ :

Պ. Միւս աշակերտները հօն թողլով , զՊետրոս , զՅակոբոս և զՅովհաննէս միայն առաւ , և քիչ մը հեռուն երթալով սկսաւ աղօթել , և մեծ տագնապի մէջ էր , այնպէս որ քրտինքն արեան կաթիլներու պէս կը վազէր երեսէն , և հրեշտակէն զօրանալով եկաւ աշակերտներուն քով որ կը քնանային , և ըսաւ . « Ելէք , ահա մատնիչը կը մօտենայ : »

Հ. Ո՞վ էր մատնիչը :

Պ. Յուդա Իսկարիովտացի : Երբ Յիսուս ընթրի-



քէն ետքը գնաց Գեթսեմանի , Յուդա յարմար ժամանակ համարելով , գնաց իմացուց քահանայապետներուն , որ սպասաւորաց բազմութեամբ և զինուորներով եկան : Յուդա մօտե-

նալով Յիսուսի համբուրեց զնա , քանզի այս նշանը տուած էր անոնց : Անատեն զինուորները կապեցին զՅիսուս , և աշակերտները թողին և փախան :

Հ. Յիսուսի աշակերտները դէմ չկեցան եկող բազմութեան :

Պ. Պետրոս որ սուր մը ունէր՝ հանելով քահանայապետին ծառային , որ Մաղքոս կը կոչուէր , ականջը կտրեց : Բայց Յիսուս ծառային ականջը բժշկելով ըսաւ Պետրոսի . « Սուրբ պատեանը դիր , սուր առնողները սրով պիտի իյնան : »

Հ. Բազմութիւնն ի՞նչ ըրաւ զՅիսուս :

Պ. Տարաւ կա-

յիափա քահանայապետին տունը , ուր ժողովեալ էին Հրէից մեծերը , որ շատ նախատինք տալէն ետքը Յիսուսի , վճռեցին թէ իբրեւ հահոյիչ մահու արժանի էր : Եւ որովհետեւ ան ատեն Հրեայք Հռոմայեցոց հրպատակ էին , համարձակելով ինք-





նին բան մը ընել, տարին զՅիսուս Հռոմայեցի կուսակալին Պիղատոսի ըսելով. « Այս մարդը մահապարտ է, վասն զի կ'ապստամբեցունէ ժողովուրդը, ինքզինք թագաւոր անուանելով : »

Հ. Կայիափայի տան մէջ յիշուելու արժանի ինչ պատահեցաւ :

Պ. Պետրոս հեռուէն Յիսուսի ետեւէն գալով մտած էր Կայիափայի տունը, և բակը կրակին քով նստելով յանձանօթս կը տաքնար : Հոն գրանուղներէն ոմանք ըսին. « Այս մարդը Յիսուսի աշակերտներէն է, ահա լեզուէն յայտնի է որ Գալիլեացի է : Պետրոս վախնալով երեք անգամ ուրացաւ, ըսելով, « Ես այն մարդը չեմ ճանչնար, » և սկսաւ հայհոյել և նզովել զՅիսուս : Իսկոյն հաւ խօսեցաւ, և Պետրոս յիշելով Յիսուսի խօսքը թէ, « Առաւօտուն հաւին խօսելէն առաջ զիս երեցս պիտի ուրանաս, » զղջաց, և սկսաւ գառնապէս լալ :

Հ. Պիղատոս ինչ ըրաւ Յիսուսի :

Պ. Պիղատոս Հրէից ամբաստանութիւնն անհիմն գտաւ, քանզի տեսաւ որ Յիսուս երկրաւոր թագաւորութեան ցանկացող չէր. ուստի ըսաւ Հրէից. « Ես մահու արժանի յանցանք չեմ տեսներ այս մարդուն վրայ » : Եւ որովհետեւ սովորութիւն էր Զատիկի տօնին յանցաւոր մը արձակել, Պիղատոս ուզեց զՅիսուս արձակել. բայց Հրեայք խնդրեցին զԲարաբբա որ մարդասպան էր : Պիղատոս չկրնալով համոզել զՀրեայս, ձեռուրները լուաց ըսելով, « Քաւեալ եմ ես

յարենէ արդարոյդ այդորիկ : » Հրեայք պատասխան տուին. « Արին դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց, » և Պիղատոս մատնեց զՅիսուս Հրէից ձեռքը :

Հ. Հրեայք ինչ ըրին զՅիսուս :

Պ. Հրեայք յանձնեցին զՅիսուս զինուորներուն, և զինուորներն, իբրեւ թագաւորի, փոխանակ ծիրանւոյ կարմիր քղամիդ հագուցին Յիսուսի, փոխանակ արքունական գաւազանի եղէգ մը տուին ձեռքը, և փոխանակ թագի փշեայ ստակ բոլորելով դրին Յիսուսի գլուխը, և ծաղրելով կողջունէին զնա ըսելով. « Ողջ լեր, թագաւոր Հրէից : » Այս և ուրիշ նախատինք տալէն ետքը,

խաչ մը տուին Յիսուսի ուսը, և կը տանէին խաչ հանել զնա Գողգոթա կոչուած տեղը ուր սովոր էին ըսպաննել մահապարտները :

Հ. Ճամբան Յիսուսի ինչպէս տահեցաւ :


Պ. Ճամբան կանայք զթալով Յիսուսի վրայ





կու լային . բայց Յիսուս դառնալով ըսաւ անոնց .  
« Դստերք երուսաղեմի , մի լայք ի վերայ իմ , այլ  
լացէք ի վերայ անձանց և որդւոց ձերոց : » Զին-  
ուորները տեսնելով որ Յիսուս դժուարաւ կը տա-  
նէր խաչը , Սիմոն Կիւրենացի անուն մարդու մը  
տանել տուին խաչը մինչեւ Գողգոթա : Հոն տը-  
ուին Յիսուսի լեղով և զմուսով խառն գինի ,  
բայց Յիսուս չուզեց խմել : Վերջապէս զինուորք  
մերկացուցին զՅիսուս , և անոր հանդերձներն ի-  
րենց մէջ բաժնելէն ետքը խաչը հանեցին զնա  
ուրիշ երկու մարդոց մէջտեղ :

Հ. Ո՞վ էին այս երկու մարդիկ :



ընդ իս իցես ի Դրախտին : »

Պ. Այս երկու  
մարդիկ ի մահ  
դատապարտուած  
աւաղակներ էին :  
Չախ կողման ա-  
ւաղակը կը նա-  
խատէր զՅիսուս  
իսկ աջակողմեա-  
նը յանդիմանեց  
զնա , և դարձի  
դալով ըսաւ Յի-  
սուսի . « Յիշեա  
ղիս , Տէր , յարբա-  
յութեան քում : »  
և Յիսուս ըսաւ  
անոր . « Այսօր

Հ. Մինչ Յիսուս խաչին վրայ էր , ինչ բաներ  
պատահեցան :

Պ. Յիսուսի թշնամիները , Գահանայապետը  
և Փարիսեցիք , կը նախատէին և կը ծաղրէին  
զՅիսուս ըսելով . « Եթէ որդի է Աստուծոյ , իջցէ  
այժմ ի խաչէդ , և հաւատասցուր դմա : » Իսկ  
Յիսուս կ'աղօթէր անոնց համար ըսելով . « Հայր ,  
թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն : » Կային  
հոն նաև Յիսուսի բարեկամներէն շատեր , որոց  
մէջ էին Յիսուսի մայրը Մարիամ , և սիրելի աշա-  
կերտը Յովհաննէս : Յիսուս զՅովհաննէս յանձնեց  
եւր մօրը ըսելով . « Ահա որդի քո . » և զմայրն  
յանձնեց Յովհաննու ըսելով , « Ահա մայր քո : »

Հ. Յիսուս ինչպէս մեռաւ և ինչ սքանչելիք  
եղան ի մահուան նորա :

Պ. Իններորդ ժամուն Յիսուս մեծ ձայնով ա-  
ղաղակեց . « Աստուած իմ , Աստուած իմ , ընդէր  
թողեր զիս : » Յետոյ ըսաւ , « Ծարաւի եմ , » և  
զինուորները սպունգ մը թրջելով քացախի մէջ  
տուին Յիսուսի բերանը , որ ճաշակելով ըսաւ .  
« Ահա ամենայն ինչ կատարեալ է . » և քիչ մը ետքը  
ըսելով , « Հայր , ի ձեռս քո աւանդեմ զհոգի  
իմ , » խոնարհեցուց գլուխը և հոգին աւանդեց :

Հ. Ի՞նչ սքանչելիք եղան ի մահուան Յիսուսի :

Պ. Երկիր շարժեցաւ , բոլոր երկրի վրայ խա-  
ւար եղաւ , վէմք պատառեցան , գերեզմանք  
բացուեցան , արդարներէն շատերն յարութիւն  
առին , և տաճարին վարագոյրը վերէն վար ձեղք-  
ուեցաւ : Հարիւրապետը և զինուորք որ խաչին



մօտ կը կենային՝ վախճալով ըսին . « Արդարեւ այրս այս որդի Սատուծոյ էր . » և ժողովուրդէն շատերն իրենց կուրծքը բախելով մեծ տրտմութեամբ դարձան իրենց տուները :

Հ. Յիսուս խաչէն լինչպէս վար առնուեցաւ :

Պ. Հրեայք չուզելով որ խաչելոյ մարմինները մնային խաչին վրայ մինչեւ հետեւեալ օրը որ մեծ տօն էր , խնդրեցին Պիղատոսէ խաչելոց բարձերը խորտակել տալ : Պիղատոս հրամայեց , և զինուորները խորտակեցին երկու աւազակաց բարձերը , բայց տեսնելով որ Յիսուս մեռած էր , չխորտակեցին անոր բարձերը , այլ զինուոր մը տիգով խոցեց Յիսուսի կողը , որմէ բղխեց արիւն և ջուր : Յիսուսի ծածուկ աշակերտներէն իշխան մը Յովսէփ անուն , Արեմաթացի , հրամանաւ Պիղատոսի խաչէն վար առաւ Յիսուսի մար-



մինը : Այս Յովսէփ և ուրիշ ծածուկ աշակերտ մը Նիկողեմոս անուն որ նոյնպէս իշխան էր , մաքուր կտաւով և անուշահոտ իւղերով պատե-

լով Յիսուսի մարմինը , դրին Գեթսեմանի պարտեզը նոր վիմափոր գերեզման մը զոր Յովսէփ իրեն համար պատրաստած էր :

Հ. Յիսուս որչափ ատեն մնաց գերեզմանը :

Պ. Յիսուս գերեզմանը մնաց մինչեւ կիրակի

առաւօտ : Հրեայք Պիղատոսէ խնդրած էին պահապաններ դնել գերեզմանին քով , որ գուցէ աշակերտները գալով գողնային Յիսուսի մարմինը և համբաւէին թէ յարութիւն առաւ : Պիղատոս



պահպանել տուաւ գերեզմանը զինուորներով , բայց կիրակի առաւօտուն լուսնայլու մօտ Յիսուս յարութիւն առաւ , և զինուորները փախան :





Հ. Յիսուսի յարութիւնն առնելն ինչպէս իմացուեցաւ :

Պ. Քանի մը բարեպաշտ կանայք, յորոց մին էր Մարիամ Մագդաղենացի, կիրակի առաւօտուն կանուխ անուշահոտ իւղերով գերեզմանը գալով Յիսուսի մարմինն օծելու, գերեզմանին քարը թաւալած գտան, և մտնելով ներս չգտան Յիսուսի մարմինը : Մինչ Մարիամ Մագդաղենացի Յիսուսի մարմինը գողցուած կարծելով կուլար, Յիսուս պարտիզպանի կերպարանօք երեւցաւ անոր, և պատուիրեց երթալ աշակերտներուն աւետել իւր յարութիւնը :

Հ. Պահապան զինուորները որ Յիսուսի յարութիւնը տեսած էին՝ ինչ ըրին :

Պ. Քաղաք երթալով պատմեցին Քահանայապետներուն և Հրէից երեւելիներուն, և անոնք չատ ստակ տալով զինուորներուն պատուիրեցին ըսել թէ աշակերտները գողցած էին Յիսուսի մարմինը, մինչ իրենք կը քնանային : Զինուորներն այնպէս ըրին, և այս համբաւը տարածուեցաւ Հրէից մէջ :


Հ. Երբ առաքեալք իմացան Յիսուսի յարութիւնն ինչ ըրին :

Պ. Շատ ուրախացան, և իսկոյն Պետրոս և Յովհաննէս եկան գերեզմանը : Յիսուս անոնց ալ երեւնալով պատուիրեց Գալիլեա երթալ : Յիսուս իւր յարութենէն ետքը մինչեւ քառասուն օր չատ անգամ երեւցաւ իւր աշակերտներուն : Երկրորդ անգամ երեւնալուն, առաքեալք ժողով-

եալ էին Վերնատունը, և Յիսուս ձեռուրները և կողը ցուցուց թովմայի, որ առաջին անգամ երեւնալուն դուրսը գտնուելով տեսած չէր զՅիսուս, և առաքելոց խօսքին Հաւատալով ըսած էր, « Մինչեւ որ անոր ձեռաց վէրքերը և կողը չտեսնեմ, չեմ հաւատար : » Յիսուս ըսաւ թովմայի. « Դուն տեսար և հաւատացիր, երանի անոնց որ զիս չտեսնելով պիտի հաւատան : »

Հ. Յիսուս քառասուն օրէն ետքը ինչ ըրաւ :

Պ. Յիսուս իւր յարութենէն քառասուն օր ետքը վերջին անգամ երեւնալով առաքելոց երուսաղէմ, պատուիրեց երուսաղէմէ Հեռանալ մինչեւ ի գալուտ Հոգւոյն սրբոյ զոր Յիսուս խոստացած էր զրկել անոնց : Յետոյ տանելով աշակերտները Զիթենեաց լեռը, օրհնեց զանոնք, և անոնց առջեւ համբարձաւ :





Գ. ԺԱՄԱՆԱԿ

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆԷՆ ՄԻՆՁԵՒ ԱՌԱՔԵԼՈՅ  
ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԵՐՁԸ (33-66 ՅԵՏ ՔՐ.)

Հ. Յետ համբարձման Գրիստոսի Առաքելաբ  
լինչ ըրին :

Պ. Յիսուսի մօրը և ուրիշ հաւատացեւոց հետ  
վերնատունը ժողովուրդով կը սպասէին Հոգւոյն  
սրբոյ գալստեան : Եւ որովհետեւ առաքելոց  
թիւը պակսած էր Յուդայ մասնի մահուամբ ,  
առաքելաբ ըստ առաջարկութեան Պետրոսի  
ընտրեցին զՄատթիա որ երկուտասան առաք-  
եալներէն համարուեցաւ :

Հ. Յուդա երբ և ինչ մահուամբ մեռաւ :




Պ. Յուդա Յիսուս ի  
մահ գատապարտուիլը  
տեսնելով , զղջաց , և  
երեսուն արծաթին զոր  
փոխանակմանութեան  
առած էր քահանայա-  
պետներէն՝ անոնց դար-  
ձունելէն ետքը , յու-  
սահատութենէն գնաց  
զինք կախցի :

Հ. Հոգւոյն սրբոյ գա-  
լստեան խոստումը երբ  
և ինչպէս կատարուեցաւ :

Պ. Յիսուսի համբառնալէն տասն օր ետքը ,  
որ էր Կիրակի , մինչ աշակերտները վերնատունը

ժողովուած կ'աղօթէին , յանկարծ ձայն ելաւ  
աստիկ հողմոյ ձայնի նման . տունն ուր նստած  
էին առաքելաբ՝ շարժեցաւ , և Հոգին սուրբ  
վերնատան մէջ գտնուողներէն իւրաքանչիւրին  
վրայ իջաւ հրեղէն լեզուի ձեւով :



Հ. Հոգւոյն սրբոյ գալստեան նշանն ինչ եղաւ :

Պ. Առաքելաբ իսկոյն սկսան այլեայլ լեզու-  
ներ խօսիլ , այնպէս որ , երբ ժողովուրդը շար-  
ժումը լսելով առաքելոց քով եկան բազմու-  
թեամբ , շատերը կը զարմանային առաքելոց  
լեզուներ խօսելուն վրայ , ոմանք ալ ծաղր կ'ը-  
նէին ըսելով թէ գինով են : Բայց Պետրոս՝ մար-  
գարէներէն վկայութիւն բերելով ցուցուց թէ  
Հոգւոյն սրբոյ պարգեւն էր այն , և քարոզեց  
զՅիսուս այնպիսի զօրութեամբ որ իսկոյն երեք  
հազար հոգի հաւատալով ի Գրիստոս անցան  
հաւատացելոց կարգը :



Հ. Առաքեալք իրենց քարոզութիւնն ինչով  
կը հաստատէին :

Պ. Հրաշիւք : Առաջին հրաշքը գործեցին  
Պետրոս և Յովհաննէս՝ բժշկելով ի ծնէ կաղ մը  
որ տաճարին դուռը նստելով կը մուրար : Մինչ  
օր մը Պետրոս և Յովհաննէս տաճարը կը մտնէին  
աղօթելու , կաղը ողորմութիւն խնդրեց անոնց-  
մէ : Պետրոս ըսաւ անոր . « Արժաթ և ոսկի  
ոչ ունիմ , բայց զոր ունիմ տաց քեզ . յա-  
նուն Յիսուսի Քրիստոսի նազովրեցւոյ արի և  
դնա : » Կաղն իսկոյն ոտք ելաւ և կը վազվազէր :  
Քոյրը ժողովուրդը զարմացաւ , և շատերը հաւա-  
տացին . փահանայապետը և Հրէից մեծերը  
պատուիրեցին առաքելոց սպառնալեօք այլ եւս  
յանուն Յիսուսի չքարոզել : Բայց առաքեալք  
ըսին . « Լաւ է Աստուծոյ հնազանդիլ քան  
մարդկան , » և շարունակեցին իրենց քարոզու-  
թիւնը :

Հ. Առաջին հաւատացելոց կեանքն ինչպէս էր :

Պ. Առաջին հաւատացելոց կեանքը հասարա-  
կաց էր : Ով որ ստացուած ունէր , կը վաճառէր ,  
և ստակը կու տար առաքելոց որ ամենուն պէտ-  
քը կը հոգային :

Հ. Այս կանոնին ո՞վ հակառակ գործեց և  
ինչ պատիժ առաւ :

Պ. Անանիա անուն մարդ մը և կինը Սափիրա  
աղարակ մը վաճառելով , ստակէն մաս մը խո-  
րեցին , և մնացածը բերին առաքելոց : Պետրոս  
հարցուց թէ այնչափ ստակի վաճառեցին ազա-

րակը , երբ անոնք պատասխանեցին , « Այո , »  
Պետրոս յանդիմանեց զանոնք իբր ստող Հոգ-  
ւոյն սրբոյ , և իսկոյն երկուքն ալ իյնալով մե-  
ռան : Ուրիշ շատ հրաշներ կը կատարուէին ա-  
ռաքելոց ձեռք , այնպէս որ Պետրոսի հովանին  
անգամ կը բժշկէր հիւանդները զորս մահիճնե-  
րով կը դնէին հրապարակները :

Հ. Հրեայք առաքելոց հրաշքները տեսնելով  
ինչ ըրին :

Պ. Բանտը դրին զանոնք , բայց հրեշտակ մը  
գիշերը բանտին դուռները բանալով արձակեց  
զանոնք : Հրէից իշխանները և քահանայապետը  
կ'ուզէին զանոնք սպաննել : Բայց կը վախնային  
ժողովուրդէն , և Գամաղիէլ անուն Հրեայ վար-  
դապետ մը խրատ տուաւ չդպչիլ առաքելոց .  
« Եթէ աստուծմէ է , » կ'ըսէր , « այս գործը , չէք  
կրնար հակառակիլ , իսկ եթէ ի մարդկանէ է ,  
ինքնին կը քայքայի : » Այսպէս ազատ թողուե-  
ցան առաքեալք :

Հ. Երբ հաւատացեալները բազմացան , ինչ  
տրտունջ ծագեցաւ ժողովրդեան մէջ :

Պ. Երբ ժողովուրդը բազմացաւ , աշակերտք  
չէին կրնար հասնիլ քարոզելու միանգամայն ժո-  
ղովրդեան մարմնաւոր պէտքերը հոգալու , այս  
պատճառաւ տրտունջ ծագեցաւ ժողովրդեան  
մէջ : Ուստի առաքեալք ընտրեցին իրենց օգ-  
նական եօթն բարեպաշտ անձինք , որոց մին էր  
Ստեփանոս , « այս լի հաւատով և հոգով սրբով : »  
Այս եօթն անձինք սարկաւագ կոչուեցան , և



ժողովրդեան մարմնաւոր պէտքերը կը հոգային , իսկ առաքեալք կը պարապէին քարոզութեան :

Հ. Ստեփանոսի ինչ պատահեցաւ :

Պ. Ստեփանոս մեծամեծ հրաշքներ կը գործէր , և մեծ զօրութեամբ կը քարոզէր ճշմարտութիւնը : Հրէից ազգէն ոմանք որ հմուտ էին արտաքին փիլիսոփայութեան , կը վիճէին ստէպ Ստեփանոսի հետ և կը յաղթուէին , ուստի նախանձելով զրպարտեցին զՍտեփանոս թէ հայհոյեց Մովսիսի և Աստուծոյ դէմ , և քարկոծեցին : Ստեփանոս եղաւ առաջին քրիստոնեայ մարտիրոս , այսինքն քրիստոսի անուան համար սպանուած : Այս առթիւ սաստիկ հալածում եղաւ երուսաղեմի մէջ հաւատացելոց դէմ : Բայց այս հալածումն օգտակար եղաւ , վասն զի աշակերտները ցրուելով ուրիշ քաղաքներ տարածեցին քրիստոնէութիւնը :

Հ. Սիմոն մեզ ո՞վ էր և անոր վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. Սիմոն մեզ Սամարիոյ մէջ երեւելի կախարհ էր , և ժողովուրդը շատ պատիւ կընէր անոր : Երուսաղեմի հալածանաց պատճառաւ Փիլիպպոս անուն աշակերտ մը Սամարիա երթալով հրաշքներ կը գործէր , և Սիմոն տեսնելով Փիլիպպոսի գործերը , ստակով ուզեց զնեւ առաքեալներէն հրաշագործութեան զօրութիւնը , բայց Պետրոս առաքեալ մերժեց զնա սաստիկ յանդիմանութեամբ , ըսելով , « Արժաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ : »

Հ. Փիլիպպոսի վրայ ուրիշ ի՞նչ կը պատմուի :

Պ. Մինչ Փիլիպպոս անգամ մը Աստուծոյ ազգամար երուսաղեմէն Գաղա կ'երթար , ճամբան հանդիպեցաւ Եթովպացւոց թագուհւոյն պաշտօնէին որ կառքի մէջ նստած Եսայի մարգարէին գիրքը կը կարդար : Աստի առիթ առնելով Փիլիպպոս քարոզեց պաշտօնէին զֆրիստոս , և ջուրի մը քով հասնելով մկրտեց զնա :

Հ. Սօղոս ո՞վ էր և ի՞նչ կը պատմուի անոր վրայ :

Պ. Սօղոս հրէութեան սաստիկ նախանձաւոր երիտասարդ էր , և բոլոր զօրութեամբ կը հալածէր հաւատացեալները : Անգամ մը/Քրք քահանայապետներուն հրամանաւ Դամասկոսի երթար հաւատացելոց դէմ հալածանք հանելու , ճամբան սաստիկ լուսով երեւցաւ անոր ֆրիս-



տոս , և հրամայեց ետ կենալ զֆրիստոնեայս հալածելէ : Սօղոս որոյ աշուրները կուրցած էին լուսոյն սաստիկութենէն՝ այլոց օգնութեամբ



մտաւ Դամասկոս, և հոն Անանիա անուն աշակերտէ մը բժշկուելով հաւատաց և եղաւ հեթանոսաց առաքեալ :

Հ. Պետրոս այս միջոցին ինչ կ'ընէր :

Պ. Պետրոս երուսաղէմէ դուրս այլեւայլ տեղեր այցելութիւն կ'ընէր քրիստոնէից : Լիւգիա քաղաքը Ենեա անուն ութամեայ անդամաւոյժ մը բժշկեց : Անկէ Յոպպէ (Եաֆա) կանչուելով, յարոյց Այծեմնիկ անուն բարեպաշտ և աղքատասէր կին մը :

Հ. Առաքեալք Հրէից միայն թէ հեթանոսաց ալ կը քարոզէին :

Պ. Ընդհանրապէս կը քարոզէին Հրէից, բայց Աստուած տեսլեամբ մը յայտնեց Պետրոսի թէ հեթանոսք եւս պիտի ընդունուէին Քրիստոսի եկեղեցին : Հրէաստանի Կեսարիա քաղաքը հեթանոս հարիւրապետ մը կար Կուռնելիոս անուն, երկիւղած և ողորմած : Աստուած ասոր յայտնեց զՊետրոս կանչել և անկէ սորվիլ Աստուծոյ ճամբան : Նոյն ատեն Աստուած Պետրոսի եւս տեսիլ մը յայտնեց : Պետրոս կը տեսնէր երազին մէջ աման մը որ երկինքէն կ'իջնէր և մէջը պիղծ անասուններ և սողուններ կային, և ձայն մը լսեց որ կ'ըսէր, « Պետրոս, զեն և կեր : » « Քաւ լիցի, տէր, » ըսաւ Պետրոս, « ոչ երբէք կերայ խառնակ ինչ և անսուրբ : » « Զոր Աստուած սրբեաց՝ դու մի պղծեր, » ըսաւ ձայնը : Այն միջոցին Կուռնելիոսի կողմէն մարդ եկաւ զՊետրոս Կեսարիա տանելու : Պետրոս Աստուծոյ հրամանաւ

գնաց հեթանոս Կուռնելիոսի տունը, և քարոզելով դարձուց զԿուռնելիոս հանդերձ ընտանեօք : Այսպէս հեթանոսներուն որ պիղծ կը համարուէին Հրեաներէն, դուռ բացուեցաւ աւետարանին :

Հ. Այն միջոցին ինչ նոր հալածում ելաւ երուսաղէմ :

Պ. Հերովդէս սկսաւ հալածել քրիստոնեաները : Մեռցուց զՅակոբոս որ երուսաղէմի եկեղեցւոյն առաջնորդն էր : Հերովդէս նաեւ զՊետրոս բանտարկեց, բայց հրեշտակ մը բանտին երկաթի դուռները բանալով գիշերով դուրս հանեց զՊետրոս : Մինչ Հերովդէս օր մը մեծ հանդիսիւ հրապարակին մէջ նստած կը լսուէր, զարնուեցաւ Աստուծոյ հրեշտակէն, և որդնոտելով մեռաւ :

Հ. Հեթանոսաց մէջ քարոզութիւնն ինչպէս սկսաւ :

Պ. Պօղոս որ առաջ Սօղոս կը կոչուէր, և ուրիշ աշակերտ մը Բառնաբաս անուն, ընտրուեցան Անտիոքայ եկեղեցիէն երթալ աւետարանը քարոզել հեթանոսաց : Հեթանոսները սիրով մոտիկ կ'ընէին Պօղոսի և Բառնաբայ քարոզութեանը, բայց Հրեայք շատ տեղ կը հակառակէին անոնց, և հեթանոսները կը գրգռէին անոնց դէմ : այնպէս որ Պօղոս շատ անգամ ծեծուեցաւ, քանի մը անգամ նաեւ սպաննուելու վտանգէն հազիւ ազատեցաւ :

Հ. Ո՞ր երեւելի տեղերն են յորս Պօղոս առաքեալ քարոզեց :

Պ. Երեւելի տեղերը յորս Պօղոս առաքեալ



քարոզեց՝ են, Կիպրոս, Լիւստրա, Երուսաղէմ, Փիլիպպէ, Աթէնք, Կորնթոս, Եփեսոս, Տրովա, Կեսարիա և Հռոմ:

Հ. Պօղոս երբ եկաւ Կիպրոս և հոն ինչ ըրաւ:

Պ. Պօղոս Անտիոքայ եկեղեցիէն ղրկուելով, Բառնաբասայ հետ եկաւ նախ Կիպրոս: Հոն Պափոս քաղաքը Սերգիոս Պօղոս անուն Հռոմայեցի իշխանը սիրով մօտիկ կ'ընէր Պօղոսի քարոզութեանը, բայց Եղիմաս անուն Հրեայ կախարդ մը կը խրատէր իշխանը չանսալ Պօղոսի խօսքերուն, բայց յանդիմանուելով Պօղոսէ՝ կուրացաւ հրաշիւք:

Հ. Պօղոս երբ եկաւ Լիւստրա և հոն ինչ ըրաւ:

Պ. Լիւստրա փոքր Ափոյ մէջ քաղաք էր: Պօղոս Կիպրոսէ ելլելով եկաւ Իկոնիոն (Գոնեա), և իմանալով թէ հեթանոսներէն և Հրեաներէն քանի մը երեւելի անձինք քարկոծել կը խորհէին զնա, եկաւ Լիւստրա: Հոն Պօղոս ի ծնէ կազ մը բժշկեց, և Ժողովուրդը կարծելով թէ Պօղոս Ա. Բառնաբաս աստուած են երկինքէն իջած, ուղեցին զոհ մատուցանել անոնց: Բայց Պօղոս չը թողուց, և քարոզելով անոնց աւետարանը, Բառնաբասայ հետ Անտիոք դարձաւ:

Հ. Պօղոս ինչ պատճառաւ Երուսաղէմ գնաց:

Պ. Հրեայ քրիստոնեաներէն ոմանք կը պընդէին թէ հեթանոսութենէ դարձող քրիստոնեայք եւս պարտէին թլփատուիլ, և այս պատճառաւ բաւական հակառակութիւն եղաւ Անտիոքայ հաւատացելոյ մէջ: Ուստի այս խընդ-

րոյն որոշում տալու համար Պօղոս և Բառնաբաս ղրկուեցան Երուսաղէմ: Հոն առաքելաբ և երիցունք Ժողով ընելով որոշեցին թէ քրիստոնէից համար թլփատութիւն հարկաւոր չէր, և թուղթ գրելով հեթանոսութենէ դարձող քրիստոնէից, տուին Պօղոսի և Բառնաբայ և ղրկեցին նորէն Անտիոք:

Հ. Պօղոս երբ եկաւ Փիլիպպէ և հոն ինչ պատահեցաւ:

Պ. Փիլիպպէ Մակեդոնիոյ մէջ երեւելի քաղաք էր: Պօղոսի տեսիլ մը երեւցաւ. Մակեդոնացի մը կաղաչէր անոր ըսելով. Մակեդոնիա եկուր մեզի օգնելու: Ասոր վրայ Պօղոս գնաց Փիլիպպէ, և մինչ հոն Լիւդիա անուն ծիրանավաճառ կնոջ մը տունը կ'երթար, ճամբան գուշակութիւն ընող դիւահար աղախնոյ մը պատահելով, ըսաւ դիւին. « Պատուեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի, ել ի դմանէ, » և ելաւ դուր: Դիւահարին տէրերը որ անոր գուշակութիւններուն պատճառաւ շատ ստակ կը չահէին, տեսնելով որ այլ եւս իրենց չահի յոյս չմնաց, զՊօղոս և զՇիղա տարին իշխաններուն, որ զանոնք չարաչար ծեծելէն ետքը բանտ դրին: Բայց կէս գիշերուն բանտը շարժեցաւ, և Պօղոսի ու Շիղայի շղթաներն ինքնին քակուեցան: Բանտապետն այս հրաշքը տեսնելով հաւատաց և մկրտուեցաւ: Հետեւեալ օրը իշխաններն իմանալով որ Պօղոս և Բառնաբաս Հռոմայեցի էին, արձակեցին զանոնք:



Հ. Պօղոս երբ Աթէնք գնաց և հոն ինչ բրաւ :

Պ. Պօղոս քանի մը երեւելի քաղաքներ այցելութիւն ընելէն ետքը եկաւ Աթէնք որ Յունաստանի քաղաքաց երեւելին էր և հիմա ալ Մայրաքաղաքն է : Հոն եպիկուրեան և Ստոյկեական կոչուած փիլիսոփաներէն ոմանք Պօղոսի հետ վիճեցին , և բերին զնա Արիսպագոս կոչուած ատենաւր , ուր Պօղոս քարոզեց ճշմարիտ Աստուածը . քանզի թէպէտ Աթենացիք երեւելի էին իմաստութեամբ՝ բայց կուռք կը պաշտէին : Աթէնքի մէջ Պօղոսի քարոզութեամբ դարձան քանի մը երեւելի անձինք , որոց մին էր Դիոնեոսիս , Արիսպագոսի ատենին անդամներէն :

Հ. Պօղոս Աթէնքէն մեկնելով ուր գնաց և ինչ բրաւ :

Պ. Պօղոս Աթէնքէն մեկնելով գնաց Կորնթոս , ուր տարի մը և վեց ամիս մնալով Կորնթացիներէն շատերը դարձուց իրքրիտոնէութիւն , և երբ Հրեայք խռովութիւն հանեցին Պօղոսի դէմ , առաքեալը խոհեմութիւն չհամարելով աւելի երկար հոն մնալ , մեկնեցաւ անկէ , և շատ քաղաքներ այցելութիւն ընելէն ետքը , գնաց Եփեսոս :

Հ. Պօղոս որչափ ատեն մնաց Եփեսոս , և հոն ինչ պատահեցաւ անոր :

Պ. Պօղոս երկու տարի մնաց Եփեսոս , և անդադար քարոզելով Հրէից և հեթանոսաց՝ շատ հրաշք գործեց , այնպէս որ թաշկինակը միայն հիւանդներուն վրայ դրուելով կը բժշկէր զանոնք

և դեւեր կը հանէր : Եփեսոսի մէջ երեւելի մեհեան մը կար Արտեմեայ , և Դեմետրիոս առուն արծաթագործ մը այս մեհեանին պատկերները շինելով շատ ստակ կը շահէր : Այս մարդը տեսնելով որ Պօղոս կռապաշտութեան դէմ կը քարոզէր , վախնալով թէ իւր շահը պիտի նուագէր , մեծ խռովութիւն հանեց քաղքին մէջ Պօղոսի դէմ , այնպէս որ հազիւ ազատեցաւ Պօղոս և գնաց Տրովա :

Հ. Պօղոս ինչ բրաւ Տրովա :

Պ. Պօղոս քանի մը օր Տրովա մնալով կը քարոզէր : Անգամ մը մինչ վերնատուն մը նստելով կը քարոզէր բազմութեան , Եւտիքոս անուն պատանի մը որ պատուհանին քով կը նստէր՝ նիրհելով , երբորդ յարկէն ինկաւ և մեռաւ : Բայց Պօղոս «Մի խռովիք» , ըսելով իջաւ , և պատանին ողջ վեր բերաւ :

Հ. Պօղոս Տրովայէ ուր գնաց , և ինչ պատահեցաւ անոր :

Պ. Պօղոս Տրովայէ ելլելով , ըստ սովորութեան իւրում շատ քաղաքներու այցելութիւն ընելէն ետքը , դարձեալ Երուսաղէմ եկաւ , և երբ տաճարը գնաց աղօթելու , Հրեայք զրգռեցան , և ըսելով թէ Տաճարը հեթանոսներ բերելով պղծեց , պիտի սպաննէին զՊօղոս , և հազարապետը վրայ հասնելով հազիւ ազատեց ըզ Պօղոս անոնց ձեռքէն :

Հ. Հազարապետն ինչ բրաւ զՊօղոս :

Պ. Հազարապետն ուզեց անոր դատը տես-



նել Հրէից տառնին առջեւ, բայց խմանալով որ  
Հրէայք դարան գործած էին սպաննել զՊօղոս  
երբ դուրս ելէր, գիշերով զրկեց զնա կեսա-  
րիա առ փելքս կուսակալ Հռոմայեցի, և Պօ-  
ղոսի հակառակորդներուն պատուիրեց կեսարիա  
երթալ և հոն կուսակալին առջեւ գատուիլ:

Հ. Պօղոսի դատաւորանքն ինչ վախճանունեցաւ:

Պ. Նախ փելքս կուսակալ, և ապա անոր  
յաջորդը փեսոս մտիկ ընելով Պօղոսի հակա-  
ռակորդներուն ամբաստանութիւնը, յանցաւոր  
չգտան զՊօղոս: Վերջին անգամն ներկայ էր  
նոսել Հրէաստանի թագաւորն Սգրիպպոս և  
Բերենիկէ թագուհին: Ասոնք եւս անմեղ գտան  
զՊօղոս, ուստի կուսակալն ուղեց արձակել զՊօ-  
ղոս, բայց որովհետեւ Պօղոս կայսեր բողոքած  
էր, զրկուեցաւ Հռովմ:

Հ. Պօղոս ինչպէս հասաւ Հռովմ, և ինչ եղաւ:

Պ. Պօղոս առաքեալ մեծ նեղութեամբ, ան-  
գամ մը նաեւ սաստիկ ալեկոծութեան պատա-  
հելով, վերջապէս հասաւ Հռովմ, և հոն իբր  
երկու տարի բարոյեց: Բայց թէ վերջապէս ինչ  
եղաւ՝ չի պատմուիր Նորկտակարանին մէջ, վասն  
զի առաքելոց պատմութեան գիրքը որ «Գործք  
առաքելոց» կը կոչուի, մինչեւ հոս հասնելով կը  
լուէ: Ուրիշ աւանդութիւններէ գիտենք որ ոչ  
միայն Պօղոս, այլ եւ Պետրոս և միւս առաք-  
եալք աշխարհիս այլեւայլ կողմերը երթալով  
բարոյեցին Աւետարանը, և գրեթէ բոլորը  
սպանուեցան հաւտոյ համար: Պօղոս և Պե-  
տրոս առաքելոց համար կըսուի թէ Հռովմ՝ նա-

համակեցան հրամանաւ Ներոն կայսեր, Պօղոս՝  
դիւստուելով, և Պետրոս՝ գլխիվայր խաչուելով:  
Թագէս առաքելոյն համար կը պատմուի թէ  
եղևոսիս գալով Արգար թագաւորին քարոզէին  
եսքը, զնայ Հայաստան, և հոն Հայոց Սանատ-  
րուկ արքային հրամանաւ սպանուեցաւ Սանդրի-  
այ կուսին հետ որ հոյն Սանատրիկոյ դուստրն  
էր, և Քրիստոնեայ կզած էր Թագէի քարոզու-  
թեամբ: Բայց այս պատմութիւնները՝ որ Նոր  
կտակարանին մէջ յիշուած չեն՝ Սուրբ Գրոց  
պատմութեան չեն վերաբերիր, այս և ասոնց  
նման դէպքերս վրայ ընդարձակ կը խօսուի  
Եկեղեցական պատմութեան կամ վկայաբանու-  
թեանց, այսինքն մարտիրոսայ պատմութեան  
մէջ և ի վարս որոց:

ՎԵՐՉ





Մ Ա Ս Ն Ա.

|                                      |         |
|--------------------------------------|---------|
| ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ . . . . . | Էջ<br>6 |
|--------------------------------------|---------|

Ա. ԺԱՄԱՆԱԿ

|                                                   |    |
|---------------------------------------------------|----|
| Ի ստեղծմանն աշխարհի միջև ջրհեղեղ . . . . .        | 7  |
| 1. Աշխարհի ստեղծումը 4004 թվական քան զԲր. . . . . | 7  |
| 2. Մարդուն անկումը . . . . .                      | 9  |
| 3. Եղբայրասպանութիւն 3875 թվական քան զԲր. . . . . | 11 |
| 4. Մարդոց ապականութիւնը . . . . .                 | 12 |

Բ. ԺԱՄԱՆԱԿ

|                                                                            |    |
|----------------------------------------------------------------------------|----|
| Ի ջրհեղեղի միջև Արարեալ . . . . .                                          | 13 |
| 1. Ձրհեղեղ 2348 թվական քան զԲր. . . . .                                    | 13 |
| 2. Աշտարակաշինութիւն կամ լեզուաց խառնակութիւն 2247 թվական քան զԲր. . . . . | 16 |

Գ. ԺԱՄԱՆԱԿ

|                                                      |    |
|------------------------------------------------------|----|
| ԲԱՐՔԱՆԱԿ միջև Խորաշխարհից ելլել յԵրուսաղէմ . . . . . | 18 |
| 1. Սրբազան Գրքան Երթալը . . . . .                    | 18 |
| 2. Իսահակայ ամուսնութիւնը . . . . .                  | 22 |
| 3. Յակոբայ Միջագետք Երթալ և ամուսնանալը . . . . .    | 23 |
| 4. Յովսէփայ վաճառումը . . . . .                      | 26 |
| 5. Խորաշխարհից պանդխտութիւնն յԵրուսաղէմ . . . . .    | 29 |
| 6. Մովսէսի կոչումը . . . . .                         | 32 |

Դ. ԺԱՄԱՆԱԿ

|                                                                   |    |
|-------------------------------------------------------------------|----|
| ՅԵՐԵՄԻԱ յԵրուսաղէմ միջև և սկիզբն թագաւորութեան<br>Հրեից . . . . . | 33 |
| 1. Կարմիր ծովէն անցքը . . . . .                                   | 33 |



|                                                |    |
|------------------------------------------------|----|
| 2. Անապատին մէջ ճամբորդութիւնը . . . . .       | 34 |
| 3. Յորդանանէ անցքը և Յետուսյ գործերը . . . . . | 46 |
| 4. Պատաւորաց գործերը . . . . .                 | 48 |
| Հումթ . . . . .                                | 55 |

Ե. ԺԱՄԱՆԱԿ

|                                                                           |    |
|---------------------------------------------------------------------------|----|
| Խորացնացոց թագաւորութեան սիրգրէն մինչև Բա-<br>բելոնի գերութիւնը . . . . . | 57 |
| Իսրայէլի թագաւորութիւնը 972-720 Ն. ք. զԲր. 64                             |    |
| Տամն ցեղերուն գերութիւնը 771-740-721 . . . . .                            | 67 |
| Յուդայի թագաւորութիւնը 975-588 . . . . .                                  | 68 |
| Մարգարէք . . . . .                                                        | 73 |

Զ. ԺԱՄԱՆԱԿ

|                                                      |    |
|------------------------------------------------------|----|
| Բաբելոնի գերութենէն մինչև Քրիստոսի զարոտար . . . . . | 76 |
| ՅԱԽԵԼՈՒԱՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ . . . . .         | 82 |

ՄԱՍՆ Բ.

|                                     |    |
|-------------------------------------|----|
| ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ . . . . . | 87 |
|-------------------------------------|----|

Ա. ԺԱՄԱՆԱԿ

|                                                                                  |    |
|----------------------------------------------------------------------------------|----|
| Ի ծննդենն Քրիստոսի մինչև տնոր քարոզութեան<br>սիրգրը, 1-30 յետ Քրիստոսի . . . . . | 87 |
|----------------------------------------------------------------------------------|----|

Բ. ԺԱՄԱՆԱԿ

|                                                        |    |
|--------------------------------------------------------|----|
| Քրիստոսի քարոզութենէն մինչև տնոր համբարձումը . . . . . |    |
| 30-33 յետ Քրիստոսի . . . . .                           | 92 |

Գ. ԺԱՄԱՆԱԿ

|                                                                                        |     |
|----------------------------------------------------------------------------------------|-----|
| Քրիստոսի համբարձմենն մինչև տնորեւոյ ժամանա-<br>կին վերջը, 33-36 յետ Քրիստոսի . . . . . | 134 |
|----------------------------------------------------------------------------------------|-----|

Վ. Բ Ի Պ Ա. Կ

|     |     |           |                    |
|-----|-----|-----------|--------------------|
| Եջ  | Տող | Ուղիս     | Սխալ               |
| 111 | 11  | Ժողը եղան | ընթերցիչ նաւը եղան |

دائرة مقید

کتابخانه مقید



32

250



0026344

281

2013

«Ազգային գրադարան»



NL0026377



